



# ԱՆԱԿԻՏ

## ՀԱՆՐԻՍ ԱՄՍԵԱՅ


ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

Ս. ՏԱՐԻ \* ԳԵԿՏԵՄԲԵՐ 1898 \* ԹԻԻ 2

ԲԱՐԻԶ

« Խօսք » եւ « լոյս » երկու համանման բառեր են նախնական սրբազան լիգուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն այ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յաւիտեական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Ե՞մէ հոգին չճարգմանէր, չլուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ, այդ չհասկցուած մտքին բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

Ժ. ՄԻՇԼԷ



# ԱՆԱԿԻՏ


ՀԱՆԴԵՍ ԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 1898

ԹԻԻ 2



*Խոսրոս Ալիբեկյան*

ԽԱՍԹԱՏՈՒՐ ԱՌՈՎԵԱՆ

Ա.

Ազգերը հաւաքական էակներ են. իրենց ընդարձակ ու կնճռոտ կեանքը ունին . կը ծնին , կ'աճին , կը կուտին , կ'երազեն , կը գինովեան , կը թմրին , ու յանկարծ նորէն կ'արթնան , կը մեռնին իսկ ու վերադառնալ կը ծնին : Այդ խորին ու բազմազիւ կեանքը ուսումնասիրելու համար, պէտք է ամենէն աւելի նայուածքը սուսուսել այն էական բնութիւններուն վրայ որոնք ազգերուն յինուածքին գերագոյն ջիղը կը կազմեն , անոր ուղեղը , — այսինքն մտքի մարդերուն : Անոնց կենդանութեան կամ ընդարմացման համամատ՝ ազգը կը կայտանայ կամ կը լիսի . անոնք կը կատարեն յարութիւններուն խորհրդաւոր գործը , անոնք կուտան ազգին իր կենսականութեան գիտակցութիւնը , եւ երբ անոնք լռեն , ազգը կը չքանայ :

Ազգին բոլոր անգիտակից սկզբնական խլրտուածք գէպ ի կեանք , հողը պաշտպանող զիւցազնին ճիգերը , արուեստը ուրուագծող, օրէնքը հիմնարկող, ճարտարագործութիւնը սկսող մարդերուն փորձերը՝ այն ատեն իրականութիւն կը ստանան եւ ճշմարիտ ամբողջութիւն մը կը կազմեն երբ կը բարձրանայ ձայնը որ ազգին հոգին կ'երգէ եւ կրկնուի՝ անոր ձեւ մը, մարմին մը, վերջնական կերպարանք մը կուտայ : Հատին աշխարհին քայքայումէն յետոյ, երկայն ու տաժանելի վերակենդանացում մը սկսաւ . այն մեծ էակը որ հոռուէական պետութիւնը եղած էր՝ կը բաժնուէր, մէկ քանի նոր անհատականութիւններու ծնունդ կուտար, որոնք Ֆրանսան, Սպանիան եւ Իտալիան եղան : Այդ նորածին ազգերը այն օրն իրենց գոյութեան զգացումն ունեցան երբ Շանտոն սը Ռոյսը Ֆրանսացի քաջերուն ներքողը հնչեցուց, երբ Սպանիացի երգիչներուն Ռոնանսետոն կաստիլեան արութիւնը պանծացուց, երբ մանաւանդ Տանդէ մը եւ Բեզարքա մը, անկերպարան թոթովումներէն հանելով , մէկ հարուածով կատարելութեան հասուցին լեզուն , արուեստը , հայրենիքի գաղափարը , Իտալիան ամբողջ : Հակառակ ամենամեծ ջախջախումներու եւ կազմալուծմանց, պէտք չէ յուսահատիլ ազգի մը գոյութենէն , երբ ազէտքէն յետոյ , տաք մոխիրներուն մէջէն՝ անցնելը կը տեսնուի աշուղին , իր քնարին հետ , որ հին քաջութիւնները կը յամառի մրմնջել :

Մեր մէջ , Արովեան ամենէն կարեւոր հիմնադիրներէն մէկը եղաւ նոր Հայութեան, Մխիթար արքային հետ : Տօնելով Արովեանի մահուան յիսնամեակը, հայ ժողովուրդը իր բարոյական զարթումն մէկ մեծ թուականը տօնած կ'ըլլայ :

Մխիթար առաջին քարը դրաւ , եւրոպական հողի վրայ հաստատելով բազմարդիւն միաբանութիւնը, որ ստրկութեան մէջ թուլցած ժողովուրդ մը սթափեցուց , գեղեցիկ եւ ազատ անցեալը վերակենդանացուց, գրականութիւնը վերսկսաւ , եւրոպան ճանչցուց Հայուն ու Հայը եւրոպային : Մխիթարեանց գործը աւելի արեւմտեան Հայոց մէջ տարածուեցաւ , թէեւ արեւելեան Հայոց ալ առաջին շարժումը այդ կեդրոնական մղումէն կը բխի . Ռուսահայոց առաջին գրողները , ուսուցիչները , անոնք որ դրաքար մատենագրութիւն մը վերսկսան էջմիածնայ շուրջն ու մինչեւ Պարսկաստան ու Հընդկաստան , Վենետիկի մեծ վառարանէն կը ստանային իրենց կրակը : Նոյն իսկ ինքն Արովեան, ինչպէս կը գրէ իր նամակներէն մէկուն մէջ, Մխիթարայ կենսագրութիւնը կարգաւորվ է որ հրայրքն ունեցած է մարդ մը, գործիչ մը ըլլալու . մինչեւ անգամ փափաքած է Վենետիկ երթալ եւ միաբանութեան մէջ մտնել . որոշած էր Տաճկանումէն Երեւան եկած քահանայի մը հետ Պոլիս մեկնիլ եւ անկից Վենետիկ . չնչին զիպուած մը զինքը արգիլեց , դերձակը հագուստները ժամանակին չհասցուց : Այդ զիպուածին կրպարտինք Արովեանը Վենետիկ վանքը մեծ միաբան մը պակաս ունեցաւ . բայց հայութիւնը վաստակեցաւ նոր գեղեցկութիւն մը , ուստի հայ գրականութեան հիմնադիրը : Եւ ազէկ եղաւ : Արովեան լրացուց ինչ որ Մխիթար պակաս թողուցած էր : Մխիթար եւ Մխիթարեանք գրաբարը զարգացուցած էին , հին պատմութիւնը ուսումնասիրած էին , եւրոպայի դասական գրականութիւնը ազգին ծանօթացուցած էին , եւ ակադեմական ոճով հայ գրականութիւն մը սկսած էին , ոգևով ու ձեռով աւելի եւրոպական քան զուտ բնիկ հայկական , ինչ որ արեւմտեան Հայք , Պոլիս ու Իզմիր մանաւանդ, շարունակեցին յետոյ : Արովեան ժողովրդին ձայնը եղաւ . ուզեց լոյսը տանիլ խոնարհ խաւերուն մէջ , որոնք զեռ հեռու մնացած էին դասական գրականութենէն՝ սակաւաթիւ զարգացեալ դասակարգի մը միայն մատչելի : Արովեան ժողովրդին , ամբողջ ժողովրդին , խօսեցաւ , ժողովրդին լեզուովը , ժողովրդին վրայ :

ինքը նոր հայերէնին կեանքը հաստատեց (1), եւ առջի փորձէն իսկ յաղթանակը տարաւ , որովհետեւ իր գործը կատարեց գրական հրաշակերտով մը , մինչդեռ Թրքահայոց մէջ յաղթանակը ուշացաւ , որովհետեւ առաջ վիճաբանութիւններն սկսան եւ ճշմարիտ աշխարհաբար կենդանի գրականութիւնը ետքը եկաւ : Ասոր համար է որ Արովեան արժանի է ոչ միայն մեր երախտագիտութեանը՝ այդ գժուարին՝ գործը առաջին անգամ կատարած ըլլալուն (1), այլ մեր հիացմանը միանգամայն , որովհետեւ զայն կատարեց շատ հանճարով եւ շատ սրտով :

Արովեանի գործը անոնցմէ է զոր անկարելի է ամբողջապէս եւ իրապէս հասկնալ առանց արտադրողին կեանքը մօտէն ճանչնալու : Գործը բացատրելու համար անհրաժեշտ պայման մըն է մանրամասնաբար ուսումնասիրել կեանքը որ անոր ծնունդ տուաւ , եւ որ ինքն իսկ արդէն ապրուած քերթուած մըն է :

Ա. — ԿԵԱՆՔԸ

Արովեան ծնած է 1804ին , Երեւանի նահանգին Քանաքեռ գիւղը , այն շրջանին՝ երբ արդի ուսական Հայաստանը պարսկական լուծին տակ էր : Զաւակն էր նահապետական մեծ տան մը , ուր հայ ընտանիքը տոհմական հինաւուրց աւանդութիւնները պահպանած էր : Բացարձակապէս հայ մթնոլորտի մը մէջ է որ կը կազմուի Արովեանի զգայնութեան առաջին խաւը : Բայց անսիջապէս շուրջը այդ աւանդութեան , գորովի , հաւատքի մթնոլորտին , դուրսը , ամբողջ հայ երկրին մէջ , պարսկին բարբարոս թաթը կը ծանրանայ : Քմահած ու վայրագ սեռահարներու ձեռքը խաղալիք դարձած , հայ ժողովուրդը , արհամարհուած , նախատուած , կեղեքուած՝ տիրող ցեղէն , քուրջի պէս կը կոխտուի ու կը բզբտուի : Արովեանի մանկութիւնը քստմնելի յիշատակներով սարսռացած է : Իր

(1) Այս գործը կը վերագրեմ Արովեանին , գիտնալով հանդերձ թէ Ա. Նազարեան եւ Մ. Նալբանդեանց ո՛րքան կարեւոր մաս մը ունեցած են անոր մէջ . նոյն իսկ՝ այդ երկու գրագէտներն են որ ուսասիայ Տշմարտ աշխարհաբարը կազմակերպած են , քանի որ Արովեան ուսուցիչն ու աղաւաղ հայերէն մը գործածած է . բայց առաջին քարը Արովեանն է դրած , ամենէն իարժը ու կենսական ճիգը ան է կատարած , եւ վերջնականապէս յաջողած : Միւսներուն ըրածը լրացուցիչ աշխատութիւն մը եղաւ :

ծայրայեղօրէն զգայուն խառնուածքը , այդ կրկին տպաւորութեամբ տողորուած , կանուխէն ամբարեց այդ մեծ գորովն ու այդ մեծ ատելութիւնը , որոնց երգիչը պիտի ըլլար :

Արովեան կը բազմար եկեղեցական ասպարէզին նուիրել ինքզինքը , Մխիթարին պէս որ իր խոչալն էր , կամ Ներսէս Աշտարակեցիին պէս որուն ժամանակակիցն ու հիացողն էր : Հինգ վեց տարի էջմիածին , վանքը , ուսում առաւ : Յետոյ Թիֆլիս եկաւ ուր Ներսէս այդ միջոցին հիմնած էր Ներսիսեան դպրանոցը , որ Ռուսահայոց բարոյական դարգացման մէջ այնքան կարեւոր դեր մը խաղացած է : Քանի մը տարի մնաց հոն : Այդ միջոցին (1826) պարսկառուսական պատերազմը կը սկսէր . Պարսիկները զարհուրելի կոտորածներ կ'ընէին հայ գիւղերուն մէջ . լեռներն ապաստանած՝ հայ քաջեր կը կռուէին . հայ զօրապետներով առաջնորդուած , ուսական բանակը կը ջախջախէր Պարսից զօրութիւնը եւ Երեւանայ նահանգը կը գրաւէր :

Արովեան այդ օրերուն իր ծննդավայրը գնաց վայրկեան մը , եւ ականատես եղաւ անեղ տեսարաններուն , զորոնք յետոյ պիտի նկարագրէր : Թիֆլիս զառնալուն , տեսաւ այնտեղ յաղթական մուտքը Աղասիին , այն արի գիւղացիին որ երկար ատեն լեռնէ լեռ թափառելով սարսափ ձգած էր Պարսիկներուն մէջ , եւ զոր իր վէպին զիւցազնը պիտի ընէր . Աղասի անձամբ պատմած էր անոր իր կեանքն ու արկածները , եւ ցոյց տուած էր իր ոսկորները որոնք կոխնեբու մէջ կոտորած էին եւ զոր ծրարով կը պահէր :

Արովեան բարձրագոյն կրթութիւն մը առնելու կը մտածէր միշտ . միջոցները գտնել կ'ուզէր հզօր ու բարձրօրէն գիտակից գործիք մը դառնալու , որպէս զի կարենար սկսիլ բարոյական ընդարձակ ու ամուր գործունէութիւն մը : Պատերազմը աւարտած էր : Հայրենիքը խաղաղած էր ուսական զօրութեան տիրապետմամբ : Բարեպատեհ հանդիպում մը իր երազին իրագործումն ապահովեց : Գերմանացի դասախօս մը , Բարրոյ , Տորբազի մեծ համալսարանէն , Կովկաս եկաւ , Արարատ լեռան կատարը վերելք մը փորձելու մտքով : Ուղեցոյց մը կը վնասէր . Արովեան ներկայացաւ . մէկտեղ գացին Հայաստան ճամբորդել եւ Արարատի վերելքն ըրին . Արովեան հիացուց Բարրոյը հայրենի հողին իր ունեցած մանրակրկիտ հմտութեամբ , եւ անոր ներշնչեց ամենախորին համակրութիւն մը : Դարձին Թիֆլիս , յայտնեց անոր

իր փափաքը : Բարրոզ յանձն առաւ Աբովեանին ծրագիրը յաջողցնել . Ա. Բեգերսպուրկ երթալուն, հասարակաց կրթութեան նախարար Լէվինին դիմեց, եւ քանի մը տարուան ամսաթոշակ կապել տալու խոստումը ընդունեցաւ : Եւ Աբովեան մեկնեցաւ Տորբազ (1830), անսահման ուրախութեամբ ու խանդավառութեամբ :

Հինգ տարի անցուցած է հոն, եւ այդ գերմանական միջավայրին մէջ, ասիացի կրակոտ շինականին կեանքը տեսակ մը սրտաշարժ վիպասանութիւն է : Բարրոզ որդեգրած էր Աբովեանը, իր տունը կը դահէր զայն, եւ ամբողջ ընտանիքը կը գուրգուրար անոր վրան . համարարանին բոլոր ուսուցիչները խանդաղատանքով կը պաշարէին զինքը . հետաքրքրական առարկայ մըն էր այդ արեւելցին, իր հրապուրիչ, կրակոտ դէմքովը, իր հրդեհ հոգիովը, իր կէս վայրենի ու ջղուտ բնաւորութեամբը : Այդ անհատին մէջէն Գերմանացիները ամբողջ ազգ մը կը տեսնէին . Աբովեան անտաշ բայց չափազանց ուշիմ եւ խանդոտ էր . արագաբար սորվեցաւ գերմաներէն եւ գերմանացեոց պէս խօսիլ սկսաւ քիչ ատենէն . ամէն բան լաւ կ'ըմբռնէր, եւ վերին աստիճանի հզօր զգայնութիւն մը կը ցուցնէր, անհուն եռանդ մը՝ զարգանալու, պատրաստուելու՝ ապագայ գործին համար : Գերմանացիները Աբովեանին վրայէն հայութիւնը սիրեցին . կ'ըմբռնէին որ Ասիոյ մէջ խրած այդ տարրը եւրոպական տարր մըն է, քաղաքակրթութեան կարող : Եւ Աբովեանին կրթութիւնը խնամած ատեննին, ամբողջ ազգ մը ձեռուընտն մէջ կաղապարել կը զգային : Եւ հայ ցեղին համար իրական հիացումով համակուած, ամէն ջանք կ'ընէին որ Աբովեան հայ մնար, կը պնդէին որ երբեք չլքանէր իր ազգային եկեղեցին ու լեզուն, իրեն միմիակ նպատակ ընէր զանոնք աւելի պայծառացնել : Անոր ամէն բան սորվեցուցին, կերակուր ուտելու, շարժելու, վարուելու արտաքին մանրամասնութիւններէն սկսեալ մինչեւ ուսումը ընդհանուր պատմութեան, եւրոպական գրականութեան, արուեստի եւ գիտութեան : Նոյն իսկ, յուզիչ մանրամասնութիւն, թոյլ տուին որ Աբովեան մտերմանայ ընտանիքին երիտասարդ աղջիկներուն հետ, որոնցմէ մէկուն արդէն յիմարաբար սիրահարուեցաւ մեր տաքարիւն Հայը, քաջալերեցին անոր տարփանքը, որպէս զի կնոջ ազդեցութիւնը մեղմացնէ անոր բարքերը, անոր նրբութիւնը բերէ, անոր արեւելցիի կոշտութիւնը ողորկէ . « Զի առաւել մերձաւոր գոլով

քաղցր օրիորդին, կը գրէ նամակի մը մէջ, մեղմասցին բիրտ բարք իմ, եւ յիրաւի այս միայն է միջոց, զի թէ ոք կամի մեղմացուցանել զբարս, որքան մերձենայ նա ծանօթութեամբ եւ բարեկամութեամբ ընդ կանացի սեռից, այնքան կրթին, պատուականանան բարք նորա : » Հակառակ այս ամբողջ գորովալից միջավայրին, Աբովեան կարօտով կը հալէր իր հայրենիքը, իր տունը, իր ազգը յիշելով . բազմաթիւ նամակներու մէջ, զոր գրաբար կը գրէր, օր առ օր իր յուզումները, խանդերը, տխրութիւնները, հաւատքներն ու վհատութիւններն արձանագրած է : Եւ ահա օր մը Պարսկաստանցի հայ մը պատահամբ Տորբազ կ'իյնայ . Գերմանացիները կ'անեն զայն իսկոյն եւ տուն կը բերեն, Աբովեանին անակնկալ մը ընելու համար . եւ իրօք յանկարծ արենակից մը տեսնելով՝ հայ տարազով, հայ զիմազձութեամբ, Աբովեան ուրախութենէն խելայեղ կ'ըլլայ, մարելիք կուգայ վրան, անոր վիզը կը նետուի, ու կը սկսի լալ . « Հուր ջեռու ի փորի իմում, կը գրէ, լսելիք իմ չհաւատացին այսմ, ո՞վ այս նորաստեղծ արարած, ո՞վ բերէ զհրեշտակս զայս յերկնից աստ . . . »

Հոն, գերմանական միջավայրին մէջ է որ Աբովեան կը սկսի աշխարհաբարով գրելու կարեւորութիւնը զգալ : Դասախօսներէն մէկը, վալթէր, կը բացատրէ իրեն թէ ինչու Աստուածաշունչը պէտք է աշխարհաբար թարգմանուած տարածել ժողովրդին մէջ, եւ Աբովեան այդ օրէն կը զգայ կատարուելիք գործը :

Տորբազ անցուցած չորրորդ տարին, Աբովեան հոն կը հանդիպի Ժուքովսքիին, այն ռուս գրագէտին որ ռուսական նոր գրականութեան, բուն ժողովրդական, ազգային, կենդանի ռուս գրականութեան կարապետներէն մէկը եղաւ : Ժուքովսքիի տեսակցութիւնը՝ Աբովեանի հետ՝ խորին տպաւորութիւն կը թողու մեր բանաստեղծին վրայ : Այդ վայրկեանէն կ'ընդնշմարէ հայ ժողովրդական գրականութիւնը սկսելու գաղափարը :

Աբովեան կը սորվի Ֆրանսերէն, ռուսերէն, գերմաներէն, կը փորձէ թարգմանութիւններ ընել Շիլլերէն, Կէօթէն, կը պաշտէ Բեդրարքան, կը հետեւի երաժշտութեան, կը սորվի նոյն իսկ արհեստներ, կերակուր եփելու, հաց պատրաստելու եղանակը, ամէն բան : Կ'ուզէ ամբողջապէս պատրաստուած մարդ մը ըլլալ, ամէն կերպով պատրաստելու համար իր ազգը : Եւ այսպէս հինգ տարիներ կ'անցնին Տորբա-

զի մէջ , աշխատութեան , յուզման , երազանքի , խանդի տարիներ . Աբովեան հիացումով ու գործով կ'ընդունի իր գերմանացի ուսուցիչներուն , բարեկամներուն ձեռքէն՝ քաղաքակրթութեան սնունդը . իր երազն է զայն փոխադրել իր ազգին . « Այսպէս քաղցր են գերմանացիք , կը գրէ իր յիշատակարանին մէջ , ո՛հ , երանի թէ եւ այսպէս քաղցրացին ազգք մեր , եւ ես ոչ մեռայց , մինչեւ տեսից զայս . . . » Տխուր չէ՞ մտածել այսօր թէ դարուս սկիզբին այդ վսեմ Գերմանիան՝ որ այսքան ազնիւ խանդադատանքով հայ ցեղին զարգացումը պատրաստեց , հիմա , այլափոխուած , հրէշային խանութպանութեան եսական հոգի մը զգեցած , թողուց՝ անտարբեր՝ հազարներով Հայերու կոտորուիլը , եւ հիմա կը դրկէ իր Քայլերը , աւերակներուն մէջէն , Քրիստոսի գերեզմանին ուխտի՝ երթալու :

Հայրենիք դառնալով (1836) , Աբովեան իսկոյն կը դիմէ Էջմիածին . որոշած է կրօնաւոր ըլլալ , եւ այդ ճամբով , զոր լաւագոյնը կը նկատէ , ուսում ու քաղաքակրթութիւն ստարածել ազգին մէջ : Կ'ուզէ նա , եւրոպական ոգւով դպրոց մը հաստատել Էջմիածնայ վանքին մէջ , ուր լուսաւորեալ եկեղեցականներ՝ եւ ուսուցիչներ պատրաստուին :

Առաջին քայլին իսկ , խեղճ սղան կը բազմի զգուելի նախապաշարուիներուն , աւանդական արգելքներուն , իր սփոթութեանը մէջ ամբացած ժողովրդի մը ամբողջ յամառ չար կամեցողութեանը : Աբովեանի բերած նոր ուժին զէմ կը դաւակցին բոլոր հնամուլ , բորբոս , խաւարչտին մտքերը . Կաթողիկոսն ալ կ'անսայ զրպարտութիւններուն . եւ Աբովեան մերժում կը գտնէ , որովհետեւ զինքը կը համարին ապականուած , օտարացած հայ մը , գերմանացած , բողոքական դարձած հայ մը :

Սիրոր ճմլուած , Թիֆլիս կը դառնայ :

Հոն , կը հանդպի նոյն ասեղութեանց , նոյն հալածանքներուն . իր սուր ու ցաւազին զբայնութիւնը , հայրենի բարքերուն հետ այս առաջին ու բերա բազմութեան՝ վտանգաւոր զբոսութեան մը կը հասնի եւ մահացու տխրութեան մը մէջ կը ձգէ զինքը : Կը յիշէ Պարսից թրէն զեռ երէկ իր ցեղին քաշած չարչարանքները , եւ աղիքները կը գալարուին . կը տեսնէ թէ Ռուսին զօրութեամբը փրկուելով , ազգը հիմա ո՛րքան լայն ասպարէզ ունի զարգանալու , եւ անոր ցուցուցած զանգազութիւնը , թանձրու-

թիւնը , խաւարամոլութիւնը զինքը կը խոցոտէ : Ինքզինքը միս մինակ կը զգայ զարհուրելի զոճուարութեանց հանդէպ : Բայց չի յուսահատիր : Թիֆլիս , կը ձգնի պաշտօն մը գտնել . ազգային վարժարանին մէջ իրեն գործ տալ չեն ուզեր , միշտ նոյն տխմար առարկութեամբ : Յաւով կը ստիպուի ընդունուիլ կառավարական դպրոցին , նահանգային վարժարանի մը մէջ , ուսուցչի պաշտօն , զոր կառավարութիւնը սիրով կը յանձնէ իրեն իբրեւ կարող անձի մը : Կառավարութիւնը նոյն իսկ կը միջամտէ Կաթողիկոսին մօտ եւ կ'առաջարկէ որ եկեղեցական ձեռնադրուի այդ հմուտ , եւրոպացած հայը . առաջարկութիւնը չ'ընդունուիր :

Բայց չբաւականանալով կառավարական դպրոցին մէջ տեսչի եւ ուսուցչի պաշտօնով , Աբովեան կ'ուզէ անպատճառ ուղղակի շփում ունենալ իր ազգին հետ , հայ , զուտ հայ գործունէութիւն մը սկսիլ . Թիֆլիսի մէջ մասնաւոր բանսիռն մը կը բանայ , եւ կ'ընդունի բազմաթիւ հայ տղաքներ . իր բոլոր աշակերտները , որոնցմէ շատերը կարեւոր մարդիկ եղած են յետոյ , սքանչացմամբ կը պատմեն անոր եղբայրական , գորովալից , խանդավառ ուսուցչութիւնը . Աբովեան հոգին պատրաստած է իր տղոցը , իր անձը անոնց հաղորդած է : Օտարներ , ինչպէս Վախէր ճամբորդը , կամ Պոտէնչ-զէտ , զմայլած կը վկայեն այն յառաջդիմութիւնը զոր տեսած են այդ տղոց վրայ , այն զիւրութիւնը որով անոնք կը խօսէին ու կը գրէին ֆրանսերէն , գերմաներէն , ռուսերէն , թաթարերէն , վրացերէն եւ հայերէն . նորագոյն մասնկալարժական մէթոտները ի գործ կը դնէր . անոնց մարմինը , միտքը եւ հոգին միանալամայն կրթել կը ջանար :

Աբովեան , ուսուցչի գործունէութեան հետ , հայ երկիրը եւ հայ ցեղը Եւրոպացուց ճանչցնելու գործն ալ շարունակեց կատարել : Վախէր , Հասդկհաուզէն ճամբորդները առաջնորդեց Հայաստանի մէջէն , զէպի Արարատ . եւ Պոտէնչ-զէտ գերման քնքուչ բանաստեղծին , որ Կովկաս եկած էր՝ արեւելեան ժողովրդական երգեր հաւաքելու , տուաւ Երեւանի նահանգին հայկական , վրացիական , չէրքէսական երգերէն լաւագոյնները , որոնցմէ օգտուելով է որ Պոտէնչ-զէտ գրեց իր զմայլելի արեւելեան պալլատները :

1839ին , Թիֆլիսի գերմանական գաղթավայրին մէջ , Աբովեան ճանչցաւ գերմանացի աղջիկ մը , Էմիլիա Լոզէ , սիրեց զայն , եւ որոշեց ա-

մուսնանալ: Դժուարութիւնները, եւ կղերականներուն մէջ տեսած թոյլ ու յետադէմ ոգին զինքը պաղեցուցած էին եկեղեցական ասպարէզէն, եւ կ'ուզէր հիմա ազատ ապրիլ եւ իբր ազատ մարդ ծառայել ազգին: Գերմանուհին խորապէս սիրեց Աբովեանը, եւ կարգուեցան:

Աշխատութիւնները, ամուսնութենէն յետոյ, բազմապատկուեցան: Աբովեան կ'ուզէր ամէն բան փորձել, ամէն բան ձեռնարկել: Դպրոցական զրութեան մէջ, արդէն գրաբարին տիրապետութիւնը սկսած էր խախտել. իր տղոցը համար աշխարհարար քերականութիւն մը պատրաստեց. ընթերցման համար շարադրեց ուսմիկ լեզուով առակներ, զրոյցներ, հանելուկներ, աղօթքներ: Կը փափաքէր տպագրել այդ բոլորը, որպէս զի ժողովուրդն ալ կարդալու բան մը ունենայ, ընթերցման սէրը ստանայ, իր թմրութենէն ելլէ: Փափաքը չկրցաւ իրականանալ: Չքաջալերեցին իր ձեռնարկը: Ոչ ոք պէտք եղած չնչին գումարը տուաւ տպագրելու համար: Ընդհակառակն, գէշ աչքով կը տեսնէին այդ նորութեան փորձերը: Աշխարհաբար՝ այդ ատենի հայերուն համար՝ բողոքականի լեզու էր, հայերէն չէր:

Խորին թաղծութիւն մը կուգար կը ծանրանար Աբովեանին վրայ: Ինքզինքը միսթարելու համար, եւ իրականացնելու համար միանգամայն իր տենչանքներուն ամենէն սիրականը, կը քաշուէր պարապ ժամերուն, ու կը գրէր իր հրաշակերտը, Վերջ Հայաստանին, որով հիմը կը գնէր Ռուսահայոց, եւ թերեւս ամբողջ Հայոց, նոր գրականութեան: Իր դառնացած, գրգռուած, բռնկած հոգին կը հովահրուէր այդ մենութեան մէջ յղացուած էջերով, ուր Հայուն տառապանքը կը նկարագրուէր ամենէն կսկծալի շեշտովը որ լսուած ըլլայ, եւ ուր կ'երգուէին հայ քաջերուն սխրագործութիւններն ու ամբողջ ներբողը ցեղին:

Իր մէկ մեծ սփոփանքն ալ իր աշակերտներն էին, որոնք զինքը կը պաշտէին, հակառակ դուրսը տիրող հակակրօթիւններուն:

Հակակրօթիւնները սասակացան, թշնամիներու սոսնձգութիւնները, նախանձորգներու դաւերը զինքը զգուեցուցին: Տրտմութիւնը աճեցաւ իր հոգիին մէջ, զինքը խեղդելու չափ. « Էսպէս բաները մտածելով, կը գրէ Վերջ Հայաստանիին յառաջաբանին մէջ, օրս ու ումբս մաշվել էր: Շատ անգամ ուզում էի իմ գլուխս մահու տամ: Թող լսողը չհաւատայ, ամա էս ցաւն էնպէս էր սիրտս առել, որ շատ անգամ

գտվածի պէս ընկնում էի սար ու ձոր, ման գալիս՝ մտածում, էլ եղ լիքը սիրտս տուն գալիս»

Ստիպուեցաւ Թիֆլիսը թողուլ ու հեռանալ: Անգամ մըն ալ գնաց իր ծննդավայրը, Բանաքեռ, քիչ մը ատեն հոն անցուց, յետոյ եկաւ հաստատուեցաւ Երեւան քաղաքը ուր նահանգական դպրոցին տեսուչ կարգուեցաւ, — նորէն կատավարական վարժարանի մը մէջ գտնելով հիւրասիրութիւն, նորէն ամէն ազգէ ուսանողներ ունենալով զիմացը, — քանի որ հակառակ իր սրտին բաղձանքին, իր ազգը չէր տուած հարկաւոր շրջանակը այդ մեծ առաջնորդին՝ որպէս զի զուտ հայ գործունէութիւն մը ունենար:

Երեւանի նահանգային դպրոցին մէջ ալ, Աբովեան իր մանկավարժական սիրուն մէթոտովը, իր քաղցր, ազնիւ բնաւորութեամբը, իր հմտութեամբն ու հոգիներ վարելու կարողութեամբ՝ ջերմապէս սիրուեցաւ աշակերտներէն: Հոս կ'ուզեմ յիշել Պ. Տէր-Կարապետեանի հեղինակած Աբովեանի կենսագրութենէն մէկ քանի տողեր որոնք գողտրիկ մանրամասնութիւններով կը պատկերացնեն մեզի Աբովեանն իբրև ուսուցիչ:

« Հանդիսաւոր օրերին, տօներին, հաւաքում էր աշակերտներին դպրոց, բացատրում էր օրուայ նշանակութիւնը, ապա փող էր տալիս հասակաւորներից մի քանիսին որ գնան միւրգ առնեն, իսկ ինքը միւս աշակերտների հետ միասին դպրոցական ճանապարհորդութիւն էր կատարում դէպի մօտիկ այգիները կամ կարկաշահոս Չանգուի գեղեցիկ ափերը. . . Սյգիների մէջ փոքրիկ ծառեր տեսնելիս — բոյսեր նկատելիս, անմիջապէս դրանց մասին էր խօսում, գիւղատնտեսական զանազան հարցեր էր շօշափում եւ ապա պատուիրում էր որ իւրաքանչիւրը մի հատ հանէ, որպէս զի ուսումնարանի բակում՝ իրենց մարգերի մէջ տնկեն: Աշակերտները բաժանուած էին խմբերի, իւրաքանչիւր խումբ մի մարդ ունէր, որտեղ ծաղիկներ էին ցանում եւ ծառեր տնկում: Աբովեանը սովորեցնում էր պահելու եղանակը, խնամելու միջոցները, որքան ինք գիտէր եւ լսել էր ուսուցիչներից:

« Աւելի յարմարաւոր եւ գեղեցիկ օրերին տանում էր աշակերտներին Չանգուի մէջ լողանալու, նախօրօք տրուած պատուէրներով: Աշխատում էր որ սպարդացիների նման իւր բոլոր աշակերտները լողանալ սովորեն:

« Չմեռ ժամանակ, տօներին, նոյնպէս չէր

Թողնում որ աշակերտները պարապ անցկացնեն. հաւաքում էր դպրոց եւ կրկին միւրգ բերել տալով՝ ուրախացնում էր. ապա զանազան զուարճալի պատմութիւններ էր պատմում, խրատներ կը տար հեռու կենալ մոլութիւնից, շոպյութիւնից: Բոլորը յափշտակուած լսում էին նորան:»

Եւ կ'երեւակայէք այս ամենուն հրապոյրն ու ազդեցութիւնը՝ այնպիսի չըջանի մը ուր մեր ազգային վարժարաններուն մէջ Քարախան միահեծան կը թաղաւորէր:

Ամբողջ Երեւան քաղաքին մէջ, Աբովեան գտաւ ջերմ համակրութիւն եւ յարգանք: Ամէն խնջոյքներու զինքը կը հրաւիրէին իբր բանգէս եւ ազնիւ մարդ, եւ կը խնդրէին որ խօսի: Այդ միջոցին է որ գերմանացի նշանաւոր ճամբորդ Աբիխը եկաւ Երեւան եւ Հայաստան ճամբորդեց, Աբովեանի հետ, ինչպէս նաեւ Պոտէնշդէտը, զոր Աբովեան՝ իր հօրենական տունն ալ տարաւ, եւ որ ատով առիթ ունեցաւ մօտէն ճանչնալ հայ նահապետական տան պարզ ու մաքուր բարքերը, զոր նկարագրած է խորին զմայլումով:

Աբովեանը, այսպէս, միջազգային շրջանակներու, աշխարհաքաղաքացիական դպրոցներու մէջ գործելով, աւելի ընդարձակ դեր մը կատարած եղաւ. մանկավարժութեան առաջին մեծ վերանորոգիչը դարձաւ ամբողջ Կովկասի մէջ. իր ուսու, վրացի, չէրքէզ, թաթար ինչպէս հայ աշակերտները հաւասար պաշտումով կը սիրէին զինքը եւ կը յարգէին:

1844ին, Ներսէս Աշտարակեցի Կաթողիկոս կ'ընտրուի եւ Պետրապոլիսէն էջմիածին կ'երթայ: Աբովեան, որ սքանչացողն էր այդ մեծ հոգւոյ ու նկարագրի մարդուն, ուրախութեամբ լեցուեցաւ այդ լուրն առնելով՝ իր առաջին բաղձանքը նորէն արթնցաւ:

Ատենէ մը ի վեր պզտիկ կը գտնէր իր շրջանակը, կը նեղուէր, կ'ուզէր աւելի մեծ, աւելի վեհ գործունէութիւն մը ունենալ, իր անձը ամբողջ նուիրել ազգին. նորէն իր առջի ձգտումին կը դառնար. կ'ուզէր կրօնաւոր ըլլալ: Ներսէսի Կաթողիկոս ընտրուելովը, վարկեան մը կարծեց որ իր փափաքը ապահովապէս պիտի կատարուէր: Դիմեց անոր, եւ խնդրեց որ իրեն ներուի ամուսնիւր թողուլ, եւ եկեղեցւոյն ու ազգին նուիրուիլ: Ներսէս որ Աբովեանի ուսուցչական դերը կը ճանչնար եւ կը գնահատէր, չուզեց զանի հանել իր տեղէն, եւ մերժեց անոր առաջարկը: Ասոր վրայ, մեղամաղձու-

թիւնը, որ միշտ տիրող հանգամանքը եղած էր Աբովեանին, ծայրագոյն սաստկացման մը հասաւ: Դիւրագրգիւ, ջլխտաւոր, տիրամած մարդ մը եղաւ: Տարօրինակութիւններ սկսաւ ընել, երբեմն կ'երթար կ'առանձնանար երկայն ատեն, երբեմն յանկարծ լացը կը բռնէր, իրեններուն հետ եղած ատեն ժամերով լուռ կը մնար. դիչերները կը լուսցընէր. առտու մըն ալ զինքը անյայտացած գտան:

Կարծողներ եղան են թէ կառավարութիւնը, Աբովեանը վտանգաւոր գործիչ մը նկատելով, անհետացուցած էր զայն: Աբովեանի մահուան այդ բացատրութիւնը, որ տարածուած է մասնաւորապէս Թրքահայոց մէջ, անտարակոյս սխալ է. ուսու կառավարութիւնը այդ շրջանին՝ Հայերը սիրաշահելու ետեւէ էր, եւ երբեք մտքէն պիտի չանցնէր անյայտացնել մարդ մը՝ որուն ուղղակի համակրութիւն ցուցուցած է միշտ եւ որ արդէն անվնաս էր իրեն համար, որովհետեւ բարոյական վերանորոգիչ մըն էր միայն, եւ նոյն իսկ օգտակար, որովհետեւ խանդավառ ռուսամոլ էր, հաւատացող թէ Ռուսիոյ վահանին տակ Հայութիւնը պիտի կենդանանայ եւ բարգաւաճի: Վերջերս կարծիքներ ալ ելան թէ Աբովեան սպաննուած է Թուրքերէ, որովհետեւ Երեւանի Թուրքերէն մէկուն կողմը հետ յարաբերութիւն ունենալն իմացուած էր: Ասի ձրի ենթադրութիւն մըն է, շատ մը տարակուսական մանրամասնութեանց վրայ հաստատուած: Եւ կ'ուզէի որ այդ մեկնութիւնը վերջնապէս ջնջուէր, որովհետեւ Աբովեանի կեանքին ամբողջ հոյակապ միութիւն ունեցող գոյնը պիտի աւրուէր, պիտի գոեհկանար այդ անիմաստ վախճանով: Ամենէն հաւանականը այն է, — եւ իրեն ժամանակակից Ս. Նազարեանցն ալ այդ մեկնութեան կը յանգի, — որ Աբովեան, իր անյազ ու վիթխարի տենչանքներուն տակ ձգմուած, սպիտութեան ու նախապաշարման մէջ թաթխուած ամբողջ ազգ մը միմիակ բազուկով վերանորոգելու ճիգէն ջախջախուած, իր փորձերուն դէմ ելլող արգելքներէն վհատած, հայրենասիրական միստիքականութեան սազնապի մը մէջ՝ գացած վերջ տուած ըլլայ իր կեանքին, խորխորատի մը մէջ, կամ նոյն իսկ Զանգի գետին մէջ զոր անմահացուցած էր իր ամենէն կրակոտ էջերով:

Իր ամբողջ կեանքին ջղային ընթացքը, իր վերջին օրերուն մթին դիւրագրգռութիւնը եւ կասկածելի առանձնացումները, այդ բացատրութիւնը կը հաստատեն: Եւ այդ ցաւազին ու

վսեմ վախճանը ամենէն արամաբանական ու ներդաշնակ աւարտումը կ'ըլլայ այդ սեւեռուած գաղափարին հիւանդութեամբը շարունակաբար ցնցուած արտասովոր կեանքին :

Գ. — ԳՈՐԾԸ

Աբովեանի կեանքէն թերեւս կարելի ըլլայ ինքնին գուշակել անոր գրական գործը, նախատեսել այն ոգին որ զայն կը լեցնէ: Ինչ որ կարելի չէ գուշակել, այն շեշտը, այն գոյնը, այն ջերմութիւնն է զոր այդ հրաբուխ-մարդը դրած է իր էջերուն մէջ, եւ որ իրն է, իրը միայն :

Այդ գործը ընդարձակ է. կան այնտեղ գրաբար ոտանաւորներ ու ճառեր, զիւցագիտական բանաստեղծութիւններ, ռամկական լեզուով առակներ, վէպիկներ, նամակներ, երգեր, վէպեր, ցեղագրական աշխատութիւններ. բայց գործին սիրտը, իր մեծ վէպն է, Վերջ Հայաստանին: Թող ինծի չվերագրեն որ եւ է շովինութիւն՝ զոր անկարող եմ ունենալու, եթէ ըսեմ որ այդ վէպը, իր տեսակին մէջ, մեկ հասիկ է, ամէն ազգի, ամէն ժամանակի գրականութիւններուն մէջ: Ժողովրդական դիւցազներգութիւնն է ան, ուր ժողովրդին կեանքը կը բաբախէ ու կը տառապի ու կը հեւայ, զրացուած ու արտայայտուած այնպէս ինչպէս ժողովուրդը կը զգայ եւ ինչպէս ժողովուրդը կը խօսի, բայց արտայայտուած այնպիսի հոգիի մը մէջէն որ ինքը մինակը այնչափ հզոր ու ընդարձակ կը զգայ որչափ ամբողջ ժողովուրդ մը մէկէն :

Վէպը ծայրէ ծայր ամբոխ կը հոտի. անոր մեծ ալեկոծումներն ունի, անոր միջին վայրագութիւններն ու անոր վիթխարի խեղճութիւնը, անոր միամտութիւնը, թանձրութիւնն ու զեռումը, անոր վսեմութիւնն ու անոր գոհակութիւնն ալ, անոր մրրիկներն ու անոր շեղակուտուած դանդաղութիւնն ալ: Ամբոխն երգն է ան, եւ գիւղի ամբոխն, ու Արեւելքի գիւղին: Տարօրինապէս շահեկան երեւոյթ մըն է արդէն տեսնել ինչպէս, հինգ տարուան եւրոպական կեանքէ ու համալսարանական ուսումնասիրութիւններէ յետոյ, Աբովեան իր վէպին մէջ կը մնայ գեղջուկ մը, որուն արձակը ուրիշ բան չէ բայց եթէ կուտակումն ու խտացումը հայ հողին բոլոր աշուղի երգերուն, ու նոյն իսկ հողին բոլոր ազգազակներուն ու մրմունջներուն: Բայց ճիշդ անոր համար այդ գեղջուկը գրագէտ եւ մեծ գրագէտ է, որովհետեւ գիտցած է խրտացնել իր էջերուն մէջ, եւ հզոր համադրու-

թեամբ մը ներկայացնել, Գիւղը, ամբողջ գիւղը: Անկից ոչինչ պակսեցուցած է, ոչ իսկ հեռքերը դարաւոր ստրկութեան, արեւելեան ինքնամոռաց բացարձակ ստրկութեան, որոնք կը մնան իր արտայայտելու, նոյն իսկ զգալու եղանակին մէջ. « երեսս ոտքիդ քսեմ », « ոտքիդ փոշին դառնամ », « ղուրպան ըլլամ » բացատրութիւնները ամենէն սովորական ու սիրուած դարձուածքներէն են այդ ոճին: Սակայն ազատութեան ցանկութիւնը, քաջութեան տարփանքը յիմարական զօրութեամբ մը կը թօթվեն այդ ողբացող, ճիտը ծուռ, ճակատը հողին քսող բացատրութիւնները. եւ հետաքրքրականը այդ ազգոր հակասութիւնն է տեսակ մը մինչև վիզը ստրկացման մէջ թաթխուած հոգիի, որ վարակուած է, բայց չ'ընդունիր, եւ ազատութիւնը կը բաղձայ:

Աբովեանի ոճը բացարձակապէս անձնական է, մոլեգնաբար արեւելածու ու հայադրոյմ: Անոնք որ կը կարծեն թէ « հայ ոճ մը » գոյութիւն չունի, թող Աբովեանը մօտէն ուսումնասիրեն: Գրիգոր Նարեկացուն հետ, Աբովեան ամենէն զուտ ու հզոր ներկայացուցիչն է հայ զգայնութեան, հայ քնարերգութեան, հայ բացատրութեան: Բառական կուտակումը, կրկնութեանց ու անյայտ ընդլայնմանց ձգտումը, ըզզացման ծայրայեղ ջղայնութիւնը, բացատրութեանց վայրենի ուժգնութիւնը, կոշտութեան ու փափկութեան արտասովոր խառնուրդը, ծանր ու զանդաղ երկարաբանութիւնը եւ միանգամայն՝ երբեմն՝ փայլակնահանգոյն արագութիւնն ու փայլը, ահաւասիկ ինչ որ կը գաննէք Նարեկացիին « Ողբերգութեանց մատեան »ին ու Աբովեանի « Հայրենասիրի ողբ »ին մէջ, երկու ամենէն հայ գրքերը որ ունինք, եւ որոնցմէ միայն պիտի կրնայ ծնիլ հայ ճշմարիտ բանաստեղծութիւն մը: Անշուշտ Նարեկացուն ոճը աւելի նուրբ, աւելի կատարեալ է, մինչդեռ Աբովեանինը, օտար բառերով աղարտուած, ռամիկ ոգով տոգորուած, նուազ մաքուր է եւ նուազ ազնիւ. բայց ի փոխարէն Աբովեանի գործը աւելի նիւթ, աւելի հոյզ, աւելի կենդանութիւն կը պարունակէ, աւելի կնճռոտ, աւելի ընդարձակ, աւելի իրական պատկերներով կը բռնկի: Երկուքն ալ յիմարութեան մօտեցող յուզման մը մէջ դրած են. երկուքն ալ կ'աշխիւն իրենց նիւթովը. « Կենարարին յիշատակաւ միշտ նեկնանքիս » կ'ազգազակէ հին ազօթողը. եւ Աբովեան իր « խորովիլը » կը կրկնէ՝ իր մէջը փրփրող զգացմանց կրակէն: Երկուքն ալ տու-

տակ մը ցնորազգացութեան մէջ երկնած են իրենց գործը . Նարեկացին Աստուած կարծեց տեսնել օր մը Աղթամարի կղզւոյն վերեւ . եւ Արտվեան , Վերֆին նախաբանին մէջ կը գրէ՝ « Հայաստան հրեշտակի պէս առջիս կանգնել ինձ թեւ էր տալիս : » Երկուքն ալ իրենց ցեղին զգայութեան բարձրագոյն արտայայտութիւնը կը ներկայացնեն , եւ այդ արտակարգ խոսացման զօրութեամբը՝ մարդկութեան ամենէն մեծ երգողներուն կարգը կրնան մտնել : Նարեկացին Աստուածաշունչի քնարերգակներուն կը մօտենայ , աւելի վրդովիչ , աւելի մրբրկատ , բայց նուազ սուղծագործ ու նուազ հոծ . Արտվեանի քերթուածն Խլիակալն ու մանաւանդ Շահնաւէն կը յիշեցնէ , անոնց սկզբնական վեհութիւնը , անոնց խորին մարդկայնութիւնը , անոնց երիտասարդ պայթումն ունի հսկայ կրքերու . եւ իր թերութիւններն իսկ , երկարութիւններ , կրկնութիւններ ու խճողում , խնամութիւն ունին այդ վիթխարի հրաշակերտներուն հետ , գերազանցապէս ասիական թերութիւններն են , որոնցմով բեռնաւոր է Շահնաւէն , որոնցմէ բոլորովին զերծ չէ , հակառակ Պիսիտրատեանց ձեռքով սրբագրուած , յունացած ըլլալուն , նոյն իսկ Խլիակալը , ծնունդ կէս-ասիական ներշնչման . Նարեկացւոյն ոճը կը յորձանապտուտքի տիեզերավերջի յայտնութեանական փոթորկի մը նման , ուր ամպերը , որոնք խունկի կուտակումներէ շինուած են , արիւնտտ փայլակներով կը պատռտուին , եւ ուր սասանած մարդկութիւններուն գետնատարած պապանձումին վերեւ , որոտածայն կը սաւառնի սարսափը յաւիտենական պատուհասին : Արտվեանին ոճը իրական մրբրկին իսկ է , այնպէս ինչպէս Արեւելքի ամաններուն՝ կը տեսնենք վրանիս յեղակարծ խուժելը կարմրած երկնքէն , զորչ ու կանանչ ու մանչող անհունածաւալ առածգական գալարատանջ էակը , հազ ը երախներով պոռագող , հազար աչուրներով փայլատակող , հազար ընգունքէ փոշի , ծուխ , քար , կայծակ ու արհաւիրք սփռելով , աղաղակելով երկինքն ի վեր ցաւ մը հսկայական ու մոլորկին , եւ սակայն իր ամենի անցքէն անմիջապէս յետոյ , ղեռ չփարատած ամպերուն մէջէն կախելով ծիածաններ անուշութեան , ու հողին վրայ , օղին մէջ՝ ձգելով զովութիւն մը , զոր ճնշողական ու բարբարոս տաքութեան սպանիչ քամին միայն կրնայ ծնուցանել :

Վերջ Հայաստանիին նիւթը շատ պարզ է : Գործողութիւնը կ'անցնի ոռւսօ-պարսկական պա-

տերազմին ատենը : Ամբողջ Երեւանի գուառը կը հեծէ ահաւոր բարբարոսութեանց տակ զոր Ռուսին յառաջխաղացութենէն գրգռուած Պարսիկները կը տեղացնեն Հայերուն վրայ . առեւանգութիւն , ջարդ , չարչարանքներով սպանումներ , հրդեհում , աւարառութիւն , եկեղեցիներու պղծում , ամբողջ քսամնելի շարքը հրէշութիւններուն զոր մահմետական մոլեռանգութիւնը կը թափէ՝ իր գրգռման վայրկեաններուն՝ քրիստոնեայ զոհերու վրայ :

Մէկ քանի հոյակապ էջերուն մէջ ուր կը նկարագրէ Երեւանի բերդը՝ իբրեւ ճիւղային խորհրդանշանը մահմետական գաղանթեան , Արտվեան հայ ժողովրդին մարտիրոսութիւնը կ'երգէ անբաղդատելի զւժգնութեամբ . « Երեւանու բերդն , Երեւանու բերդն , ա՛խ՝ որ առաւօտը բացվելիս՝ նրա էն լաչար գլուխը մարդի աչքով չէ՛ր ընկնում , հէնց իմանաս թէ գոխքն ա իր բերանը բաց անում , ատամները դրճտացնում ու իր ապականեալ , թունաւոր , դառը շունչը չորս կողմը փրփրալով փչում , ցրվում , փռնչացնում , որ կարենայ իր հոտած աղքների կերած , լափած արդար ջանը մարսի , էլի չանգերը գուբարայ քցի , էլի հազար անմեղ , արդար հոգի՝ անծամ կուլ տայ , իր անկուշտ փորին մատաղ անի : Արեգակը մտնելիս , հօ՛ հէնց իմանաս թէ Սաղայէլի որդիքն ու զաւակները , նրա զօրքն ու զօրապետներն ըլին իրանց զիւական խաղը խաղում , իրանց դժոխային քէֆն անում ու բըջերի գլխին՝ մէկ կտրած գլուխ էստեղ էին ոտի տակ տալիս , մէկ անգլուխ լաչ էնտեղ էին կտոր կտոր անում , վրէն թքում , ծափ տալիս , ծիծաղում , հրհուում , քրքում , ու թրով , մզրախով , ես փէտով՝ մէկ մեռած մարմին էս կողմն գլորում , քացի տալիս ուներքեւ քցում : Ճաշվայ ժամանակին՝ հէնց իմանաս մէկ կրակի սար ըլէր էնտեղ կանգնած , փոր , ծոց՝ տաք քուքուրթով , բոցով լիքը՝ ծխում բորբոքում էր որ բիրդանբիր ճնչայ , բացվի , տրաքի ու ինչ կայ չիկայ տակու՞ն անի , լափի : Ամէն մէկ բուրջը , ամէն մէկ բազանը՝ ոսկոռով , ջամդաքով , ես անմեղ դութսաղներով լիքը , քած խոզի պէս՝ հէնց իմանաս՝ ծանրացել , փորըներն էլ չէին կարում քաշիլ , էնպէս ուռել էին որ բիրաղի ճաքին , պատառին , կտոր կտոր ըլին : Մէջքների ոսկեվարաղ գլխներին արեգակի շողքը դիպչելիս , պլպլալիս , հէնց իմանաս էն իրանց միջի անսիրտ նամաղ անողների անխղճմտանք հոգու շնչովը փքված , ուզում ըլէին՝ Աստծուն փառաբանութիւն աղօթք անելու տեղը՝ որ երկ-

րին խաղաղութիւն զինչութիւն տայ, Սողոմոնական կրակն ըլէին ուզում երկնքիցը վէր ածիլ տան, որ սար, ձոր էրեն, խորովն, տակով անեն . . . Երեւանու բերդը, Երեւանու բերդը, ա՛խ աչքս դուս գայ, քանի՛ քանի՛ ողորմելի Հայի միս ա կերել, քանի քանի անմեղ հոգի տարիներով չարչարվելուց, տանջվելուց, կենդանի նահատակ ըլելուց, կրակի, բոցի, երկաթէ շամիրի, թոխմախի, կրակած քարփչի տանելուց, համբերելուց ետը, կա՛մ թօփի գիւլի հետ ա թռել, հազար կտոր էլել, կա՛մ սարազաջի (1) վրայ ա՛ գոռալով, երկինք երկիր ազաչելով, իր միան ատամներովը կրծելով, աչքերը դուրս տրաքելով, փոթոթվելով, հոգին աւանդել, երկինքը գնացել որ պրծնի էս դառն աշխարքիցը, էն կատաղի գազանների ձեռիցը : Քանի քանի ջահէլ երիտասարդ՝ մէկ սաղ օջախի մէջ մինակ որդի, մէկ աղքատ չքաւոր տան սիւն մխիթարութիւն, մէկ տասը գլուխ քիւլֆաթի տէր ու ապաւէն, իր ծագկած, դալար հասակին, իր ըմբրի արեւի նոր բաց ելած ժամանակին, կամ սաղ սաղ քերթվել ա, կամ իր պատուական գլուխը գառան պէս թրին դէմ արել, որ երկնքումը իր ջահէլութեան մուրազն առնի, վայելի, չունքի երկիրը նրա անարատ արնին էր ծարաւ՝ որ շուտով խմի ու բաւքի վշտանայ . . . Հերի՛ք, հերի՛ք ասող կ՛ըլի ինձ, ձեռք վերցրու էդ գօտիքիցը, ի՛նչ էլաւ քեզ : Ա՛խ, ի՛նչպէս ձեռք վերցնեմ . բա՛ս ո՛ւր թողանք մեր ազգի էն սիրուն սիրուն լուսաթաթախ աղջկերքը, բա՛ս մէկ ողորմի էլայ չի՛ պէտք է ասենք՝ որ երեսների վրայ, քարի, աւազի, փշի, տատասկի վրով՝ մաղըներիցը բռնած քարքաշան անելով, գլխըներին խփելով, մէջքըներին զամշելով, շատ անգամ փորըների վրայ պար գալով, քացի տալով, թրեւելով, թուր քաշելով, տրորելով, թվանքի ոռքով, լափչընի նալչով տալով, ես կխչորելով, ձեռըները կապած, ոտըները բխոված, շատ անգամ հարիւր վերստ տեղից՝ հէրնմէրն ետեւներիցը ընկած, քիր, ախպէր բոբիկ ոտով, ես գլխաբաց, քեռի, փեսայ, ազգական՝ դօշըները ձեծելով, մազըները պոկելով, հող ու քար գլխըներին տալով, ինչպէս մէկ սուրու գառն ու մէրը կորցրած ոչխար՝ տանում էին, բերդն ածում, որ իրանց արդար իմամներին փայ շինեն, հարսնացնեն, թուրքացնեն . շատը հէնց տանն էր հոգին տալիս, շատը ձամբին հօրն ու մօր աչքի առաջին

(1) Կախաղան :

էն կեանքը գնում ուր ցաւ ուր վիշտ է՛լ չկայ . շատի սիրտն էլ որ մի քիչ պինդ էր ըլում՝ ընչանք ա բերդն էր հասնում, հաջի, մուլա, քեալբալայի, սուխտայ, խան, բէկ, ախունդ, սէիդ վրայ էին թափում՝ որ ես խաբնով հաւատից հանեն, ես պատժով, բայց տեսնելով որ նրանք ոչ փառքից են խաբվում, ոչ պատժից վախում, ոչ խանդաղութեան թամահ անում, ոչ մահից ան քաշում ու ուզում էին Քրիստոսի հարսնանալ, կոյս գնալ աշխարքիցը, որ հրեշտակաց դասը դասակվին, իրանց սուրբ հաւատը չէին ուրանում, պատիժ, պատուհաս, սուր, հուր, բոց, կրակ, սուլջ, մահ, մէկն էլայ աչքըները չէին բերում, որի ոսկեթել գլուխն էին հօրնմօրը տալիս, որի լուսաթաթախ լաչը, որի ձեռն ու ոտը : Աղջիկ ու է՛սքան սիրտ . . . Աստուա՛ճ նրանց հոգին լուսաւորի :

Մանձարձակ ու խուռնամբոխ բռնաւորին կոխոտմանը տակ, հայ ժողովուրդը, անդէն, սակաւաթիւ, անպաշտպան, սարսափին մէջ կը փռուի գետնամած, մահուան սպասելով : Բայց կան անո՛նք որ չեն ուզեր ոչխարի մահովը մեռնիլ . անոնք կը դիմադրեն, մահու դէմ մահ կուտան, լեռները կը քաշուին, կը մարտնչին . անոնք կը յոգնեցնեն պարսիկ ուժը, անոնք կը պատրաստեն, կը դիւրացնեն ոուս բանակին դօրծը, որ ան ալ առաջնորդուած է հայ զօրապետներով ինչպէս Մատաթօֆ, մղուած է հայ գործիչներով ինչպէս Աշտարակեցին : Այդ ասպտամբ հոգիներէն մէկն ալ Աղասին է, Քանաքեռցի հերոսը :

Բարեկենդանի օր մը, ճիրիսին, պարերուն, խաղերուն մէջտեղը, յանկարծ սերսարին ծառաները կուգան աղջիկ առեւանգելու . գիւղին քնքուչ գեղեցկուհիներէն մէկը, Թագուհին, կը յափշտակեն . Աղասի, որ ճիրիս խաղալու վրայ է, ճիչերը կ'իմանայ, կը վազէ, կը հասնի, կը տեսնէ խուժուժ տեսարանը, կը յարձակի Պարսիկներուն վրայ, սրովը անոնց գլուխը կը թոցնէ, եւ կ'ազատէ Թագուհին : Բայց այդ վայրկեանական յաղթանակը ահռելի աղէտքի մը շարժառիթը պիտի ըլլայ : Աղասին կը ստիպեն հեռանալ . եւ նոյն իրիկունն իսկ գիւղը արիւնը կը փաթթուի : Ամբողջ գիրքը կը բզքտուի արդէն սա դժնդակ երկասյարբանութեան մէջ որով խեղճ խաղաղ, արուեստագործ ժողովուրդ մը ստիպուած է ընտրել երկուքէն մէկը, կամ անճոռնի բռնաւորներու գարշապարին տակ հլու կքիլ ու լռել՝ կեանքը պահպանելու համար, կամ ափ մը քաջերով դիմադրել եւ կոտորած

յառաջ բերել անպաշտպան գիւղերուն վրայ, — մինչեւ գալուստը քաղաքակրթութեան մեծ ուժերուն, որոնց հետ պիտի հասնի վերջնական փրկութիւնը :

Աղասին լեռները կը քաշուի, կը գտնէ համաբաղդ ընկերներ, եւ երկայն ատեն նարէ սար, ձորէ ձոր, կը թափառի պայքարելով, ահարկու անուն մը կը չինէ որմէ Պարսիկը կը դողայ, եւ կը մնայ անձերբակալելի, անպարտելի : Արովեան ուղած է Աղասիին մէջ պատկերել հայ հողին՝ այնպէս ինչպէս ինքը կը տեսնէր զայն, կամ կ'ուզէր տեսնել : Խորխտ, անձնագոհ, անշտհանդիւր, վեհանձն, քաջ տղան է ան, որ զայրոյթն ունի բայց ոչ անգթութիւնը, որ անվեհեր է բայց երբեք վայրագ : Գեղեցիկ է . « Նրա սուրահի բոյր, նրա թուխ թուխ աչքերը, նրա զալամով քաշած ունքերը, նրա անմամն, գեղեցիկ պատկերը, նրա անուշ լեզուն, քաղցր ձէնը, նրա լէն թիկունքը, բարձր ճակատը ու ոսկեթել ճալվերը մարդի խելք էին տանում, տեսնողն մաթ էր մնում, չէր կշտանում : Սաղը ձեռն առածին պէս, քարին, փէտին, շունչ, հողի, լեզու էր տալիս : Դորդ ա, արեւն երեսն էրել, գունը փախցրել էր, ամա ծիծաղելիս՝ որ աչք ու ունքը չէ՛ր բաց անում, հէնց իմանաս վարդ է բաց ըլում, երեսիցը լիս վեր թափում » Այնքան ազնիւ է որքան ուժեղ . « Գեղըցիքը բոլոր նրա արեւովն էին խնդում, նրա պիտով օրդում ուտում : Ամէնի աչքը նրա վրայ էր, նրան էր գովում, նրան օրհնում : Մէկին մէկ փորձանք զիպչելիս, կամ մէկ դարդ ունենալիս, նա իր պուշուր եղ էր դնում, նրա մուրաղին համում : Բերնի թիքէն հանում էր, ուրիշին ուտացնում . . . : Սիրան էնքան բարի էր որ նհախ տեղը դուշ էլ չէր սպանիլ, մըջիմը չէր կոխիլ . . . : Էնքան զվաթով էր՝ որ ձեռը մէկ տղամարդի գօտիքը չէ՛ր քցում, հաւի ճուտի պէս բարձրացնում, պիտի ծէրն էր հանում, պտիտ տալիս, էլ եղ վէր բերում : Զին նի ըլելիս՝ որ ձեռը չէ՛ր բարձրացնում, ասլան ձին կզանում էր ու մէջքը դէմ անում : Հինգ մարդ վրայ թափէին, բունց ձեռը կ'որոթէին : Գամշի կամ եզան բողաղը մէկ թուր խփելով՝ էնպէս դուս կարում, որ թրի ծէրը գետինն էր խըրվում : » Գիւղին աղջիկներուն սէրը, հպարտութիւնը, խտէալն է ան . անոնց ամենէն անուշ երգը Աղասիին գովքն է .

Աղասի ջա'ն՝ գըլխիդ դուրբան՝  
Գու ես մեր թագն ու պարծանքը .

Աշխարհքս որ բոլոր ման գան,  
Ո՞վ կ'լի հատըդ, դո՛ւ մեր կեանքը :

Բայց այդ առիւծը իր ծերուկ ծնողքին առջեւ գանձուկի պէս հեզ է . իր գիւղին աղջիկներուն դիմացը կը շիկնի ամօթխած . Թագուհին ազատելէն յետոյ, երբ կը մօտենայ աղջկանը որ մարած գետին ինկած է, չի համարձակիր ձեռք դպցնել անոր . « Նա ձեռները խաչել, ինքն էլ փէտացել՝ մնացել էր կանգնած : Մօտանար, սիրտ չէր անում, խտտել, ձեռները ճմռել, անկաջումը ձէն տալ, երեսին ձեռը խփել, բոլոր, բոլոր չէր կարելի, չունքի Թագուհին գեռ կոյս էր, ուրիշ մարդի աղջիկ : » Ու վսեմ տեսարանի մը մէջ, կը տեսնենք զինքը որ յաղթելէ յետոյ պարսիկ պետի մը, արիւնոուշտ Հասան-խանին գունդին, Հասան-խանն իսկ բռնելէ յետոյ, զանի իր դաստակին տակը կը գամէ գետինը, կը ցուցնէ անոր պարտուած ըլլալը եւ թէ ո՛րչափ ողորմելի է երբոր մինակ է, ու յետոյ կ'արձակէ զայն, չուզելով տկար մարդ մը խողխողելու վատութիւնը գործել : Պէտք կա՞յ սակայն աւելցնել թէ Հասան-խանը Աղասիին վեհանձնութիւնը կը փոխարինէ՝ իր աղատումէն անմիջապէս յետոյ քանի մը հայ գիւղ կոտորել տալով :

Լեռներու կարծր կեանքին մէջ, իր ըմբոստ աստանդումի օրերուն, Աղասին միշտ նոյն ազնիւ ու անվախ կտրիճը կը մնայ, որուն պողպատէ կուրծքին մէջ ամենէն քնքաւ սիրտը կը պահուրտի : Իր գէնքի ու թափառման ընկերներուն համար իր սէրն ու անձուիրութիւնը սահման չունին . զգալով որ իր ընկերներէն մէկը, Մուսէն, կը տառապի սիրովը հեռուն մնացած աղջկան մը, Աղասի իր բոլոր գուրգուրանքովը կը փղձկի . « Ա՛խ, աչքի լի՛ս, որ սրտումդ էդպէս դարդ ունիս, հէնց իմանում ես քա՛ր եմ, որ ինձանից բան ես թաքցնում : Չէ՛ էնպէս ես կարծում թէ էս իմ խորոված ջիգեարը, որ է՛լ սաղ տեղ չունի, քո դարդի համար էլ տեղ չի՞ գտնիլ, քս ցաւը չի՞ քաշիլ, էլամ չունչս ու ումբոս քեզ չե՛մ ի տալ . . . : Ե՛րբ կը թողամ ձեր մէկի աչքը ցաւի, ձեր մէկի մաղը թեքվի : Մինչեւ ես մեռնիմ ոչ, մինչեւ ինձ թիքայ թիքայ չանեն, ձեզ կը թողա՞մ որ մէկ դուշ անցնի կենայ պիւրներիդ վրայ . . . Հազար սար ու ծով մեր մէջն ըլի, էլի կը թռչիմ, նրան կը հանեմ, կը բերեմ, թաք ըլի՛ դու դարդ չանես, երեսի՛դ մեռնեմ . . . » :

Հմուտ չէ Աղասին իր ազգին պատմութիւնը չի գիտեր՝ բաց ի քանի մը տարտամ աւանդու-

թիւներէ. բայց այդ աւանդութիւնները կը բաւեն որ ան հասկնայ ամբողջ գերազանցութիւնը իր ցեղին եւ թէ ան արժանի է լաւագոյն բազմի մը. կ'ատէ ու կ'արհամարհէ մահմետականը, Պարսիկ թէ Թուրք, այդ «դժոխք, ժանգ, մորած, կեղտոտ երեսով» մարդիկը, որոնք վատ են ու ժին դէմ, վայրագ են անգորին առջեւ: Իր ցեղին համար ունեցած բնազդական հպարտութիւնը կ'աճի, կը լուսաւորուի եւ կ'ամբանայ երբ իր թափառումներուն մէջ Անիի աւերակները կը տեսնէ առաջին անգամ. Անիին, Հայուն անցած մեծութեան սրբազան վկան, իր կուրծքը յուզմունքով կ'ուռեցնէ. այդ պալատի ու տաճարի նշխարներուն առջեւ՝ պարզմիտ գիւղացին հայրենիքի, անկախութեան գաղափարներուն յայտնութիւնը կ'ունենայ: Հին թագաւորներուն ըստուերները կ'ելլեն իրեն կը խօսին, հին եկեղեցիներուն զանգակները կը կարծէ լսել . . . ու մինարէներ կան հիմա, ու աւերակներ կը մնան միայն . . .

Վտանգէ վտանգ, յուզմունքէ յուզմունք, այսպէս ամբաներ կ'անցընէ Աղասի: Ոչ մէկ անգամ մահուան գաղափարը զինքը կը կասեցնէ իր յանգնութիւններուն մէջ. կրակին բերանը կը նետուի միշտ. բայց երբեմն իր արութիւնը կը թուլնայ ուրիշ մտածման մը առջեւ . . . չարչրկող մտածումը իր խեղճ ալեւոր հօրը որ զնդանի մը խորը կը փտտի, կարօտը իր սիրական գիւղին ուր չի կրնար դառնալ, ու կարօտը իր մօրն ու իր նշանած Նազուլին, որոնք հեռուն իրեն սպասելով կը հալին . . . կարելի չէ երեւակայել սրտէ փրթած էջեր ինչպէս անոնք ուր կ'երեւան նամակները Նազուլին ու մօրը՝ հեռուէն Աղասիին ձեռքը հասած . . . « Աղասի ջան, կը հեծկտայ մայրը, գլխովդ փէրվան ըլիմ՝ Աղասի: Ընչի՞ չեմ էս սնաթին կրակ դառնում ինձ էրում, ընչի՞ չի լեզուս չորանում, աչքս խաւարում, ընչի՞ չեմ թօզ դառնում որ բալքի թէ քամին բերի, գամ ոտիդ տակին ցըրվիմ, սարէ սար ընկնիմ, քարէ քար, որ իմ երեսը կոխես, որտեղ որ ման գաս, որ իմ աչքը հանես, որտեղ որ նստիս, որ ինձ վրայ գլուխ դնես, որտեղ որ քուն մտնես, նամն ըմբրիդ մեռնի, իմ թագաւոր, իմ ջա'ն Աղասի . . . » « Երա՛ք, կը ճուայ հայ աղջիկը, որ սիրտս հանեմ էս թղթումը զնեմ, երա՛ք որ բաց անես ու հազար թուր միջումը ցցված տեսնես, կ'իմանա՛ս էն ժամանակը թէ Նազուլդ ի՞նչ ցաւ աքաշում . . . : Ո՞ր սարերն են առաջդ կտպել, ո՞ր գետերը ճամբէդ կտրում, ո՞ր ձեռն ա թե-

ւիցդ բռնում ետ քաշում, ա՛յ իմ թագ ու պարծանք, որ այսպէս ինձ կրակում թողել ես . . . »: Ու այդ յիշատակներէն տրորուած, հսկան տղու պէս կուլայ:

Նազուլ՛, իմ Նազուլ, մէկ շունչս է մնացել, Ոսկերքս քրքրվել, աչքս խաւարել.  
Թող մէկ շունչդ առնեմ, յետոյ հողը մտնեմ.  
Դժոխքն էլ տանեն, ես հանգիստ կ'ըլեմ:

Ռուսերը կը յաղթեն վերջապէս, եւ արեւելեան Հայաստանին ամենէն կարեւոր մասը կը փրկուի պարսկական լուծէն: Բայց Աղասին բազը շունենար վայելել ուրախութիւնը յաղթանակին որուն այնքան նպաստեց. իր ազնիւ զգացումներուն զոհ կ'երթայ. անհամբեր կը դիմէ, Ռուսերէն առաջ, դէպի զնդանը ուր իր հայրը կը հեծէ շղթաներու տակ, որպէս զի զայն իր ձեռքովը ազատէ. ինքը միամիտակ, Պարսիկներու բազմութեան մը ձեռքը կ'իյնայ, որոնք ճանչնալով իրենցմէ շատերը սուզը փաթթող կարիճը, զանի՛ զնդանին մէջ, հօրը գիրկը կը խողխողեն:

Վերջ Հայաստանին միմիայն եղերերգութիւն մը ու դիւցազներգութիւն մը չէ: Նոր բարոյական մը, նոր ուղղութիւն մը, նոր կեանք մը մատնանիչ ընող գիրքն է ան: Հեղինակը կ'ողբայ ժողովրդին հետ, կը մռնչէ անոր հերոսներուն հետ, բայց իր եղբակացութիւնը, զոր տեղ տեղ խօսւրճտուքի ձեւով կը յայտնէ ընթերցողին, յուսատու է: Իրա՛ւ, գրքին ենթատիտղոսն է Ողբ հայրենասիրի, եւ կոտորածի ու թշուառութեան աղիողորմ պատկերներէն յետոյ, ողբը անհուն վհատութեան շեշտերով կը հնչէ երբեմն՝

Վա՛յ էն ազգին որ աշխարքումս անտէր ա...

բայց երկու ողբի մէջ, Աբովեան իր հաւատքը կ'երգէ հայ ցեղին արութեան, իր հիացումն ա՛նոր յամառ կենդանութեանը. « Էս սիրտը, է՛ս հաւատը, էս հողին, էս սէրն ունէր հայ ազգը, որ թշնամու, գողանի ձեռի՛ երկիր, աշխարհ, ազատութիւն, թագաւորութիւն, իշխանութիւն, մեծութիւն, բոլոր բոլոր կորցրեց իր հաւատին մատաղ սովեց, աղքատութիւն, նօքարութիւն, գերութիւն, զարկալութիւն, տանջանք, չարչարանք, սով, մահ յանձն առաւ, որ իր սուրբ եկեղեցին, իր լիս, լուսաւորչադաւան օրէնքը

ամուր, հաստատ ու անխախտ պահի: Էս ա հսկայութիւն, սրտապնդութիւն, մեծահոգութիւն, քաջութիւն, կամայ հաստատութիւն, հոգու կարողութիւն ու զօրութիւն, որ աշխարքիս վրայ ջրհեղեղիցը դէսը՝ էլայ մէկ ազգ մինչեւ էսօր չի կարաց ու չի էլ կարող ցոյց աւալ: Սար ըլէր փուլ կը գար, երկաթ ըլէր՝ կը հալչէր, կը մաշվէր, ծով ըլէր՝ կը պակսէր, կը ցամաքէր. բայց աստուածատէր հայ ազգը մինչեւ էսօր վերօրինակ հսկայութեամբ տարաւ բոլոր ու իր անունը պահեց:»

Եւ որքան զարհուրանքով կը նկարագրէ Պարսկին ձեռքէն Հայոց կրած տառապանքները, այնքան իր ուրախութիւնը մեծ է երբ Ռուսին գալուստը կ'աւետէ: Ռուսին գալուստը Աբովեանի համար վերակենդանացման թուակնի մը բացումն է: «Օրհնվի, կը գրէ, էն սհաթը որ Ռսի օրհնած ոտը Հայոց լիս աշխարքը մտաւ եւ Ղզլպաշի անիծած շար շունչը մեր երկրիցը հալածեց: Քանի որ բերնումը շունչ կայ, պէտք է գիշեր ցերեկ մեր քաջած օրերը մտքերնիս բերենք, ու Ռսի երեսը սեանելիս, երեսներնիս խաչ հանենք, Աստուծոն փառք տանք . . . »: Եւ իրօք ալ, այդ չըջանին, ոուս կառավարութիւնը, ոչ միայն փրկեց Հայերը հրէշային կացութենէ մը, այլ ամէն ազատութիւն շնորհեց անոնց՝ նիւթապէս ու բարոյապէս զարգանալու: Աբովեան կը ցանկայ թօթվել իր ժողովուրդը որ այդ նոր պայմաններուն, նոր միջավայրին ամբողջ առաւելութիւնը զգայ, ելլէ անմիջապէս իր թմրութենէն ու անկումէն, մասնակցի քաղաքակրթութեան մեծ շարժումին, որուն ահա միջոյններն ունի հիմա հազարդ ըլլալու: Մտանանիչ կ'ընէ վտանգներն ու խօչընդոտները. հակառակ իր խորին կրօնասիրութեան, կը յանդգնի նոյն իսկ նշանակել այն մահացուցիչ ազդեցութիւնը զոր իր պաշտօնին դիտակցութիւնը չունեցող կզերը կ'ունենայ ժողովրդին վրայ, որ երէկ զայն կը մղէր պարսկին լուծին տակ անխօսուկ համակերպիլ, եւ որ հիմա կ'արգիլէ ազգին խոյսըր դէպի եւրոպական ոգին: Եւ Աբովեան ցոյց կուտայ ճամբան զոր պէտք է բռնել.

«Անբանացիլ թուրը կը ժանգոտի, նամ տեղը ցորենը կը բորբոսի . . . Առաջ մէկ վարիք, հիմքը քցիր, մէկ ազգի աչքը բաց արա, դուզ ճամբէն ո՛րն ա՛ էն ճամբովը տար, սար ու ձոր մի՛ քցիր, դու նրան քո սէրը ցոյց տուր, տեսնեմ թէ նա քեզ չի սիրել: Ուրիշները մեզ բամբասում են հերիք չի, մենք էլ ենք մեր ոտիցը

մեզ ու մեզ ճողալի ըլում, էստով հօ բան չի դառնալ: Հայոց ազգի ջանին ղուրբան, մէկ նրա երեխին ուսում տուր, նրա էն լուսաթաթախ հոգին կրթիր . . . տեսնեմ թէ ջան կը տայ քեզ թէ չէ . . .

«Ձեզ եմ ասում, ձեզ, Հայոց նորահաս եւրիտասարդք՝ ձեր անուամին մեռնեմ, ձեր արեւին ղուրբան. տասը լեզու սովորեցէք, ձեր լեզուն, ձեր հաւատը զայիմ բռնեցէք: Մէկ դարտակ լեզուն ի՞նչ ա որ մարդ չկարենայ սովորել: Բաս չէ՞ք ուզիր որ դուք էլ գրքեր գրէք, ազգի միջումն անուն թողաք, ձեր գրքերն էլ օտար ազգեր թարգմանեն, ձեր անունը յաւիտեանս յաւիտենից մնայ անմահ:»

Պահպանում ու զարգացում հայ ցեղին, հայ լեզուին, հայ գրականութեան, — մուտքը հայ տարրին՝ եւրոպական քաղաքակրթութեան մէջ, ահա ճամբան զոր Աբովեան կը ցուցնէր: Իրմէ ի վեր, հայ ժողովուրդը քալեց այդ ճամբէն, ու բաւական յառաջացաւ: Եւ Աբովեան անպին արժանիքն ունի այդ ճամբան առաջին ու դժբնդակ ճիւղով մը բացած ու լայն բացած ըլլալու: Ռուսահայոց կրթական գործը իրմէ կը սկսի, եւ իր քրթութեամբն մէջ ամբողջութեամբ կը գտնուին սերմերն անոնց գրականութեան, սրովհետեւ Պոչեանց, որ արդէն աշակերտն էր Աբովեանին, Բաֆֆի, Քամառ-Քաթիպա, Արծրունի, ամենքն ալ իւրաքանչիւրն իր ճիւղին մէջ՝ Աբովեանի ուրուագծածը ընդլայնած են: Եւ եթէ ոուսահայ գրականութիւնը աւելի հայ գոյն, աւելի բնիկ շեշտ ունի, աւելի գերծ է հոնտորութենէ եւ դասական ազդեցութենէ, աթի կը պարտին Աբովեանին որ առաջին հարուածով ճշմարիտ հայ գրականութիւնը հիմնեց եւ իրականացուց:


Արեւմտեան Հայերուն մէջ դժբաղդարար անունով միայն ծանօթ է Աբովեան: Բաֆֆին, Քամառ-Քաթիպան ու Արծրունին մեր մէջ բաւական տարածուած են, մինչդեռ Աբովեան կարգացողները մատով կը համբուին: Ճշմարիտ է որ լեզուին տեղական հանգամանքը խրթին զարճուցած է այդ գործը՝ մեզի: Մեր գրականութիւնը, ուր ձեւը շատ աւելի զարգացած է քան Ռուսահայոց մէջ, ուր եւրոպացումը շատ աւելի առաջ գացած է, բայց ուր հայկական դրոշմը դրոզներուն ամենամեծ մասին մէջ գրեթէ ամբողջապէս բացակայ է, մեր արեւմուտեան գրականութիւնը պիտի ճոխանար ու հայանար՝ եթէ Աբովեան մեր մէջ ժողովրդական դառնար:

Այդ ընդհանրացման համար ես անհրաժեշտ

կը նկատեմ որ Աբովեանի քերթուածը մեր կանոնաւոր աշխարհաբարին թարգմանութիւն , որպէս զի բնական ու ընդարձակ տարածում գտնէ գործը, — ինչպէս Ֆրանսացիք ըրած են գաւառական բանաստեղծ Միսթուալին քերթուածներուն համար , որոնց բռնովանաական բնագիրը քիչերու ծանօթ է , մինչդեռ Ֆրանսերէն թարգմանութեամբ է որ ամբողջ Ֆրանսայի եւ ամբողջ աշխարհիս շրջանն ըրած են : Ատով, Աբովեանի ոճը թերեւս իր տեղական մասնաւոր պոյնը քիչ մը կորսնցնէ, բայց կը շահի ընդհանրանալով, ու վերջնական ձեւ մը կ'առնէ : Այս բոլոր աշխատութիւնները կը սպասեն անձնուէր ու գիտակից ձեռքերու :

Պէտք է տարածել այդ գործը , եւ կեանքն ալ անոր հեղինակին , որ նոյնչափ գեղեցիկ է : Այդ մեծ Անձնուէրին , այդ անմահ Ռահվիրային դէմքը պէտք է ընտանի դարձնել ընդհանուր հայութեան : Այն կիներուն որոնք մայր պիտի ըլլան՝ գեղեցիկ պատկերներ կը ցուցնեն , որպէս զի նորածինը՝ գեղեցկութեան ցոլքին տակ՝ գեղեցիկ ծնի : Իր մեծ մարդոցը դէմքը պէտք է միշտ ներկայ ըլլայ ազգի մը աչքին , որպէս զի նոր սերունդները , անոնց ճաճանչումին տակ , ցեղին շնորհը անկորուստ պահեն : Ու չեմ գիտեր աւելի գեղեցիկ ու գեղեցկացնող դէմք քան դէմքն այս դուցազնական գեղջուկին որ ամբողջ կեանքին մէջ զաղափարի մը սիրոյն մաշեցաւ , եւ որ , հայրենի երկրին ծոցէն տաք տաք ժայթքած , շղթաներէն դեռ կասկապուտ ձեռուրները արիւնով շաղախուած հողին մէջը խրեց ու անո՛վ , այդ ցաւի ու կորովի հողովը , կանգնեց իր անմոռանալի յիշատակարանը :

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ



Հ Ա Յ Գ Ի Ր Ք

Բ.

ԱՍՏՈՒԱԾՈՒՀԻՈՅՆ ԼՈՂԱՆՔԸ

Աստղադիշեր փողփողելով վառ ի վառ , կը ցընցըղկէր՝ շող բոլոր շող արծաթի . Ծովը վանայ ճաճանչալից կ'երեւար , Դարձած ամէն ալիք շարոց մարգարտի :

Կը մըրմըռար , կը զըզըչէր , կ'ելէր թունդ Երբ զանի լուռ կը փայփայէր հեղ լուսնակ . Խաղաղաւէտ ճօճուն անդորրը անդունդ կը տարածէր լուսազըւարթ երկնից տակ :

Մերթ կը թըւէր աստղաճամուկ մեծ կապերտ , Մերթ ոսկենիչ յատակ անհուն պալատան Որուն վըրայ յաւէրժհարսունք կապած վերտ Պիտի գային կարծես կայթել մանչման :

Ահա թըռաւ երփնագան ամպ մը թեթեւ , Փաթաթեցաւ լուսնին մէջքին դողդոջուն : Շըրչուն մ'ելաւ , բարախելով քընքուշ թեւ Տատրակներու կարծես կուգար գունդ թըռչուն :

Կուգար Աստղիկ նաժիշտներուն հետ բոլոր Լոգանալու ծովակին մէջը վըճիտ .

Ու կը բերկրէր գիշերն անուշ բոցաւոր , կը քըթթէին աչերն անոր խիտ առ խիտ :

Աստուածունին նըստաւ պայծառ ափին մօտ Շընչել վարդի բուրում , նայիլ ծովակին : Արտորացին ոտիկներուն խընկանոտ Բակել կապերն ակնակապ մուճակին :

Ան կը նայէր բացաստանին լուսեղէն , Երազալից , մինչ նաժիշտներն ըսպիտակ կը հանէին գըլխուն , ծոցին վըրայէն Զարդերն ամբողջ՝ շըղարշ երկար , փոքրիկ թաղ :

Ու մերկացաւ շլինքը ձիւնեղ եւ ամբիծ կապուտաքար զարմանաւոր մեծ քայռէն՝ Որ զօրութեամբ կախարդական հեշտալից կը շըղթայէ ամենայն սիրտ տիրօրէն :

Կամաց կամաց գետին ինկան քող հալաւ , Գետին ինկաւ լանջակամարն ալ շըքեղ , Պատմուճանէն հասակը վեհ դուրս ելաւ — Թօթվեց երկար հիւսակներն ան վարսագեղ :

Թօթափելով ամպը լուսինն այդ պահուն՝ Մէջտեղ ելաւ , կէսը բոլոր կէսը խոռ , Անոր վըրայ իջաւ ըղձմամբ իմն անհուն . Ու կը հանէր բոլոր աշխարհ յոգոց խոր :

Աստղիկ կանգնած էր մերկութեամբ բուրաւէտ , Ափիկներով ծոցերը վեր կը բըռնէր . Խոպոպիքներն ալ հոյլ ի հոյլ վէտ ի վէտ կը շողային ու կ'ըլլային տարուբեր :

Բամին ընդհատ անոր բոլոր կը շընչէր Ու կը հովէր վիզը , մարմինն ըսպիտակ : Կը ծաղկէին ագամանգիկ լոյս փունջեր , Կը գեղգեղէր զարթած ափին մօտ սոխակ :

Թաթիկն Աստղիկ երկնցուց դէպ ի լուսին —

Աներեւոյթ եղաւ , իջաւ մըթութիւն :  
Եւ հոլանի նաժըշտաց հետ միասին  
Ալիքներու ծոցը մըտաւ ան ժըպտուն :

Դարձաւ Վանայ ծովը բոլոր հըրեղէն ,  
Ծովը բոլոր կը մըրմընջէր ներդաշնակ :  
Կը հընչէին կուսաններու ծիծաղէն  
Վասպուրական աշխարհ եւ ափն ընդարձակ :

Հոտ կ'երեւար Ասաղիկ , ծաղիկ ծովային .  
Կը դողդոջէր կը փարէր զով ջուրն անոր :  
Յաւէրժահարսունք միմեանց յորդոր կուտային  
Խայտալ խընդալ եւ հընարել խաղեր նոր :

Ուրախութեան ձայներն ելան թընդացին ,  
Քընաթաթախ գիւղ եւ աւան արթընցան .  
Երիտասարդ եւ աղետոր փութացին  
Գալ , նըշմարել աստուածանոյշն աննրման :

Լեռներն ելան , լուցին խիտ խիտ կալաբոյ ,  
Ամէն կողմէ բարձրացաւ լոյս ծիրանի .  
Յանկարծ անա պայծառացաւ ծովուն ծոց ,  
Արձակեցին ճըչիւն կանայք գեղանի :

Բայց դիցուհին ամենագեղ զայրացաւ .  
Արի՛ , ո՛վ մէզ , պոռաց , արի՛ ծածկէ զմեզ :  
Մէզը տըրտում որ կը նըստէր խուլ անձաւ՝  
Դուրս սողաց լուռ , գունատ ունէր մութ երես :

Մուխ կը փըչէր բերանէն , մուխ պընչերէն .  
Ինքը թըզուկ՝ ծաւալեցաւ ամէն կողմ :  
Ողջունեցին զանի հարսունք խոր ջըրէն .  
Խաւարեցաւ լիճը , գիշերն ալ անհողմ :

Անկէց ի վեր կանխաւ կ'իջնայ թաւ մըշուշ  
Արժաթափայլ ծովուն վըրայ Բըզնունեաց՝  
Երբ լոգանալ այնտեղ կուգայ դիցանոյշ —  
Ու կը հալին բոլոր սըրտերն անձկայրեաց :



9.

Մ Ր Ր Ի Կ



Երկինքը շառ եւ ամպայոյզ կ'երեւայ :  
Աւասիկ խոյս կուտան արջառ եւ անդեայ ,  
Զի՞ք բառաչիւն կը զըզըրդէ սար ու ձոր .  
Բայց ետեւէն կը ձապաղի լուռութիւն խոր :  
Յուք մը գունատ խաղաղութեամբ անընկէց  
Կ'իջնայ վերուստ անդաստանին վըրայ մեծ ,  
Ըսպառնալից , նորանըջան փողփողմամբ :

Եւ մերթ հագիւ հազ կը սուրայ ամպէ ամպ  
Փայլակնաթափ դող, եւ երկինք կ'որոտայ :  
Ահա փըրփուր կ'ելլէ կարծես ու կ'երթայ  
Հասկաց վըրայ կը թըռչկոտի սըրավար :  
Ժանդատեսիլ պինդ թանձրացաւ թաւ խաւար :

Զարհուրալից բարձրացաւ ճիչ աղաղակ  
Արտէն դաշտէն՝ ուր կին գեղջուկ ու մըշակ  
Հունձք կ'ընէին արեւուն ասկ քիչ մ'առաջ :  
Կը նըստէին կովերն աչեղ անբառաչ .  
Կը կարմըրէր որան գէղ գէղ բարձրացած ,  
Զըկար երկիւղ , կամ չար հըմայ ու կասկած :  
Ու կ'արտորայ դէպ ի խըրճիթ , դէպ ի սուն  
Գերանդաւոր արտունձներու բազմութիւն :  
Ոմանք կ'ողբան, ոմանք կուլան գունաթափ —  
Ահա կուգայ , գետնէն կ'ելլէ մեծ վիշապ :

Որոտընդոստ երկինք երկիր կը թընդան ,  
Կ'ապականէ քամին ափս անդաստան ,  
Շեշտ շողարձակ բոցատարափ փայլակներ  
Կը բարախեն զիրար իբրեւ սուր սուսեր :  
Վարազաթեւ եւ փոշեխառն մորնչաձայն  
Վիշապը թուխ մըրրկի , լարած մագիլ լայն ,  
Դէպի երկինք կը վերանայ , եւ անոր  
Կը ձգտին պիչ դաժան աչերն ու խոշոր՝  
Իբրեւ գունտեր արիւնալից բոցեղէն :  
Եւ կը խախտի կարծես աշխարհ իր տեղէն  
Երբ երկնաչու ան կը գոռայ թեւարախ .  
Երեսանկեալ եւ սըրտերնին կապած վախ ,  
Կ'երկըրպագեն գեղջուկ մարդիկ դողդոջուն .  
Եւ նայելու հրէչին չունին քաջութիւն :

ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ



Կ Ի Ի Ս Թ Ա Վ Ֆ Լ Ո Պ Է Ռ



Կիւսթավ Ֆլուպէո (1821—1880) ամենէն կա-  
տարեալ վարպետներէն մէկն է Ֆրանսական  
գրականութեան : Իր արուեստագիտական ու  
բարոյական ազդեցութիւնը շատ մեծ եղած է  
այս դարավերջի ոչ միայն Ֆրանսական , այլ  
ընդհանուր եւրոպական մտաւորականութեան  
վրայ : Թոմանդիկ չըջանին ամենէն շողջողուն  
օրերուն , երբ Հիւկօ, Լամարթին, Վինտի, Միշ-  
լէ, խանդի, հաւատքի, երեւակայութեան ու յա-  
փըշտակութեան գրականութիւն մը կը հեղեղէին,  
Ֆլուպէո , շատ աւելի յառաջ երթալով Պալգա-

քէն՝ որ արդէն սկսած էր՝ իր հսկայական վե-  
պերուն մէջ՝ արդի ընկերութեան արիւնոտ տիղ-  
մը քրքրել, արտադրեց գործ մը անգուժ զիտո-  
ղութեան, ահաւոր մարդատեցութենէ մը ներ-  
չընչուած եւ արտայայտուած՝ անհաւասարելի  
կատարելութիւն ունեցող ձեւով մը : Տիկիև  
Պոլստի, Զգայնաւոյ դասխարակութիւնը զիւ-  
ցադնական հեգնութեան գերագոյն էջեր են, ուր  
արդի ընկերութիւնը կը պատկերուի իր բոլոր  
դրուելի եւ ծիծաղելի գծերովը, ազամանդի պէս  
ամուր, յստակ ու թանկագին ոճի մը մէջ : Բայց  
Ֆլուպէն, ժամանակակից մարդկութեան խարա-  
զանդն ըլլալով չչատայաւ : իր դառնացած հո-  
զին, անմիջական միջավայրէն շնչահեղձ, ինք-  
զինքը մխիթարելու համար՝ թեւ առաւ դէպի  
միջնադարեան աւանդավէպները, եւ դէպի հին  
մեծաշուք Արեւելքը. այդպէս՝ գրեց Յուլիանոս  
ասպնջակահին հեթաքը, Սուրբ Անտոնի փոր-  
ձութիւնը, եւ Մարտիոսն ու Հերոլդիան. անց-  
եալի ու տեսիլքի այդ ոգումներուն մէջ, Ֆլու-  
պէն միշտ կը պահէ իր անագորոյն զիտողի ճրգ-  
տումը, միշտ երեւան կը բերէ՝ պատմական  
ծիրանիին տակէն՝ մարդկային անամուտեան  
վայրագ պայթումները. բայց պատկերները, բար-  
քերը՝ հինաւուրց պարզութեամբ, կը բերը հզօր,  
սանձարձակ ու անզիմակ, պայքարը բիրտ ու  
անկեղծ, եւ իրական քնարերգութիւնը որ այդ  
բոլոր գունագեղ, խանդոտ եւ հուժկու կեանքէն  
ինքնէն կը բղխի, իր այդ գործերուն կուտան  
դաժան վեհութիւն մը, ուր ծիծաղելին կ'անհե-  
տանայ, եւ եղերական ահաւորութիւն մը կը  
մնայ, վայրենի բայց մեծ :

Անանիսի այս թուով կը սկսինք հրատարակել  
թարգմանութիւնը Հերոլդիային, որուն աստ-  
ուածաշնչական նիւթը, արեւելեան ոգին մաս-  
նաւորապէս շահեկան կը դարձնեն այդ հոյակապ  
հրաշակերտը՝ մեր ընթերցողներուն :

2.

Հ Ե Ր Ո Վ Դ Ի Ա

Ա.

Մաքերոսի միջնաբերդը կը ցցուէր Մեռեալ  
Ծովուն արեւելեան կողմը, բասալտէ կոնաձեւ  
սարի մը վրայ : Չորս խորունկ հովիտներ զայն  
կը շրջապատէին, երկուքը կողերուն մօտ, մէկը

զիմացը, չորրորդը մէկալ զին : Տուներ կը դիդ-  
ուէին անոր ոտքը, չրջանակին մէջ պատի մը որ  
գեանին անհարթութեանց համեմատ կ'ելեւէջէր.  
Եւ ժայռը կտրտող զիկզակաձեւ ճամբով մը,  
քաղաքը կը կցուէր միջնաբերդին, որուն պա-  
րիսպները հարիւր քսան կանգուն բարձրութիւն  
ունէին, բազմաթիւ անկիւններով, եզերքին  
վրայ ատամունքներով, եւ տեղ տեղ աշտարակ-  
ներով որոնք այդ անդունդն ի վար կախուած  
քարէ թագին կարծես ծաղկեղբուազներ կը ձե-  
ւացնէին :

Ներսը պալատ մը կար կամարակապ ձեմե-  
լիքներով, ծածկուած՝ արեղակնակով մը զոր  
խաղիւսմբ մը կը փակէր, ուր կայմեր շարուած  
էին վելարիոն մը պարզելու համար :

Առտու մը, զեռ լոյսը չձեղքուած, Հերով-  
դէս-Անտիպաս չորրորդապետը եկաւ հոն կըր-  
թրնեցաւ, ու զիտեց :

Լեռները, անմիջապէս իր տակը, կը սկսէին  
իրենց կատարները երեւան համել, մինչդեռ ի-  
րենց զանգուածը, մինչև խորն անդունդներուն,  
ստուերի մէջ էր տակաւին : Մառախուղ մը կը  
ծածանէր, պատտեցաւ, եւ Մեռեալ Ծովուն  
եզրագծերը երեւցան : Արշալոյսը որ կը ծագէր  
Մաքերոսի ետեւէն, կարմրութիւն մը կը հոսէր.  
Բիչ ատենէն լուսավառեց ծովազաշտին աւաղ-  
ները, բլուրները, անապատը, եւ աւելի հեռուն,  
Յուզայի բոլոր լեռները, որոնք իրենց խորտու-  
բորտ ու գորշ մակերեսները կը հակէին : Ենգադ-  
ղին, անոնց մէջտեղը, սեւ ձող մը կը գծէր.  
Հելրոնը, խորը սուզուած, գմբէթաձեւ կը բո-  
լորջանար : Եսքոյը նունենիներ ունէր, Սորեքը՝  
որթետունկեր, Կարմեղոսը՝ շուշմայի արտեր,  
եւ Անտոնիա աշտարակը իր անհեթեթ խորա-  
նարդովը Երուսաղէմին վերեւ տիրական կը  
կանգնէր : Չորրորդապետը գլուխը դարձուց եւ  
աջ կողմը՝ Երիքովի արմաւենիներուն նայեցաւ.  
ու միտքը բերաւ իր Գալիլեային միւս քաղաք-  
ները, Կափառնաուտը, Ենտորը, Նազարէթը,  
Տիրերիասը ուր թերեւս ա'լ երբեք պիտի չը-  
նար : Սակայն Յորդանանը կը հոսէր չոր դա-  
պին վրայ : ձեի ձերմակ, աչք կը յացնէր ձիւ-  
նի սփռոցի մը պէս : Լիճը հիմա լազուարթէ  
չինուած կը թուէր. եւ անոր հարաւային ծայրը,  
Եմէնի կողմը, Անտիպաս նշմարեց ինչ որ կը  
վախնար տեսնել : Մթափոյն վրաններ կային  
ցանուցիր. նիզակաւոր մարդիկ ձիերուն մէջ-  
տեղուանքը կը պարտկէին, եւ մարմող կրակ-  
ներ՝ գետնին հաւասար՝ կայծերու պէս կը փայ-  
լէին :

Գունդերն էին Արարաց թագաւորին , որուն աղջիկը մերժած էր՝ կնութեան աննելու համար Հերովդիտարը , ամուսինն իր եղբայրներէն մէկուն , որ կ'ապրէր Իտալիոյ մէջ , առանց աչք ունենալու իշխանութեան :

Անտիպաս Հոովմայեցոց օգնութեանը կը սպասէր . եւ տեսնելով որ Վիտելլիոս , Ասորիքի կուսակալը , կ'ուշանար , մտաւանջութեանէն ինքզինքը կ'ուտէր :

Աղբիպպաս անշուշտ կայսեր քով զինքը կործանած էր : Փիլիպպոս , իր երրորդ եղբայրը , Բատանիոյ վեհապետը , դադտուկ կը զինուէր : Հրէաները դժգոհ էին իր կտապաշտական բարքերէն , եւ բոլոր միւսները՝ իր ատրակտութենէն , այնպէս որ երկու ծրագրի մէջ կը վարանէր , Արաբները սիրաշահիլ կամ Պարթեւնեւրուն հետ դաշնակցութիւն մը կնքել . եւ իր տարեգարձը տօնելու պատրուակով , այդ օրն իսկ՝ մեծ ինչոյքի մը հրաւիրած էր իր զօրագլուխները , գիւղապետները եւ Գալիլիոյ մեծամեծները :

Սուր նայուածքով մը բոլոր ճամբաները խուզարկեց : Գատարկ էին ամենքն ալ : Գլխուն վերեւ արծիւներ կը թռչէին . պատնէշին երկայնքը , զինուորներ՝ պատն ի վեր կը քնանային . ամէն բան անշարժ էր զգեսակին մէջ :

Յանկարծ , հեռաւոր ձայն մը , կարծես երկրիս խորքերէն փախած , Չորրորդապետը տրժգունեցուց : Ծոնեցաւ մտիկ ընելու համար . ձայնը կորսուած էր : Նորէն լսելի եղաւ . եւ ձեռքերը իրարու զարնելով , Հերովդէս պոռաց . — « Մաննայի , Մաննայի : »

Մարդ մը երեւցաւ , մինչեւ կէս մէջքը մերկ , բազնիքի մարձոզներուն պէս : Ծատ բարձրահասակ էր , ծիւր , նիհար , եւ ազգրին վրայ կը կրէր վաղը մը պղնձէ պատեանի մէջ : Մաղերը , սանտրով մը վեր բռնուած , ճակտին երկարութիւնը կը չափազանցէին : Բնէութիւն մը աչուրները կը դունաթափէր , բայց ակումները կը փայլէին , եւ ոտքին մատները թեթեւ կը կոխէին սալերուն վրայ , ամբողջ մարմինը կապկի ձկունութիւն ունենալով , եւ դէմքը մոմիայի հանգարտութիւն :

— Ո՛ւր է , հարցուց Չորրորդապետը :

Մաննայի պատասխանեց , բթամատովը բան մը ցոյց տալով իրենց ետեւը :

— Հո՛ն՝ միշտ :

— Անոր ձայնը լսել կարծեցի :

Եւ Անտիպաս , լայն շունչ մը աննելով , տեղեկութիւն հարցուց Եւքանանին վրայ , անոր

զոր լաւինները Սուրբ Յովնանէս-Մկրտիչ կը կոչեն : Նորէն երեւցած էին այն երկու մարդիկը , որոնց թոյլտուութիւն եղած էր ամիս մը առաջ անոր զնդանը մտնել , եւ հասկցուած էր անկից ի վեր թէ ի՛նչ ընելու եկած էին :

Մաննայի պատասխանեց .

— « Անոր հետ խորհրդաւոր խօսքեր փոխանակեցին , ինչպէս գողերը , զիշեր ատեն չորս ճամբու բերանը : Յետոյ դէպի Վերին-Գալիլեա մեկնեցան , ըսելով թէ մեծ լուր մը պիտի բերեն :

Անտիպաս գլուխը հակեց , յետոյ՝ զարհուրած ձեւով մը .

— Հսկէ՛ , հսկէ՛ : Բոլը մա՛րդ մի մտցնել : Գուր լաւ գոցէ՛ : Ծածկէ՛ փոսը : Եւ ոչ իսկ թող կասկածը ունենան թէ կ'ապրի անիկա :

Առանց այս հրամանները ստացած ըլլալու Մաննայի զանոնք կը կատարէր արգէն . որովհետեւ Եւքանան Հրէայ էր , եւ ինքն ալ՝ ինչպէս ամէն Սամարացի՝ Հրէաները կ'ատէր :

Անոնց Գարիդիմի տաճարը , զոր Մովսէս նըշանակած էր Իսրայէլի կեդրոնն ըլլալու համար , դոյութիւն չունէր Հիւրկանոս թագաւորէն ի վեր . եւ Երուսաղէմինը զիրենք կը կատողեցնէր նախատինքի մը , մշտական անիրաւութեան մը պէս : Մաննայի անոր մէջ մտած էր , մտեղի ոսկորներով անոր խորանը պղծելու : Իր ընկերները , նուազ արագաշարժ , գլխատուած էին :

Նշմարեց զայն երկու բլուրի մէջտեղը : Արեւը կը շողացնէր անոր ճերմակ մարմարէ պատերը եւ տանիքին ոսկի խաւերը , լուսեղէն լեռ մըն էր կարծես , գերմարդկային բան մը , իր պերճութեան ու հպարտութեան տակ ամէն բան ճզմելով :

Այն ատեն՝ բազուկները Սիոնի կողմը երկընցուց , եւ , հասակը շիտակ , դէմքը դէպի ետեւ , բոունցքները սեղմած , բանազրանք մը նետեց անոր , կարծելով որ բառերը իրական զօրութիւն մը ունէին :

Անտիպաս մտիկ կ'ընէր , առանց գայթակղած երեւալու :

Սամարացին ըսաւ դարձեալ .

— Երբեմն կը խլրտայ , կ'ուզէ փախչիլ , ազատում կը յուսայ : Ուրիշ անգամներ , հիւանդ անասունի մը հանդարտ երեւոյթն ունի . կամ թէ կը տեսնեմ որ խաւարին մէջ կը քալէ եւ կը կրկնէ՝ « Ի՛նչ փոյթ : Որպէս զի ան մեծնայ , պէտք է որ ես պղտիկնամ : »

Անտիպաս եւ Մաննայի իրարու նայեցան , բայց Չորրորդապետը յոգնած էր մտածելէ :

Բոլոր այդ լեռներն իր շուրջը՝ յարկ յարկ

քարացած ալիքներու պէս, ծովածայրերուն կողմն ի վար սեւ վիհերը, կապոյտ երկնքին անհունութիւնը, լոյսին սաստիկ փայլը, անզունդներուն խորութիւնը զինքը կը վրդովէին. եւ թաղծութիւն մը զինքը կը պատէր ի տես անապատին, որ իր գետիններուն յեղաշրջութիւններովը՝ կործանած ամբիթատրոններ ու պալատներ կը ձեւացնէ: Տաք հովը, ծծումբի հոտին հետ, կը բերէր կարծես արտաշնչումը ծանր ջուրերուն տակ ափունքէն ցած թաղուած անիծեալ քաղաքներուն: Անմահ բարկութեան մը այդ նշանները զինքը կը սարսափեցնէին, եւ կը մընար՝ երկու արմուկը խաղխամքին վրայ, աչքերը սեւեռած եւ քունքերը ձեռքերուն մէջ: Մէկը դպաւ իրեն: Ետին դարձաւ: Հերովդիան էր:

(Շարունակելի) ԿԻՒՍԹԱՎ ՖԼՈՊԷՌ



\* \* \*

Օրերը կը հոսին մութ անհունն ի վար. Իրերը կը դառնան անվախճանարար. Ու տիեզերքին մէջ որ կը յօրանջէ, Կեանքն ու Մահն յաւիտեան կը պագնեն իրար:

Երգ մըն է տարտըղնած որ յանկերգ չունի. Մեծ առկախ տունն առանց ծածքի ու սիւնի. Եւ էութիւնն համակ՝ շարժումէն յոգնած՝ Աչք մըն է մըշտաբաց՝ միշտ կարօտ քունի:

Ունայնին ծոցին մէջ Փոշին կը պարէ. Ոգի մը խելագար՝ Պարը կը վարէ. Ու հեւ ի հեւ Պարին մէջէն, յաւիտեան, Կը սուլէ Չանձրոյթին հովը կապարէ:

ՏԵՐՎԻՇ



ՀԱՅՈՒՆ ԶԻՂԵՐԸ

—  
P.

Հայը ուրեմն, այս կամ այն պատճառով, իր ջիղերը ունի: Բայց ասկից պէտք չէ հետեւցնել թէ Հայերը ամբողջութեամբ Ղլախտաւորներ են: Գիտական խոշոր սխալ մը ըրած կ'ըլլանք, պըն-

դելով թէ ամբողջ հայութիւնը Ղլախտաւոր է: Հոս պէտք է զննել որոշ սահման մը Ղլախտաւորներուն, որոնք հիւանդներ են, ու Ղլախտներուն մէջ որոնք միմիայն իրենց մասնաւոր նկարագիրը ունին, առանց ներկայացնելու այն պակասները, որոնք նշաններն են Ղլախտութեանց:

Կան անշուշտ, եւ բաւական մեծ թուով, մեր մէջ, ինչպէս ուրիշ ազգերու մէջ, հիւանդներ ալ, կատարեալ Ղլախտաւորներ ալ: Բայց հոս անոնց վրայ չպիտի խօսուիմ. չպիտի ըսեմ թէ անոնք ի՞նչ տարտամ ցաւերով կը տանջուին, թէ անոնց հոգին ի՞նչ մութ մթնոլորտներու տակ կը չնչէ, թէ որոնք են անոնց բանականութեան սահմանափակ շրջանակները: Անոնց հոգեբանութիւնը բժիշկը միայն պէտք է ուսումնասիրէ: Բժիշկը միայն ճանչնալու է Ղլախտաւորին ցաւերուն ընդարձակութիւնը, գիտնալու է անոնց մտածմունքներուն, մտատանջութիւններուն խորունկութիւնը: Շատ գէշ, յոռի ու վտանգաւոր գործ մը ըրած կ'ըլլամ հիւանդ հոգիներու անտարանութիւնը պարզելով, Ղլախտաւորներու տրտունջները հրապարակելով: Չեմ գնահատեր երբեք այն բժիշկները որոնք ժողովրդային թերթերու, գրական հանդէսներու մէջ Ղլախտաւորները կը նկարագրեն իրենց մասնաւոր անտանջութիւններով:

Ղլախտաւորները, հիւանդութեան առջի օրերուն, բժիշկներէն դժգոհ, բժշկական գրքերու մէջ կը փնտռեն իրենց ցաւերուն պատճառները, անյայտ կարգացողներ են բժշկական յօդուածներու: Վնասը մեծ չպիտի ըլլար եթէ կարգալով դոհանային: Բայց անոնց յոգնած միտքը, տկար երեւակայութիւնը անմիջապէս կ'իւրացնեն կարգացուած կամ իմացուած նշանները:

Ի՞նչ է սակայն Ղլախտը, այն հիւանդութիւնը որ կը ճարակի ամէն երկրի մէջ, ամէն քաղաքակրթեալ ազգերու մէջ: Ի՞նչ են Ղլախտաւորութիւնք: « Ախտաբանական պայմաններ, կ'ըսէ Ա. քսենֆէլտ, առանց ջերմի, որոնց մէջ միմիայն մտաւորական, զգայնական ու յուզումնական փոփոխութիւններ կը նշմարուին. անտարանական պայմաններ որոնք սա կրկին հանգամանքները կը ներկայացնեն, այսինքն առանց գնահատելի որ եւ է ներքին հիւանդութեան՝ կը կազմակերպուին, ու իրենց ետեւէն ներքին գործարաններուն վրայ որ եւ է հետք չեն ձգեր: » Ուրիշ մը, Պրոշէն, կ'ըսէ թէ « Ամենքն ալ միմիայն Ղլախտ պաշտօններու խանդարման արդիւնք են, եւ որ եւ է ներքին ու մարդակազ-

մական արտացումէ չեն արտադրուիր : »

Ղլախտը ուրեմն , ներքին ու որ եւ է գործարանական հիւանդութեան հետ կապ չունի . ոչ անոնց արդիւնքն է եւ ոչ ալ անոնց պատճառ : Բանի ջղայիններ , խորունկ կերպով հիւանդ կը նկատեն ինքզինքնին , հակառակ իրենց բժիշկին ըսածներուն , սրտի , թոքի հիւանդութիւններ ունենալ կը կարծեն ու պարզապէս Ղլախտաւորներ են :

Ղլախտը , սակայն , պարզ ու առանձին հիւանդութիւն մը չէ , իր մասնաւոր նկարագիրը չունի . ամեն մարդ իր մտաւորական ու ջղային հարստութեան , իր ժառանգական տրամադրութեանց , սովորութեանց ու հիւանդութեանց համեմատ կը շինէ ու կը պատկերացնէ իր արտը : Ղլախտ մը չկայ , Ղլախտներ կան : Բայց անոնց նկարագրութիւնը չպիտի ընեմ՝ ըսի : Անոնք հիւանդներ են . մենք ատողներով պէտք է զբաղինք : Հայոց ջիղերուն ու անոնց ցաւերուն վրայ պիտի խօսիմ հոս :

Ու ցաւերուն ամենէն տխուրին , ամենէն բանաստեղծականին վրայ նախ , հողին ցաւին (mal du pays) , որուն կ'ըսենք մենք՝ պանդուխտի ցաւը : Պանդուխտին ցաւը , ցաւերուն էն սուրը , ոչ միայն հայուն ջիղերուն արդիւնքն է , այլ գրեթէ բոլոր տառապող ազգերու , զրկեալ ժողովուրդներու սրտին ցաւը : Իրեն հացը գտնելու համար կ'երթայ Հայը բախտին ետեւէն , կ'երթայ հեռու իր ընտանիքէն , իր երգիքէն , հեռու հողէն ուր ծնաւ , ուր սիրեց : Սիրտը հալումաչի մէջ , միտքը ու երեւակայութիւնը հոն՝ երկիրը ձգած , կը տանջուի : Ի՛նչ տխրութիւն , ի՛նչ արցունքներ պանդուխտին երգին ու ձայնին մէջ , որ իրիկուան մութին , խոնջեալու երազախոհ կ'երգէ մարած ձայնով մը , ու այն խոշոր մարդուն աչքերէն կը կաթկթին տաք արցունքները :

Կէս կրթուած ժողովուրդները ընդհանրապէս այս ցաւէն կը բռնուին , բայց զլխաւորաբար , լեռներու եւ բնութեան ծոցը ապրող ազգերը , գիւղացիները , որոնց մտքին մէջ պայծառ գոյներով կը մնան գիւղին պատկերները , որոնք յիշատակներով միայն կ'ապրին ու վերադարձի յոյսով միայն կը կազդուրուին :

Շատ հին ժամանակներէ ի վեր ճանչցուած է պանդուխտին ցաւը՝ ազգերուն մէջ . Բանակներու մէջ զլխաւորաբար շատ ճարակուած էր , ուր երիտասարդ լեռնականները՝ իրենց ծննդավայրէն հեռու՝ չկարենալով համակերպիլ զին-

ուորական կարգապահութեան , դասալիք կ'ըլլային : Հին Պրանսայի զուիցերիական բանակներուն մէջ արգիւտած էին լեռնական երգերը , որոնք միշտ կ'արծարծէին խեղճ լեռնցիներուն սրտին ցաւը :

Հոս ալ , այս կարօտին մէջ՝ նմանապէս պէտք է փնտռել Հայոց ջիղերը , որոնք մասնաւոր հոգեբանութիւն մը կուտան , սիրով , բանաստեղծութեամբ ու տխրութեամբ լեցուն , որովհետեւ Հայոց ջիղերուն առաջին արդիւնքն եղած է ցեղին նկարագրին տալ մեղամաղձոտութիւն մը : Հայերը մեծամասնութեամբ մեղամաղձոտներ են , ու այս բառը պէտք է հասկնալ ոչ թէ իր հիւանդ նշանակութեամբ այլ՝ Բանդի տուած բացատրութեամբ :

Մեղամաղձոտը արդարեւ իր շուրջը դտնուած ամէն բանի մեծ կարեւորութիւն կուտայ . ամէն բանի մէջ , ամէն խնդրի ետեւ ահագին դժուարութիւններ կը տեսնէ , ու է՛ն առաջ այդ խոչընդոտները կը տեսնէ , գործին գէշ կողմերը . յոռետես մըն է . չնչին բաներու սիրտ կը հատցընէ . բայց խորհող մըն է , երկայն խորհող մը , տրամաբանող մը . անցեալէն աւելի ապագայով կը զբաղի Յասկութիւններ են ասոնք , ձգտում մը խոհեմ ու զգոյշ ըլլալու , արդիւնքը ցեղին ջիղերուն , բայց ամէն մտատանջութեան պէս յոգնութիւն կը պատճառեն ուղեղին : Բանդ կ'աւելցնէ թէ մեղամաղձոտները ընդհանրապէս մարդասէր չեն : Հայոց համար՝ թերեւս աւելի ճիշդ կ'ըլլայ ըսել թէ հայասէր չեն . մենք չենք ատեր մարդը , ընդհակառակը . բայց զիրար շատ չենք սիրեր՝ կարծեմ : Ու այս տխուր ճշմարտութիւնը շատ անգամ ցաւալի առիթը ունեցած ենք հաստատելու :

Մեղամաղձոտներէն զատ , կան Հայոց մէջ բարկացոտներ ալ , ու կրնամ ըսել բաւական պատկառելի բանակ մը կը կազմեն ասոնք : Յարգի բոցի պէս կը բռնկին ու կը մարին . շուտով կ'անուշնան ուրիշներուն յօժարակամութիւնը տեսնելով : Իրենց գործունէութիւնը առնական կ'երեւայ , սակայն շուտով կ'այլասերի , բաներ մը ընել կ'ուզեն ու չեն յարատեւեր : Անոնք են զլխաւորաբար որ մեր ազգային գործերուն մէջ կը տեսնենք , անոնք են որ ազգը ձեռքի մէկ դարձուածքով մը ազատելու ճարպիկութիւնը ցոյց տալ կ'ուզեն , առանց ունենալու սակայն մեղամաղձոտներուն խորհելու կարողութիւնը , տրամաբանելու ուժը : Անոնք են նմանապէս որ մեր բոլոր ազգային ժողովներուն մէջ կոխը կը մտցնեն , իրենց բարկութեան

ձեռքը խաղալիք: Անոնցմէ իւրաքանչիւրը մասնաւոր տրամադրութիւններ, յատկութիւններ կրնայ ունենալ, բայց զրեթէ մեծամասնութեամբ՝ բարկացոտները՝ փառաւերհներ են. եւր իրենց մէջ, ամէն բանէ վեր է, իրենց կոիւնքը, բարկութեանց մեծագոյն մասը ետին շուրջը կը դառնայ: Շահը կը սիրեն, առանց ցոյց տալու. զիրենք շողոքորթողներուն ականջ կը կախեն:

Փոքրամասնութիւն մըն ալ կայ Հայոց մէջ, է՛ն անձնասէրները ասոնք. ուրախ, զուարթ, անհոգ, ու առանց մեծ յոյսերու մարդեր: Առաջին վայրկեանին ամէն տեսածներուն մեծ կարեւորութիւն կուտան, բայց շուտով կը մոռնան, որովհետեւ երկայն չեն խորհիր: Կը խոստանան, բայց կը մոռնան: Միշտ զբաղեալ կ'երեւան, բայց աշխատութենէ կը քաշուին, որովհետեւ կը յոգնին: Իրենց դերը մեր ազգային գործերուն մէջ շատ աննշան է, որովհետեւ մեծախօսներ են եւ անոնց կարեւորութիւն տուողները շատ չեն:

Այսպէս՝ Հայոց ջիղերը երկու գլխաւոր նկարագիրներ տուած են ազգին եւ ծնունդ տուած են մեր երկու մեծ թերութիւններուն: Մեղամաղձոտները՝ որոնք իրենց խոռովեալ հոգիով, մտատանջ գազափարներով մեր գործերուն մէջ դանդաղութիւն մտցուցած են, որուն արդիւնքը եղած է առիթներէն օգուտ քաղել չհամարձակիլ. բարկասիրտները՝ որոնք առանց խորհելու, առանց երկայն բարակ քննելու, ու հեռաւոր արդիւնքներուն վրայ տրամաբանելու՝ գործի մէջ ինկած են իրենց տաք գլուխով:

Այս ընդհանուր նկարագիրներէն յետոյ, վերջացնեմ մեր ջղայիններուն շարքը մէկ քանի խօսք ըսելով տեսակ մը այլատեսակներու վրայ, որոնք մեր մէջ ալ կան ինչպէս ամէն ազգի մէջ եւ որոնք «բարձր այլատեսակներ» կը կոչուին:

Առանձին տեղ մը ունին ասոնք ազգի մը մէջ. ապրելու եւ ըլլալու տարբեր ու անձնական ձեւեր: Անոնց քով միտքը մշակուած է, ուղեղը ունի պէտք եղած նիւթերը կատարեալ մարդ մը կազմելու: Բայց ուղեղին իւրաքանչիւր մասերը հաւասարապէս չեն զարգացած, խոռոչներ կան մտաւորական ու բարոյական կեանքին, մտածելու ու գործելու եղանակին մէջ: Մտաւորական ամենաբարձր կարողութեանց քով զարմանալի պակասներ ունին: Բայց շատ անգամ այդ ուղեղներն են որ հանձարներ կ'արտադրեն, այդ ծուռ մտքերն են որ յաճախ ուղիղ ճամբաներ կը ցուցնեն սովորական մահկանացուներուն:

9.

Մեր ջիղերուն պատճառները, նշանները քննելէ յետոյ, պէտք է դարմաններուն վրայ ալ խորհիլ: Անշուշտ չի բաւեր ըսել թէ Հայերը ջղային են. անոնց զրգուած ջիղերը հանդարտեցնելու միջոցը պէտք է ցուցնել:

Ցեղի մը ջիղերուն տկարութեան դարմանումը կարեւոր ու շատ ընդարձակ գլուխ մըն է, բայց պիտի բաւականանամ լայն գիծերու մէջ ցուցնելով ջղային զրութեան առողջապահութիւնը:

Պզտիկներով պէտք է զբաղիլ նախ, անոնց Ֆիզիքական եւ բարոյական խնդիրը պարզել է՛ն առաջ: Բայց հոս հարցում մը կայ որու պատասխանած են մարդիկ դարերէ ի վեր իրենց քաղաքակրթութեան ու սկզբունքներուն համեմատ: Կրթութիւնը կարող է ժառանգական ու ծննդական պակասները լեզնել: Արիւնին մէջ եղած գէշութիւնը կարելի է կրթութեամբ բարեփոխել: Գիտէք թէ անցեալ դարուն ի՛նչ կարեւորութիւն կուտային կրթութեան: Հելլէզիզմ կը հարցնէր իսկ թէ կարելի չէ՞ տալանդ տալ՝ կրթութեամբ՝ տիւեղձ մտքերու, բարոյական ու առաքինութիւն՝ մեղկ ու տխուր հոգիներու:

Ուրիշները կը խորհին Հերպերթ Սքենսէրի պէս, թէ կրթութիւնը անկարող է ուղեղէն գէշ խոտերը հանելու, թէ մարդու բարոյական ճակատագիրը զրոշմուած է սաղմնային հոգիին մէջ, թէ մարդ կը ծնի ջղային կամ հանդարտ, խննդ կամ խելացի: Հիւանդութիւնը՝ այսպէս, մտաւորական անկումները, ընտանիքէ ընտանիք կ'անցնին, ու կ'արտադրեն ընտանիքային հազար աղքատութիւնները որոնց ջլախտաւորում անունը կուտանք. ու կուզայ օր մը, կը խորհին այս ծայրահեղ հոգեբանները, որ ա՛լ ցեղը կը հատնի, անկարող այլ եւս արտադրելու:

Չափազանցեալ ընդհանրացումն է ասիկա մասնաւոր ճշմարտութեան մը. կան արդարեւ ընտանիքներ, ուր ջղային հիւանդութիւնք, մտաւորական խանգարումները կ'անցնին զաւակէ զաւակ. կրթութիւնը հոս մեծ դեր չի խաղար կարծես: Բայց այս ծայրայեղութեանց մէջէն պէտք է ուղիղ ճամբայ մը գտնել իրողութեանց վրայ չափուած:

Կրթութիւնը, երբ կարելի ըլլայ ժամանակին ու մէթոտով գործադրել, կրնայ նոյն իսկ ջլախտացեալ ծնողաց զաւակներուն վրայ ալ շատ լաւ ու կենսարար ազդեցութիւն մը ունենալ, կրնայ ազատել ջլախտացեալներ մտային

խանդարումներէ, կեցընել ժառանգական մղումը, տալով անհատին անձնական բնաւորութիւն մը ու սովորութիւններ, ընտանեկաններուն տեղ :

Պալէ իր վերջին գիրքին մէջ ժառանգական տրամադրութիւններ ունեցող տղայոց կըրթութեան պէտքը պարզելով կ'ըսէ թէ այդ մարզանքը նպատակ ունենալու է՝ 1. անհատին բոլոր կարողութիւններուն համերաշխութեամբ զարգացումը, գլխաւորաբար իւրաքանչիւրին մասնաւոր կարողութիւնները, բայց առանց ընդհանուր կազմութեան հաւասարութիւնը կորստնցնելու . 2. բնաջինջ ընել ժառանգական հակումները որոնք կրնան բարոյական ու ֆիզիքական համաձայնութիւնը խանգարել . 3. զօրացնել հոգիին կորովը ու ջղային դրութեան զմադրելու բնախօսական կարողութիւնը :

Առողջ ու կանոնաւոր կրթութիւն մը պէտք է ոչ միայն բարոյականով զբաղի այլ ֆիզիքականով ալ : Ֆիզիքական առողջութիւնը հիմն է մտաւորական առողջութեան, առաջին քայլն է զոր առնել տալու է պղտիկ տղուն : Ու յետոյ պէտք է, բարոյական կրթութեամբ, խնամել հոգին, խոտոչաւոր ուղեղին պակասները լեցնել, տկար ու յուզիալ ջիւղերուն ուժ, եռանդ տալ :

\* \* \*

« Հին ժամանակները, կ'ըսէ Սքենսէր, կըր պատերազմը ընկերական գործունէութեան առաջին տեղը կը բռնէր, մարմնական կորովը կրթութեան է՛ն գլխաւոր նպատակն էր . հոգ չէին տաներ մտաւորական կրթութեան, կ'արհամարհէին իսկ զայն : Այսօր որ կեանքի յաջողութիւնը խելքի կարողութիւնէն կախում ունի, կրթութիւնը միմիայն մտաւորական է ու կը մտնան մարմինը : »

Մեզի շատ կը յարմարի Սքենսէրի ըսածը : Քաղաքներու մէջ ապրող Հայերը մարմնական կրթութեամբ երբեք չեն զբաղիր : Դպրոցը՝ չաքաթը մէկ անգամ մարմնամարզի համառօտ դասէ մը յետոյ կը մոռցուի մարմնոյն կրթութիւնը . յետոյ աշխարհի մէջ ընդհանրապէս զանց կ'առնենք մարմնական մարզանքը : Ոչ միայն ջղային ծնողաց զուակները պէտք է մարմնական կըրթութիւն առնին, այլ նոյն իսկ առողջ պղտիկներն ալ : 1887ին Բժշկական Ակադեմիոյ մէջ տղայոց կրթութեան վրայ եղած բանախօսութիւններու գլխաւոր եզրակացութիւնն էր մարմնական կրթութիւնը սարածել, տղաքները անպատճառ ու անպատճառ ամէն օր մարմնական

մարզանքներու վարժեցնել : Բոլոր մարմնամարզները ներելի են, սակայն պէտք չէ որ մըտաւորական յոգնութիւն պատճառեն, ինչպէս ձեռքի զէնքերով, փայտով մարզանքները, որոնք ինչպէս կը բացատրէ ու կը հաստատէ Լակրանտ, ջղային դրութիւնը կը յոգնեցնեն աւելի քան միանունքը : Բաց օղի պէտք է կատարուին մարզանքները, հաճոյք ու զուարթութիւն պատճառեն ու շատ չյոգնեցնեն :

Բաց օղի՝ ըսի, նկատելով թէ այդ օղը գիւղերու մաքուր օդն է, անբիծ ու կոյս՝ միքրոպներու նոզկալի ներկայութենէն : Քաղաքներու աղտոտ օդը ոչ միայն ֆիզիքապէս, այլ եւ բարոյապէս պատճառ կ'ըլլայ պղտիկներու ուղեղին շարունակական զրգոթութեան :

« Գիւղը, կ'ըսէ Մօպիւս, տղայոց դրախտն է, բայց շատեր զրկուած են անկէ : » Գիւղերը ապրող Հայերուն տղաքները այդ դրախտը կը մեծնան . քաղաքներու մէջ բնակողները պէտք է իրենց զուակները զոնէ կեդրոններէ հեռու, հանդարտ թաղերու մէջ, լայն կապոյտ երկինքի մը տակ գտնուող դպրոցներ զրկեն :

Մեր պղտիկները ունին նոյնպէս իրենց հիւանդութիւնները, որ արգելք կ'ըլլան անոնց կանոնաւոր աճումին, ու պատճառ կազմուածքին տըկարացման ու աղաղայ ջղացաւերու : Մարսիլիոյ մէջ կատարուած վերջին բժշկական Համաժողովին, տղայոց ստամոքսի խանդարումները գլխաւոր նիւթերէն մէկն էր : Տր. Լը ժանտը, գիտուն տեղեկաբերը կը հաւատայ թէ կարծրւածէն աւելի պղտիկ հիւանդներ կան դպրոցներու մէջ որոնք՝ կը տանջուին իրենց ստամոքսէն : Եւրոպական դպրոցներու մէջ կատարուած յառաջդիմութիւնները, առողջապահական պայմանները արգելք չեն ըլլար ուրեմն ստամոքսի եւ ընդհանուր կազմութեան տկարութեանց . ի՞նչ պէտք է խորհինք մեր տղայոց վրայ որոնք Արեւելքի քաղաքներու մէջ կէս առողջապահիկ դպրոցներու մէջ կը զարգանան :

Եւրոպա ապրող Հայերու զուակներն ալ զերծ չեն ստամոքսի անհանդատութիւններէ ու ջղային տկարութիւններէ : Անոնց քով ուրիշ պատճառներ պէտք է վնտոել . գլխաւորաբար՝ մտաւորական յոգնութեան եւ մարմնամարզի պակասութեան հետ, կ'ըսէ Բրօֆ. Քօվալէվսքի, չափազանց մսակերութիւնը : Ուրիշ բժիշկներ ալ կը խրատեն քիչ միս տալ տղայոց : Լէվէն կ'ընդունի՝ շատերու հետ՝ թէ տղայոց կամ չափահասներու ջղային տկարութեանց ունեցած տրամադրութիւնը միայն վերադրելու է : Շա-

բաթը չորս անգամ միայն կարմիր միս տուէք տղայոց , կ'աղաղակէ : Բրօֆ. Պուշար կը փափաքի որ ամէն բժիշկ ժողովրդին հասկցնէ միս ուտելու չափազանցութեան գէշութիւնը :

Ֆիզիքական կրթութեան մէջ կը մտնէ նմանապէս մարմնոյ մաքրութիւնը ու գլխաւորաբար պաղ ջուրով լողանքը : Ծովու մօտերը բնակողները պէտք է օգտուին ամառուան տաքերէն ծովու բաղնիք անելու , եթէ որ եւ է արդելք չկայ : Պաղ ջուրին ազդեցութիւնը ընդհանուր ջղային գրութեան ու առողջութեան վրայ՝ ծանօթ է ամենուս . բայց այդ գիտնալը չի բաւեր , գործադրելու է . պաղ ջուրով լողանք , սպունգով սրբուիլ , տուշ , բաղնիք , եւն . գործածելու ենք ամենքս ալ եթէ կ'ուզենք ջիւղերնիս զօրացնել :

Ֆիզիքական խնամքներուն համաձայն պէտք է ըլլայ տղու մը բարոյական կրթութիւնը . Բայց մանկավարժական սկզբունքներու մէջ չմտնելու համար , համառօտ կերպով կը յիշեմ միայն այն կէտերը որոնք պէտք է ծնողաց ուշադրութիւնը մասնաւորապէս գրաւեն :

Տղայոց բարոյական կրթութիւնը շատ կարեւոր է . բայց դժբաղբար մինչեւ այսօր մեր մէջ , գլխաւորապէս Տաճկահայոց մէջ , երեսի վրայ ձգուած է : Եւ սակայն կրթութեան շնորհիւ է որ տղան պիտի կրնայ ունենալ բարոյական պէտք եղած յատկութիւնները , պահելու համար կեանքին համերաշխութիւնը , այսինքն զիմադրելու կեանքի կռուին , բարոյական ու հոգեկան ցաւերուն . ան միայն կրնայ տալ ուժը , կամքը , ինքնաճանաչութիւնը , ճիշդ դատողութիւնը իրերու եւ գործերու . անով միայն ջիւղերը կը յաղթուին ու ետը կը զօրանայ :

Այս կրթութիւնը պէտք է պզտիկ հասակէն սկսի . այդ տարիքին միայն կարելի է տղուն թարմ հոգիին մէջ սերմանել բարոյականի սկզբունքները : Բարոյական կրթութիւնը , կ'ըսէ Պալլէ , պէտք է նպատակ ունենայ համոզել տղան թէ կարող է բարիին ու անկարող չարին , կարենալու համար տալ իրեն լաւը ընելու ուժը , ո՞ր գէշը գործելու անկարողութիւնը . հաւատացընել իրեն թէ ուժով կամք մը ունի , թէ իր անձին տէրն է , իրեն հաղորդելու համար կորովը , ու յետոյ , ուզելու , ինքզինքին հրամայելու սովորութիւնը :

\* \* \*

Ու հիմա անցնիմ մեծերուն :

Հայերը , ո՞ր երկրի մէջ ալ որ ըլլան , ինչ քաղաքակրթութեան տակ որ ապրին , պէտք է յիշեն թէ ջղայիններ են , ու ջիւղերուն է՛ն զօրաւոր թոյնը ալքոլն է : Կը կրկնեմ ալքոլի դէմ ըսածս . որովհետեւ պիտի գտնուին ձեր քով , ձեր շուրջը , ուրիշներ , որոնք չափազանցութիւն մը պիտի տեսնեն ալքոլի դէմ մղած պայքարիս մէջ . ու մարդիկ միշտ իրենց պակասները շողոքորթողներուն կը հաւատան : Տեսայ Ֆրանսացիներուն վրայ , տեսայ Հայոց վրայ , տեսայ ամենուն վրայ ալքոլին ըրած կոտորածները , սոսկալի աւերումները , եւ չեմ կրնար ոճրագործ լուծեան մը մէջ պահել ոչ թէ համոզումս , այլ ճշմարտութիւնը : Ալքոլամուծութեան վրայ չէ խօսքս , հիւանդութիւն մըն է ան . ալքոլին , նոյն իսկ քիչ քանակութեամբ անուամբ ալքոլին դէմ է կռուս , որովհետեւ ճիշդ հոտ է սխալը : Ալքոլամուծեան ի՛նչ պժգալի հիւանդութիւն ըլլալը ամէն մարդ գիտէ : Բայց շատեր կը կարծեն թէ ալքոլը , քիչ քանակութեամբ , օգտակար է : Որո՞ւ . եւ այդ քիչը ո՞ւր կը հասնի : Ո՞վ տուաւ այս հարցումներուն պատասխան : Մարդուն , առողջին , հակառակ ձեզի պատմուածներուն , ինչ չափով որ ալ ըլլայ , ալքոլը վնասակար է : Գեղ մըն է ան , ու ամէն դեղերու պէս մեծ զգուշութեամբ գործածուելու է :

Մեր հոգեկան խնամքներուն վրայ ալ կ'ուզեմ երկու բառ ըսել : Մարմինը ինամելով հոգին չմոռնանք , առաջինին առողջապահութիւնը չի բաւեր վերջինին աալու համար երկայն հանդարտութիւն մը :

Պէտք է մեր կրքերը զսպենք նախ , տալով մտքին , կանուխէն , ազնիւ մտածումներ , առողջ նկատողութիւններ , որպէս զի կրքերը չափրեն մեր ուղեղին մէջ :

Յետոյ գլխաւորաբար մեր ջղային նկարագիրը պէտք է կրթենք , բարեփոխենք : Գտնելու ենք մեր մէջը բաւական ուժ , բաւական կամք՝ զիմադրելու մեր յոգնած ջիւղերուն , մեր ունակութեանց : Բարոյական խրատներ չեն ասոնք , հոգեբանութիւնն է տկար ցեղերուն , որուն ուժին պէտք է համոզուինք ու անկէց թելադրուինք :

Հասնելու համար մեր նպատակին , կրնանք զիւրիւնէն սկսիլ , ու Պաքոնի տուած հրահանգներուն հետեւիլ , մեր կարողութեանց համեմատ գործի ձեռնարկելով , դժուարէն չսկսելով անմիջապէս : Ամէն պարագայի մէջ , պէտք է օգտուիլ գիտնանք լաւ արամադրութեան վայր-

կեանսներէ եւ ի հարկին մեր կամքին զիմենք ,  
այն զօրաւոր կամքին , որուն միջոցաւ միայն  
կրնանք ամէն բանի յաղթել :

« Կէս քուն կէս արթուն եղողներուն կը  
նմանէի , կ'ըսէ Սուրբ Օգոստինոս , բայց որոնք  
քունէն յաղթուած՝ կը մրափեն նորէն : Անշուշտ  
ամէն առողջ մարդ արթնութիւնը քունէն կը  
նախընտրէ . եւ սակայն ոչինչ աւելի դժուար է  
քան մեր անդամներուն ծուլութիւնը թօթափել .  
եւ յաճախ՝ մեր կամքին հակառակ՝ մեր քունին  
անուշութենէն կը նուաճուինք , թէպէտ արթն-  
նալու ժամը հասած ըլլայ : Հոն կը մնայի նախ-  
կին սիրուհիներու խարուսիկ հաճոյքներէն ու  
յիմար ունայնութիւններէն բռնուած , որոնք  
կարծես մարմնոյս հագուստները կը թօթվէին  
ու կը փափսային՝ մեզի կը ձգէ՞ս : Եթէ մէկ կող-  
մէն կը փափաքէի եւ համոզուած էի , միւսէն  
չլիթայուած ու հրապուրուած էի . . . : Միայն  
սա հանդարտ ու թուլցած պատասխանը կու-  
տայի՝ քիչ մը ետքը , քիչ մը ետքը , սպասե-  
ցէք քիչ մը : Բայց այս «քիչ մը ետք»երը վերջ  
չունէին , ու այդ «քիչ մը սպասեցէք»ը յաւի-  
տենապէս կ'երկնանար : Ո՛հ , որքան խեղճ եմ :  
Ո՛վ պիտի ազատէ զիս այս մահու մարմինէն : »  
Կամքը :

ՏՐ. ՊՕՂՈՍ ՔՕԼՕԼԵԱՆ



ՀԱՅՐԵՆԻ ԵՐԳԵՐ

Մեր հայրենի տընակէն շատ քիչ հեռու  
Արեւծագի կողմը դաժան վայրենի՝  
Ուրկէ լուսինն իր լըրման մէջ կը ծընի ,  
Գօտի մ'երկայն կայ վիթխարի լեռներու  
Մեր հայրենի տընակին մօտ , քիչ հեռու :

Հովն այդ լեռանց վըրայ երբեք՝ տարիատանջ  
թերթ ու կոկոն , բոլորջ , տերեւ չէ սիրած ,  
Այգիներէն գատ , այն ցիրցան տըխրայած  
Սօսաւիւնով զոր կը շարժէ մեծագանջ  
Հովն՝ այդ լեռանց մըռայլ տըղան ցաւատանջ :

Հոն հինաւուրց ծունկի իջած սար մը կայ,  
Սիրտը ոսկոր , կուրծքն ալ շիրիմ ցան ու ցիր,  
Դըրած գըլուխն՝ հորիզոնին լայն անծիր ,  
Հին օրերու լեռներուն մէջ մեր հրակայ՝  
Մոռնկի իջած՝ կողը փուշեր՝ սար մը կայ :

Գիշերնե՛ր կան , Աշնան մաղձոտ գիշերներ ,  
Ուր ոչ լուսին , ոչ ալ շողեր դողդոջուն .  
Դամիները ցաւած կուլան լոկ անքուն  
Ու ձորերը կ'արձագանգեն լեռնէ լեռ՝  
Գիշերներո՛ւն , Աշնան մաղձոտ գիշերներ :

Կը վախնամ թէ մեռելներն են որ կուլան  
Երբ կը տեսնեն մեր ճըրագներն ընդ աղօտ,  
Ու ծանր հողին խորունկներէն խուլ աղօթ  
Մ'ուղղելէ վերջ անկարեկիր Բընութեան՝  
Մեռելները , հրակայ ծերեր , ա՛լ կու լան :

Հովին մէջէն , աշնան մէջէն դալկահար ,  
Ողբի ձայն մը , հողոյ երգ մը կը լըսեմ ,  
Հըծծիւններու խըղղուկ տըրտունջ մը նըսեմ՝  
Որ անցնելով տարիներէն անդապար ,  
Հովին , Աշնան մէջէն կուգայ դալկահար :

Ու կը մարի լեռներուն մէջ վազելով  
Հոգին տըխուր մեռելներուն՝ հովը հէք՝  
Աւջին ճըգած պաղ տերեւները բեկբեկ  
Այգիներուն մէկիկ մէկիկ լալիւնով՝  
Որ կ'անհետին լեռներու մէջ վազելով :

Մեր հայրենի տընակէն շատ քիչ հեռու՝  
Արեւծագի կողմը դաժան վայրենի ,  
Ուրկէ լուսինն իր լըրման մէջ կը ծընի ,  
Գօտի մ'երկայն կայ վիթխարի լեռներու ,  
Մեր հայրենի տընակին մօտ , քիչ հեռու :

ՀՐԱԶ




ՄՏԱԻՈՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Բիւվիս քը Շավան . — Սրբեան Մալառմէ . —  
Լէոն Տիւռնո

Ֆրանսա այս տարի իր ազնուագոյն զաւկը-  
ներէն երկուքը կորսնցուց , Բիւվիս տը Շա-  
վանն ու Սթէֆան Մալառմէն : Ֆրանսական մըտ-  
քին այս երկու մեծ լոյսերուն նուազումը՝  
մարդկութեան հորիզոնէն անհետացումն է երկու  
տիեզերական գեղեցկութիւններու : Եւ մեզի  
համար պարտք մըն է արձանագրել այդ սուգը ,  
որուն մէջ ամենքս ալ մեր բաժինը ունինք :

Բիւվիս տը Շավան գաղափարի նկարչու-  
թեան ներկայացուցիչը եղաւ այս վերջին  
քառորդ դարուն : Մինչդեռ , իրապաշտութեան

կարճատես ու փոքրոզի ազդեցութենէն վարակուած, իր ժամանակակից ֆրանսացի արուեստագէտները կեանքի մակերեւութային ընդօրինակութեան մը մէջ կ'այլասերէին, ինքը՝ Փանթէն-Լաթուոսի, Էօֆէն Գառիէոսի, Ռոտէնի հետ, հաւատարիմ մնաց մեծ արուեստին, համադրական ու խորհրդանշանական արուեստին, որ արուեստն է Յոյներուն ու Վերածնութեան վարպետներուն: Բազդն ունեցաւ ապրուստի հոգէն զերծ գտնուելու, եւ կրցաւ անկախաբար դարգանալ ու իր տաղանդը հասունցնել իր բնական ուղղութեանը համեմատ: Իր առաջին ուսումնասիրութիւններն ըրաւ զեղարուեստի հայրենիքին, Իտալիոյ մէջ, եւ իտալացի մեծ նկարիչներուն, մանաւանդ Ժ. Գարու թոխիդիֆնե-



ՔԻԻՎԻՍ ՏԸ ՇԱՎԱՆ

(Revue Encyclopédiqueէն առնուած)

րուն առջեւ անցուցած իր զմայլական խոկման ժամերն են որ զինքը կազմեցին: Հոն գտաւ իր ճամբան, ճանչցաւ իր խառնուածքը, զգաց իր ամբողջ գործը: Այդ հոյակապ արուեստագէտներուն պէս՝ որոնք պալատներ ու եկեղեցիներ զարդարեցին իրենց պատկերներով եւ շրոնց արտադրութիւնները որմնանկարչական արուեստն իր գերագոյն վեհութեանը հասցուցին, ինքն ալ մղուեցաւ յօրինել գործեր որոնք Ոստանին շէնքերուն մէկ լրացուցիչ մասը պիտի կազմէին եւ Ոստանին հոգին պիտի թարգմանէին իր ընդհանուր գծերով: Բարիզ

դարձին, աշակերտեցաւ Թոմա Գուդիւս եւ Արի Շէֆէն նկարիչներուն, որոնց երկրորդին մանաւանդ հակում մը կը զգար՝ անոր գաղափարապաշտ ձգտումներուն համար: Բայց երկուքէն ալ ո եւ է ուղղակի ազդեցութիւն չկրեց, շուտով քաշուեցաւ ինք իր տաղանդին մէջ, եւ սկսաւ ինքզինքը արտայայտել ամենայն ազատութեամբ: Առաջին գործերէն իսկ՝ իր ինքնութիւնը երեւցաւ: Ասոր համար, առջի օրէն հանդիպեցաւ անհասկացողութեան, ծաղրանքի եւ տրիւմար դատափետման: Տասը տարի շարունակ Սալոնը մերժեց իր նկարները, որոնցմէ՝ ոմանք արդէն հրաշակերտներ էին: Ամբողջ քննադատութիւնը կը ծիծաղէր այդ հոյակապ մարդուն վրայ, բայց Թէոֆիլ Կոթիէէն որ այդ շրջանին միակը եղաւ անոր հանճարն ընդհամարով: Որովհետեւ Բիւվիս կը համառօտէր, կը կրճատէր, կ'ամփոփէր եւ կը համադրէր, գէշ գծագրող հրաշակեցին այն անձը որ թերեւս ամենէն հզօր գծագրութիւնն ունի այս դարաւերջին, եւ որովհետեւ հեռաւորութեան տպաւորութիւն մը, գաղափարի անմիւթականութիւն մը տալու համար՝ իր գոյները կը մեղմէր, կը մարեցնէր, կարծեցին որ գոյնի զգացում չունէր: Բայց 1861էն սկսեալ, հովը փոխուեցաւ, եւ յանկարծ երէկուան ծաղրուածը ամենէն փառաւորուած ու պանծացուած նկարիչներէն մէկը դարձաւ: Եւ որչափ ալ հիացումներէն շատը կեղծ ըլլային ու նորաձեւութեան մը բռնութենէն մղուած, վերջերը՝ բովանդակ բարիզեան քննադատութիւնը համաձայն էր Բիւվիսը ֆրանսական արդի նկարչութեան պարծանքներէն մէկը համարելու:

Լրագրական փառքէն զատ, պաշտօնական փառքը ճանչցաւ Բիւվիս. Շան-ար-Մասոսի սալոնին նախագահն էր. եւ կառավարութիւնը Բարիզի Օրէլ Տր Վիլին, Բանթէոնին եւ գաւառի ուրիշ շէնքերու համար՝ որմնանկարներ յանձնարարեց իրեն: Այն գործերը զոր յօրինեց այդ հանրային հաստատութեանց պատերը զարդարելու համար, տեխնաքիփ արուեստին ամենէն վեհ հրաշակերտներուն կարգը կը մտնեն: Նուիրակալ անտառը (Լիոն), Վիքթօր Հիւկոյի պատկուանք Մուսաներէն (Բարիզ՝ Օրէլ Տր Վիլը), Մարդկային փառաբանութեան համապատասխան (Սուպոն), եւ մանաւանդ Մրբուհի Ժեկըվիեյի պատկուանքները (Բանթէոն), հանդարտ ու խորին ուսումնասիրութեան, հզօր համադրութեան, ազնիւ ու պայծառ ներշնչման, պարզ, ներդաշնակ, ամուր շինուածքի էջեր են, ուր այս ժա-

մանակին ամենէն բարձր հոգիներէն մէկը կ'արտայայտուի՝ ամենէն զիտակից, հասուն ու մաքուր ձեւով : Եւ իտալական հրաշակերտներուն առջեւ կազմուած այդ միտքը խորապէս Ֆրանսացի կը յայտնէ ինքզինքը՝ այն կուռ ու յստակ տրամաբանութեամբ որով իր նկարները կը կառուցանէ, այն զոյներու սքողեալ փափկութեամբ որով իր տեսարանները, իրականութեամբ տոգորուն ըլլալով հանգերձ, դաղափարին միջնորդութիւն մէջ անցնել կը թուին, եւ այն երկրի դած խանդաղատանքով զոր դրած է իր երկրին յատկանշական բնանկարներն ու իր ցեղին գլխաւոր տիպարները իրենց էական, հիմնական գծերով կտաւին վրայ սեւեռելու :

Իր անկախ ու ազնուական հոգին զինքը միշտ հեռու պահեց ամբոխէն, արհամարհում հանրային կարծիքին, ինք իր մէջ ամբիօրուած, հաւատարիմ իր իտէալին, ապրելով միմիայն Արուեստին համար, ներողամիտ սակայն ու բարի՝ ամենուն, սկսնակներուն մանաւանդ ժուժկալ ու հանդարտ կեանք մը, հաւասարակշիռ առողջութիւն մը, հզօր ու պայծառ խառնուածք մը՝ իրեն կարելի դարձուցին հսկայական աշխատութեամբ մը ծայրէ ծայր բեռնաւոր զոյութիւն մը : Առողջութեանց, տաղանայներու, իրարանցումներու մէջ, ինքը մնաց անսասան՝ գեղեցկութեան գաղափարին յառած . Արուեստին վերայ իր պաշտամունքը չխախտեցաւ երբեք . հաւատաց մարդկային ճիգին մեծութեանն ու բեղմնաւորութեանը, եւ իր գործը Քաղաքակրթութեան գովքն է եւ երգ մը բնութեան մէջ տարածուած Գեղեցկին ի պատիւ : Իր հանձարը խաղաղ ու բնական վերելքով մը ընթացաւ : Իր վերջնութեւր գործը, Մուսակերտ որ Հաննարը կը ծափահարէն, զոր Պոսթոնի ամբիթատունին համար յօրինեց, այն անպատում գեղեցկութեամբը կը ցոլար՝ զոր կատարները միայն ունին :

Քանդաքուղէններու պատմական տոհմէն կին մը, հիացական տարփանքէ մը մղուած, իրեն հետ ամուսնացած էր վերջին տարիներուն . ահոր մահը խորտակեց զինքը : Ու մեռաւ, վերջինը ձեռքը կ'ուզէր աւարտել Բանթէնին համար՝ Մրբուհի Ժեկերլիի պատմութեան երկրորդ մասը . մահէն քիչ առաջ բժիշկը կանչեց եւ տիրաբար պահանջեց որ ճշմարտութիւնը յայտնուի իրեն . բժիշկը կատարեց անոր խնդիրքը : Եւ գիտնալով որ շաբաթ մը ունէր ապրելու, Բիւլլիս իր վերջին ութ օրերը անցուց, ամբողջ կեանքը զաստակին մէջ ժողված, ճրգ-

նելով աւարտել այն գործը որ իր ամենէն սիրականն էր, եւ որ իր կտակը պիտի ըլլար :

\* \* \*

Նոյնչափ ազնիւ կեանք մը, նոյնպէս բարձր արուեստ մըն է որ կ'անհետանայ՝ Սթէֆան Մալաուէի մահով : Բիւլլիսն տարբեր՝ իր տաղանդին շեշտովն ու մտքին կազմուածքով, Մալաուէ անոր եղբայրն է հոգեւոյ վեհութեամբ, այն անշահախնդիր եւ մաքուր պաշտամունքով զոր ունեցաւ Գաղափարին համար, այն անկախ եւ արի ըմբռնումով որով տեսաւ կեանքն ու արուեստը : Բիւլլիս պարզ, հանդարտ, ներդաշնակ, վեհափառ հոգի մըն էր . Մալաուէ կընձոտ միտք մըն էր, չարչրկուած ու նրբամուր Բայց իր գործն ալ համադրութիւն մըն է, եւ իր կընձիոր՝ ծայրայեղ տրամաբանութեան մը հետեւանքը : Միայն թէ, մինչդեռ Բիւլլիսն եղանակն էր իրերուն պարզացումը, Մալաուէին եղանակը եղաւ իրերուն խտացումը . Բիւլլիսն գործերը գաղափարի մերկութիւններ էին . Մալաուէին քերթուածները գաղափարի իսկութիւններ եղան : Մալաուէ շարունակած է Պոսթոնը, ուղած է աւելի բարակ խտացման մը տանիլ բանաստեղծութիւնը, եւ երբեմն հասած է այնպիսի ծայրայեղ սեղմութեան մը՝ ուր սողը այլ եւս առեղծուածի ձեւ կ'առնէ եւ անբեռնելի կամ գոնէ խրթին կը դառնայ հարեւանցի ընթերցողներուն :

Ծաղրանքը անպակաս եղաւ Մալաուէին շուրջը : Զինքը անթափանցելի մողի մը տեղ զրին : Յանցանքը Մալաուէինը չէր անշուշտ . իր միտքը, բնականօրէն, այդ մանուածները շինած, այդ գալարուած ու ինք իր վրայ փաթթուած ձեւին հասած էր : Կ'ըսեն թէ կը մտածէր ու կը խօսէր՝ այնպէս ինչպէս գրած է : Կ'ուզէր մարդկային բառերուն տալ նոր իմաստներ, եւ իւրաքանչիւր բառի մէջ մէկէ աւելի զգայութիւններ սզուցնել : Գործը զոր կը թողու շատ հակիրճ է, բանաստեղծութեանց հատոր մը, արձակ քերթուածներ (էջեր), խորհրդածութեանց գիրք մը (Բանդագուշակ), եւ հոս ու հոն ցանուցի սակաւաթիւ յօդուածներ : Կ'երեւայ թէ ինքն այդ բոլորը կը նկատէր իբրեւ փորձեր ու հրահանգներ, եւ կը պատրաստէր իր առանձնութեանը մէջ՝ գիրք մը, որ իր մտքին ամբողջական պտուղը պիտի ըլլար, եւ որուն կ'աշխատէր տարիներէ ի վեր, տեսակ մը նոր Ֆանուս : Մահը յանկարծակի վրան հասաւ, եւ կը


վախցուի որ զայն անաւարտ թողած ըլլայ: Սակայն, իր մէկ քանի ջերթուածները, — ոսկի բաժակներ որոնց մէջ ախեղերքներ կան խտացած — կը բաւեն իր անունը բանաստեղծութեան ազամանդեայ էջին մէջ արձանագրելու:

Մալաոմէ ապրեցաւ քաջուած, խրոխտ աղքատութեան մը մէջ: Երբեք չզիջաւ իր տաղանդը լղրճել՝ ամբոխին հաճելի ծամածուծիւններ աննելով: Անգլիերէնի դասեր տալով ապրուստը հանեց, եւ պարապ ժամերը նուիրեց իր երազը քանդակելու: Իր մեծ հմտութիւնը, իր անձին ազնուական շնորհը, իր խօսակցութեանը ներհուն ու բարձր հրապոյրը՝ իր շուրջը խմբեցին ներկայ գրական սերունդին ամենէն նուրը անդամները. եւ դազաղին շուրջը, ամենքը համաձայնեցան խոստովանելու թէ Մալաոմէ կարեւոր մաս մը ունեցած էր իրենց մտքին ու ճաշակին կազմաւորման մէջ: Իրմէ շատ տարբեր տաղանդներ, Հանրի աղ Ռէնէիէ, Բիէռ Լուիս, Վիքթոր Մաուկոիզ, Վիէլէ-Կոիֆէն, Իրենց ճամբան գտած են անոր զիւթական խօսակցութեանը մէջ: Եւ երբ Վէոյէն մեռաւ, ու տղայական փափաքը յայտնուեցաւ բանաստեղծներու իշխան մը անուանելու, նոր գրողները միաձայն իշխան հռչակեցին Մալաոմէն, որ արդէն, առանց քուէարկութեան, իշխան մըն էր բանաստեղծութեան աշխարհին մէջ, ուր իշխան մը չկայ, այլ իշխաններ:

\* \* \*

Այսօր, աւանդութիւնը շարունակելով, Մալաոմէին յաջորդ ընտրեցին Լէոն Տիէռքը: Նոր իշխանը, նմանապէս ասող աղմուկի, ամբոխի եւ ձեւակերպութեան, արհամարհոտ ժպիտով մը՝ գրեթէ բոնի՝ ընդունեցաւ իրեն բերուած տիտղոսը: Տիէռքս, Ռէիւնիոնի կղզիին մէջ ծնած՝ ինչպէս Լըքոնդ աղ Լիլը, տաղանդի եւ հոգւոյ հանգիտութիւններ ունի Բարբարոս ֆերթաւածներու հեղինակին հետ: Անոր պէս, իր մանկութիւնն անցուցած՝ արեւադարձային հրակայ, հարուստ, հրավառ ու ջախջախիչ բնութեան մը ծոցը, անոր պէս տարբերուն վայրագ ու մեծաշուք պայքարին հանդիսատես եւ կեանքին անգթութեանը համոզուած, անոր պէս խառնածին, երակներուն մէջ կրելով վրդովիչ միացումը Արեւելքի մեղկ ու սրտում հոգւոյն եւ Արեւմուտքի ըմբոստ ու պայծառ իմացականութեան, Տիէռքս ֆրանսական բանաստեղծութեան ամենէն խորին, ամենէն ցաւազին էջերէն մէկը

գրած է: Լըքոնդ աղ Լիլ երգած էր բնական ուժերուն անապորոյն միօրինակութիւնը, ախեղերական գոյութեան բարբարոս ու ցուրտ տրամաբանութիւնը, մարդկային ճակատագրին արգահատելի զաղփաղփութիւնը, եւ ոչ ոք երբեք հասած է արհամարհոտ յուսահատութեան, դաժան ու գոռոզ ցաւի այն զօրութեանը զոր Կայենի բանաստեղծը թափեց իր գործին մէջ:



ԼԷՈՆ ՏԻԷՌԿՍ  
(Revue des Beaux-Artsէն առնուած)

Լէոն Տիէռքս Լըքոնդ աղ Լիլ մըն է, նոյնչափ յուսահատ, բայց աւելի փափուկ, գթութեամբ քաղցրացած, աւելի թոյլ ու օրօրուն իր երգին մէջ, մեկամաղձութեան երաժշտութեամբը գինով, իր աղաղակին տալով հնչիւն մը որ աւելի ողբ է քան անէծք:

2.



ԾԱՂԻԿՆԵՐԸ



Նախածագ տուրնջեան հինաւուրց կապոյտին ոսկի ձիւնակոյտերէն — Եւ աստղերուն յաւիտենական ձիւնէն — Դուն ատենով անջատեցիր մեծ բաժակները — Դեռ երիտասարդ եւ աղէտքներէ տակաւին կոյս երկրին համար:

Շէկ հիրիկը, նրբավիզ կարապներուն հետ, — Եւ աքսորուած հոգիներուն աստուածային

այն դափնին — Կարմիր ինչպէս սերոքին մաքուր ոտնամատը — Չոր կը շիկնեցնէ կոխուած արշալոյսներուն ամօթխածութիւնը .

Սմբուլը , եւ քնքափայլ մրտենին , — Ուկնոջ մարմնոյն հանգունակ , վարդը — Անգութ , ջինջ պարտէզին ծաղկեալ Հերովդիազան , — Ա՛յն զոր վայրի ու պայծառ արիւն մը կ'ոտոզէ :

Եւ հեծկլտացող ճերմակութիւնը յօրինեցիր շուշաններուն , — Որ , թաւալելով հառաչներու հովտի մը վրայէն որուն հազիւ կը քսուի , — Տփուռնած հորիզոններուն ծաւի խունկին մէջէն — Կը բարձրանայ՝ երազոտ՝ դէպի լուսինը որ կուլայ :

Ո՛վ սաննա ծնծղաներով ու բուրվաններով — Ո՛վ Տիրամայր , ո՛վ սաննա մեր լիմբոսին պարտէզէն . — Եւ թող արձագանգն աւարտի երկնային իրիկուններուն մէջ , — Զմայլա՛նք նայուածքներուն , փողփողո՛ւմ լուսապսակներուն .

Ո՛վ Մայր , որ ստեղծեցիր , քու արդար ու հզօր ծոցէդ — Բաժակներ որոնք ապագայ սրբուակը կը ճօճեն , — Մեծ ծաղիկներ , եւ բալասան Մահը — Խոնջ բանաստեղծին համար զոր կեանքը կը նքոզէ :

ՍԹԷՑԱՆ ՄԱԼԱՌՄԷ

ՂԱԶԱՐՈՍ

Յիսուսի ձայնն առնելուն , Ղազարոս արթնցաւ . — Դունատ, ելաւ մութին մէջ կանգնեցաւ . — Դուրս ցատքեց իր մեռելական խանձարուքին մէջ սրսփալով , — Յետոյ , շիտակ՝ դէմն ելած կողմը , խոհուն ու մինակ , քալեց դնաց :

Խոհուն ու մինակ, անկէց ի վեր քալեց քաղաքին մէջ , — Կարծես մէկը փնտռելով զոր չէր գտներ , — Եւ ամենուրեք՝ իր ամէն մէկ քայլին՝ հանդիպելով — Կեանքի իրերուն, ըստրուկ խուժանին :

Իր ձակտին տակ որ կը շողար մեռելներու գալկութեամբը — աչքերը փայլակ չէին արձակեր . եւ բիբերը , — Կարծես յաւերժական փողփողումները վերջելով , — Դէպ ի դուրս նայելու անկարող կը թուէին :

Կ'երթար տղու պէս դանդաչկոտ , դառնատեսիլ — Ինչպէս յիմար մը Ամբոին անոր առջեւը կը ճեղքուէր : — Ոչ ոք համարձակելով անոր խօսք ուղղել , կը թափառէր ան ըստ բաղդի , — Ինչպէս մարդ մը որ վատառողջ օդի մը մէջ կը խեղդուի :

Ա՛լ ոչինչ հասկնալով երկրիս անարդ — Բըզղիւնէն , իր անպատում երազին մէջ խորասոյզ , — Ինքն իսկ իր ահաւոր գաղտնիքէն զարհուրած , — Կուգար ու կը մեկնէր անխօսուկ :

Երբեմն կը սարսռար , կարծես տենդէ բրնուած , — Եւ որպէս թէ խօսիլ ուզէր , ձեռքը կ'երկնցնէր . — Բայց անտես ձեռք մը իր բերնին վրայ կը կասեցնէր — Վերջին վաղորդայնին անձանօթ բառը :

Այն ատեն , Բեթանիոյ մէջ , ամէն տեղ , երկտասարդներն ու ծերերը — Վախցան այդ մարդէն . ան կ'անցնէր խոհուն ու մինակ . — Եւ ամենէն աներկիւղին երակներուն մէջ արիւնը կը սառէր , — Տարտամ արհաւիրքին առջեւ որ կը լողար անոր աչքերուն մէջ :

Ա՛խ , ո՛վ պիտի ըսէ երբեք քու տարօրինակ չարչարանքդ , — Դո՛ւն որ ետ դարձար դերեզմանէն ուր ամէնքը մնացին , — Որ կրկին ապրեցար , քաղաքներուն մէջ քաշկռտելով — Պատանքդ՝ խարազի մը պէս մէջքիդ փաթթուած :

Տփո՛յն յարուցեալ , զոր որդերը խածեր էին , — Կրնայի՞ր նորէն դառնալ այս աշխարհիս հոգերուն , — Ո՛վ դուն , որ քու խորին ապշութեանդ մէջ՝ կը բերէիր — Գիտութիւնը որ արգիլուած է անյազ տիեզերքին :

Հազիւ թէ մահն իր որսը կեանքին դարձուց , — Դուն նորէն մութին մէջ մտար , խորհրդաւոր ուրուական , — Մոլեղին ժողովուրդներուն մէջէն հանդարտ անցնելով , — Եւ այլ եւս անգիտակ անոնց ցաւին ու խնտումին :

Բու երկրորդ կեանքիդ մէջ , անզգայ եւ անբարբառ , — Անոնց մօտ անհետ յիշատակ մը թողուցիր միայն — Երկո՛ւ անգամ ուրեմն կրեցիր զգեանող զրկապնդումը — Դառնալու համար երկնակապոյտին որ դէպի քեզ կը վերախուժէր :

— Օ՛հ , քանի՛ քանի անգամ , այն ժամուն ուր ստուերը միջոցը կը լեցընէ , — Հեռու՝ ապրողներէն , երկնքին օսկի խորքին վրայ ցցելով — Բու մեծ կերպարանդ դէպի Անեղը բազկատարած , — Անունը կանչելով անցնող յետամնաց հրեշտակին ,

Գանի՛ անգամ քեզ տեսան թաւ խոտերուն մէջ , — Մինակ ու խոհուն , գերեզմաննոցներուն շուրջը յածիլ , — Նախանձելով բոլոր այն մեռելներուն որոնք իրենց քարէ անկողնին մէջ — Օր մը պառկած էին ա՛լ չելլելու համար :

ԼԷՈՆ ՏԻԷՌՔՍ



ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

**ՀԱՅԵՐԸ Ի ԲԱՆՔԻՉ .** — Գրական եւ երաժշտական երեկոյթը զոր Բարիզի Հայ Ուսանողաց Միութիւնը կազմակերպած էր՝ Խաչատուր Աբովեանի մահուան յիսնամեակին առթիւ, տեղի ունեցաւ Նոյ. 5ին, Իւնիոն Գոթֆրիտի սրահին մէջ, մեծ յաջողութեամբ : Ուսանողները ոչ մէկ ջանք, ոչ մէկ խնամք խնայած չէին այս հայրենասիրական ու գրական երեկոյթին տալու համար այն բոլոր փայլը որ հարկաւոր էր :

Մրահին ճակատը դրուած էր Աբովեանի կենդանագիրը՝ արուեստագարդ շրջանակի մը մէջ :

Երիտասարդներու խումբ մը երգեց ազգային չորս երգեր, Մայր Արախի, Ի թիւր ձայնից, Թեղոյ հիւսնաց եւ Երբոր բացուիս : Պ. Յ. Չամչեան արտասանեց, յուզեալ շէշտերով, Պէշիքիաշեանի Բաջորդոյն քաղումը, եւ Պ. Պ. Քէրէսթէճեան՝ Դուրեանի Իդիւս առ Հայաստանը :

Օր. Պապայեան, ծանօթ երգչուհին, երգեց Մանէի Սիսէն եւ Վէրտիի Թրալիսրայէն երկու կտոր, եւ Պ. Եղիազարեանց՝ Ռէյէրի Սիկիւռէն կտոր մը եւ Չայն տուր ո՛վ ծովակը . երկուքն ալ ջերմապէս ծափահարուեցան եւ հրաւիրուեցան կրկնել իրենց երգը :

Օր. Զուարթ Պէգիրճեան իր ճշմարիտ արուեստագէտի հոգին ու պատրաստուած գերասանուհւոյ յատկութիւնները ցոյց տուաւ՝ հայերէն արտասանութեամբ մը :

Վահրամ Սվաճեան զարկաւ Ռիւպէնշէյնի մէկ Ֆանթեզիան, Տվորչաքի Լեժանսը եւ իր լը Պեոժե հեղինակութիւնը . հասարակութիւնը, հիացմամբ յաիշտակուած, զինքը մէկ քանի անգամ ի տես կոչեց. եւ ստիպուեցաւ զարնել ուրիշ կտոր մըն ալ, իր ամենասիրուն յա Միւզգիթը :

Արշակ Զօպանեան վերլուծեց Խաչատուր Աբովեանի կեանքն ու գործը, եւ կարգաց Վերջ Հայաստանիին ամենէն մորմոքիչ էջերէն մէկ քանին որոնք խորին սպաւորութիւն յառաջ բերին ունկնդիրներուն վրայ :

Պ. Գ. Գալֆայեան, երիտասարդ երաժիշտ մը որ զեռ նոր սկսած է ուսումնասիրել իր արուեստը, բայց որ առջի քայլէն իսկատիպ տաղանդի մը ապացոյցները կուտայ, երգեց իր հեղինակած կտորներէն երկուքը, Օրօրը եւ լը Սուռնէն :

Պ. Մ. Միհրդատեանց ի վեր հանեց, ատենա-

բանութեամբ մը, այն փայլուն արդիւնքները զոր Բարիզի հայ ուսանողութիւնը տուաւ վերջերս եւ բացատրեց կարեւոր դերը զոր ուսանողութիւնը պէտք է կատարէ ազգին բարոյական զարգացման գործին մէջ :

Հ. Սուքիաս Պարոնեան որ կը նախագահէր երեկոյթին, խրատուական խօսքեր ուղղեց ուսանողութեան, եւ Պ. Յ. Իսքէնտէր հանդէսը փակեց սիրուն բանաստեղծութեամբ մը ուր կը գնահատէր եւ կը ներբողէր Բարիզի հայ ուսանողներուն լուրջ, արդիւնաւոր եւ իրապէս ազգասէր գործունէութիւնը :

Հասարակութիւնը մեկնեցաւ խանդավառ սպաւորութեամբ մը այս գեղեցիկ հանդէսէն որ ոչ միայն ազգային տօնի մը ջերմութիւնն ունեցաւ, այլ միանգամայն փայլը ճշմարիտ բարիքեան երեկոյթի մը՝ զուտ հայ ուժերով կազմուած :

Ուրախութեամբ կ'իմանանք թէ Բարիզի հայ գաղթականութիւնը որոշած է հանգանակութիւն մը բանայ եւ գումար մը ձեւացնել որով Ուսանողական Միութիւնը կարենայ վերականգնել իր մատենադարան-ժողովատեղին, որ՝ այս անգամ ամուր հիմերու վրայ հաստատուած՝ ազգային եւ մտաւորական կեանքի կեդրոն մը պիտի ըլլայ Բարիզի մէջ :

— Վահրամ Սվաճեան հրաւիրուեցաւ Նոյ. 6ին, Բարիզի ազնուապետական բարձրագոյն ընկերութեան վերաբերող մարքիզուհի տը Սէն-Բոլի մէկ ընտանեկան ցերեկոյթին, ուր նուազեց իր մէկ քանի կտորները՝ ջերմազին յաջողութեամբ : — Նոյ. 15ին մասնակցեցաւ մեծ նուագահանդէսի մը որ արուեստը Օթէլ Բիցի սրահին մէջ՝ Նորին Արքայական Բարձրութիւն Ինֆանդա Եւլալիա Իշխանուհւոյն հովանաւորութեամբ, եւ յաղթական ընդունելութիւն մը գտաւ բարիքեան ամենամուրը ու սոհմիկ ունկնդիրներու առջեւ : — Նոյն գիշեր գոնուեցաւ զարձեալ մարքիզուհի տը Սէն-Բոլի մէկ երեկոյթին, ուր ներկայ էին Սէն-Սանս, Տիէմէո, Բազէլլա, Բոլ Հէոլիէօ, Սլալէո Վանտալ, եւն :

— Բարիզի Հայ գաղթականութեան ամենէն համակրելի եւ տաղանդաւոր անդամներէն մէկը, Տր. Մ. Էլմասեան, իր մանրէարանական ուսումնասիրութիւնները յառաջ կը տանի Բասթօնեան Հաստատութեան մէջ, ուր մտած է 95էն ի վեր : Քիչ մը ժամանակ իրբեւ աշակերտ հնարիչիւն մէջ պատրաստուելէ յետոյ, Պ. Էլմասեան ընդունուեցաւ տնօրէն Պ. Ռուլին կողմէ իրբեւ աշխատակից՝ Հաստատութեան ուսում-

նապետներէն մէկուն Պ. Մուռաքսի . այդ անձին հետ գործակցութեամբ , կ'աշխատի շերմամիղութեան բուժման վրայ (la sérothérapie de la gonorrhée), եւ արդէն հրատարակած են ախտաբանական ընտելութեան ուսումնասիրութիւն մը միջրոպական թոխսիներու մասին , եւ պիտի հրատարակեն ընդհուպ ուրիշ մէկ քանի նմանորինակ աշխատութիւններ : Բացի գործակցաբար ուսումնասիրութիւններէ , Պ. Էլմասեան իր անհատական խուզարկութիւնները կեդրոնացուցած է կապուտ-հազ (coqueluche) հիւանդութեան պատիւը գտնելու : Կը մաղթենք որ մեր բարեկամն ու աշխատակիցը յաջողէր հասնիլ իր նպատակին եւ հայ անուն մը աւելցնէր շարքին մէջ այն գիտնականներուն որոնք մարդկութիւնը կը զինեն Հիւանդութիւն բնաւորին դէմ :

— Պ. Օկիւսթ Բառիէն որուն ուսումնասիրութիւնները ծանօթ են Մոլսէս Խորենացոյ պատմութեան վրայ , պիտի սկսի Դեկտ. 12 ի երկուշաբթի օրը , Արեւելեան կենդանի լեզուներու վարժարանին մէջ , դասախօսութեանց շարք մը հին Հայաստանի աշխարհագրութեան ու պատմութեան վրայ : Այսպիսի դասախօսութիւն մը եւրոպայի մէջ առաջին անգամն է որ կը հիմնուի . եւ շահեկան պիտի ըլլայ տեսնել թէ ի՞նչպէս հմուտ դասախօսը , որ մինչեւ հիմա սխալներ քանդելով դրաղած էր , պիտի վերաշինէ Հայոց պատմութիւն մը՝ գիտական հողի մը վրայ զետեղուած :

Մեր աշխատակից եւ յայտնի բանասէր Պ. Կարապետ Բասմաշեան այդ դասախօսութեանց մասին յօդուած մը պիտի նուիրէ Անահիտի յառաջիկայ թիւին մէջ :

— Պ. Յակոբ Պոյաճեան , ծանօթ թուարան եւ ուսուցիչը , Բարիզ կը գտնուի այս միջոցիս : Եկած է տպագրել տալու իր մէկ ֆրանսերէն ինքնուրոյն աշխատութիւնը , որուն նպատակն է տարրական ուսողութեամբ յուծել տալ այն բոլոր խնդիրները որ ճարտարապետներու գործառնութեանց համար հարկաւոր են , եւ որ մինչեւ հիմա բարձրագոյն ուսողութեամբ կամ կռաֆիլով կը լուծուէին միայն : Պ. Պոյաճեանի ձեռնարկը մեծապէս պիտի զիւրացնէ ճարտարապետութեան պատրաստողներու աշխատութիւնը , եւ բարձր գիտութեան խրթնութիւններէն պիտի թեթեւցնէ գեղարուեստի այդ ճիւղը ուր գեղեցկագիտական զգացման վարդացումը կաշկանդուած էր հաշիւին կնճռոտ դժուարութիւններով : Պ. Պոյաճեանի գործը արդէն սպաւորութեան յանձնուած է եւ պիտի հրատարակ

կլլէ քանի մը ամիսէն , հետեւեալ տիտղոսով՝ Manuel du bachelier constructeur ou Traité des mathématiques élémentaires appliquées aux constructions civiles.

Յաջողութիւն կը մաղթենք եւ կը յուսանք մեր յարգոյ բարեկամին նոր ու օգտակար ձեռնարկին :

**ՀԱՅ ԲԱՐՅՐԱՐՆԵՐ.** — Արտասահմանի թերթերուն մէջ կը կարդանք թէ Պ. Իսահակ Ժամհարեան , Մոսկուաքնակ ծանօթ դրամատէրը , իր ծննդավայրին Շուշիի մէջ հաստատած է հիւանդանոց մը , որուն յատկացուցած է 110,000 ռուպլիի դրամադուլիս մը : Այս բարեգործական հիմնարկութիւնը նոր օղակ մը կուգայ աւելցնել երկայն շղթային զոր Պ. Իսահակ Ժամհարեան եւ իր եղբայրները հիւսած են ամէն տեսակ ազգօգուտ նուիրատուութիւններով : Աղքատ ուսանողներու օգնելու , եւ մանաւանդ վերջին դէպքերէն ի վեր՝ թրքահայ բազմաթիւ որբերու ապրուստն ապահովելու համար , կ'ըսուի թէ 18,000 օսմ. ոսկի նուիրած են . եւ կը կարծուի թէ Տաթևի վանքն ալ պիտի վերաշինել տան :

Պ. Իսահակ Ժամհարեան մասնաւորապէս սիրելի դարձուցած է իր անունը դրասէրի առատաձեռնութիւններով , որոնք հիմա չափազանց սակաւադէպ են մեր հարուստներուն քով : Իր ծախքովն է որ հրատարակուած է Արովեանի երկասիրութեանց նոր ու գեղեցիկ տպագրութիւնը , որ հեղինակին գործերուն մէկ կարեւոր մասը կը պարունակէ , եւ զոր կը յուսանք ամբողջացած տեսնել երկրորդ հատորով մը , ուր ամփոփուին Արովեանի բոլոր անտիպ ձեռագիրները , նամակները , յիշատակարանը , գրաբար ու աշխարհաբար գրուած քնները , գրական , ցեղագրական , մանկավարժական աշխատութիւնները , օտարներէ անոր մասին գրուած բոլոր հատուածները , որպէս զի ոչինչ կորսուի այդ մեծ Հայուն գործէն , որուն մէջ ամէն բան շահեկան է :

**ՄՈՒՐՃԻ ՏՍՄՆԱՄԵԱԿԸ.** — Ռուսահայոց միակ ամսաթերթը , Մուրճը , իր տասնամեակը կը տօնէ այս միջոցին : Նոյեմբերի թիւը արտասովոր հանգիստաւորութիւն մը պիտի ընծայէ : Մեր յառաջիկայ թիւով պիտի տանք ուրուագիծ մը այդ կարեւոր պարբերականին տասնամեայ գրական գործունէութեան վրայ : Առ այժմ կը փութանք մեր շնորհաւորութիւններն ուղղել

մեր պաշտօնակցին , եւ մաղթել բազմաթիւ տաննամեակներ :

**ՐԱՅՅԻՒ ՄԱՀԱՐՁԱՆԸ.** — Մուրճի մէջ կը կարգանք թէ Սեպտեմբեր 27ի, կիրակի օրը , թիֆլիս , Հայոց Խոջեվանքի գերեզմաննոցին մէջ , ուր թաղուած է Րաֆֆի , տեղի ունեցաւ Կայծերու հեղինակին մահարձանին բացումը : Հանդիսաւոր պատարագէ մը յետոյ՝ որ կատարուեցաւ Խոջեվանքի եկեղեցւոյն մէջ , եկեղեցական դասը , թեմին առաջնորդին եւ պատարագող քահանային հետեւելով , ուղղուեցաւ թափորով դէպի Րաֆֆիի գերեզմանը , իրենց հետ ունենալով մահարձանի յանձնախմբին անդամները եւ հազար հոգիի մօտ բազմութիւն : Հողեհանգիստ կատարուեցաւ այնտեղ , եւ հանդէսը վերջացաւ ատով : Մահարձանը , չափազանց պարզ , կը բաղկանայ մոխրագոյն մարմարէ , խորանարդաձեւ պատուանդանէ մը , եւ անոր վրայ կանգնած ձերմակ մարմարէ սիւնէ մը՝ որուն ծայրը մարմարէ տաւիղ մը կը կանգնի : Այս նրկարագրութենէն կը գուշակենք որ անորոշ ու մերկ կոթող մը ըլլալու է այդ մահարձանը , զուրկ՝ հեղինակին խիզախ ու կրակոտ հոգին պատկերացնող ո եւ է զրոյմէ : Բայց խստապահանջ չըլլանք եւ շատանանք գոհունակութեամբ արձանագրելով այդ գեղեցիկ նորութիւնը որով հայ ժողովուրդը առաջին անգամ ըլլալով մահարձան կը կանգնէ իր մէկ գրագէտին վրայ :

**ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ**

**Գ. ՆՁՆԱՆ.** — Մեծն Պետրոսի յարաբերութիւնները Հայ ազգին հետ . — Ստուար հատոր մըն է ուր Պ. Նզեան հաւաքած է բոլոր վկայաթղթերը (հայերէն , ռուսերէն , ֆրանսերէն , լատիներէն) որոնք վերաբերութիւն ունին հայ ժողովրդին եւ Մեծն Պետրոսի միջեւ անցած բանակցութեանց՝ Պարսկական Հայաստանին Ռուսիոյ ձեռքն անցնելէ առաջ : Ընդարձակ ռուսերէն յառաջաբանի մը մէջ , Պ. Նզեան մանրամասն պատմութիւնը կ'ընէ Ռուսիոյ եւ հայ ժողովրդին յարաբերութեանց , ոչ միայն Մեծն Պետրոսի ատենը , այլ եւ անկէջ ի վեր , մինչեւ արդի շրջանը : Աւելորդ է շեշտել կենսական կարեւորութիւնը այս հրատարակութեան որ ճիշդ իր ժամուն երեւան կուգայ եւ որ նոյն իսկ

նշան մը կրնայ համարուիլ : Անահիթի մօտակայ թիւերէն մէկուն մէջ , մեր աշխատակից Բոօֆ. Ա. Մէյեէ քննական յօդուած մը պիտի նուիրէ այդ գրքին :

**ԳԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ**

Դէպքերը արտասովոր երազութիւն մը ստանալու վրայ են , եւ դարավերջը որ կը մօտենայ՝ կը թուի վերջին արարին փակումը հապճեպել մեծ թատերախաղին՝ որ երկայն ատենէ ի վեր կը հիւսուի ձգտուած պետութիւններուն միջեւ : Խաղը մէկ հակառակ կրկնութիւնն է հին աշխարհին կարեւորագոյն երեւոյթին . վաղընջական ատեններուն մէջ , Արեւելքը կուգար կը խուժէր Արեւմուտքին վրայ , իր բերած հզօր արիւնովը զայն կը նորոգէր ու կը ճոխացնէր . հիմա , Արեւմուտքն է որ դէպի զառամած ու թրմրած Արեւելքը կը խոյանայ եւ կ'ուզէ զայն թափանցել , իւրացնել ու վերակենդանացնել , — մինչեւ որ թերեւս Արեւմուտքը՝ իր կարգին՝ հանի անկման շրջանի մը , եւ Արեւելքի աղբերը , իրենց ուժին գիտակցութիւնը վերստացած , դարձեալ զան տարածուիլ եւրոպայի վրայ :

Ահա դար մըն է որ եւրոպան ուշադիր կը հետեւէր Ասիոյ գանդաղ քայքայումներուն , նայուածքը կը սեւեռէր Ափրիկէի փորձիչ նախականութիւններուն , ու պատեհ ժամուն սպասելով , իր ախորժակները կը սրուէին : Առաջին քայլը ճամբորդներն ու գիտնականներն առին , այդ խորհրդաւոր աշխարհներուն կեանքն ու գաղտնիքը երեւան հանելով , այնտեղ առաջնորդող ճամբան հարթելով՝ եւրոպական ուժերուն առջեւ : Յետոյ երկրախոյզներն ու միսիոնարները գացին այդ հինցած քաղաքակրթութեան կամ երկարատեւ վայրենութեան զանգուածներուն մէջ՝ եւրոպական գիտութիւնը , եւրոպական կրօնքը , եւրոպական գաղափարը տարածել : Եւ ահա այդ բարոյական աշխարհակալութիւններուն ետեւէն , քաղաքական եւրոպան կը սկսի իր բանակները դրկել ու նիւթական տիրապետումովը՝ սկսուած գործը կնքել :

Հնդկաստանը , եգիպտոսը , Անգլիացւոց ձեռքն են , եւ վաղը ամբողջ Ափրիկէն թերեւս անոնցը պիտի ըլլայ : Ռուսիա Հիւսիսային Ասիան ու Պարսկաստանէն մաս մը գրաւած է , կը սկսի Չինաստանէն կտորներ փրցնել , արդէն

խոժոռ կը նայի ճարտնին , ու Թուրքիան կլլելը իր քմահաճոյքէն կախուած է : Ֆրանսա Չինաստանի մէջ կտորուանքներ ունի , ու Ափրիկէէն չերտ մը . Գերմանիան ալ ձեռքը կ'երկնցնէ հիմա , Չինաստանէն մաս կը պահանջէ , Թուրքոյ մէջ տեղաւորուել կը ջանայ . եւ ահա նոյն իսկ Ամերիկան , որ մինչեւ հիմա տեսակ մը « անդիի աշխարհ » նկատուած էր , եւ որ իրապէս ուրիշ բան չէ բայց եթէ միւս կիսագունդին Եւրոպան , Եւրոպայի շարունակութիւնը Ատլանտեանով կտրուած , ահա Ամերիկան ալ կը խլըրտայ խոշոր շարժումով մը , մատուընները կ'երկնցնէ՝ հիմակուհիմա իրեն մօտիկ կղզիներու , սպասելով որ վաղը բազուկը տարածէ մինչեւ Ասիա :

Հսկայական պատահարներ կը պատրաստուին . տիեզերական զգրղումի մը երկարատեւ ու տաժանելի նաւակատիքին մէջ ենք . եւ գիտութեան բերած բոլոր հանգարտացումէն , մարդկային եղբայրութեան մեծ քարոզէն յետոյ զոր այնքան ազնիւ մտածողներ հնչեցուցին այս հակասական դարուն մէջ , բոլոր այն վեմ ջանքերէն յետոյ զոր գիտութիւնը , գրականութիւնը եւ գեղարուեստը թափեցին սահմանները ջնջելու եւ զէնքը մուսէնի առարկայ մը դարձնելու համար , ահա կը տեսնենք որ դիւանագիտութիւնը , դրամատէրներուն անկուշտ ծարաւէն մղուած , տիրապետելու նորանոր եւ առաւել քան երբեք մեծ տենչանքով մը կը գալարուի , ու կը զգանք հասունալը պատերազմներու ամենէն վիթխարիին , որ աշխարհս բովանդակ թատերաբեմ պիտի ունենայ : Անոր առաջին պայթումները արդէն տեղի ունեցան , եւ գուցէ տխուր հեգնութեամբ մը իրերու , ճիշդ այն պահուն ուր Չարը հրաւէր կը կարգայ խաղաղութեան , կուտակուած կրքերը յորդին ու յառաջ գայ յեղաշրջումը , որ աշխարհիս երեսը պիտի փոփոխէ :

\* \* \*

Երկու մեծ Ուժերը , որոնց միջեւ կը տաստանի երկրագունդին բազըր , Անգլիան ու Ռուսիան են՝ անտարակոյս : Այս մրցումը , որ յաւիտենական մրցումն է , խորհրդանշանական մեծութիւն մը կը ստանայ . Մովն ու Յամաքն են որ աշխարհի վրայ գերակշռութիւնը իրարու ձեռքէ կը քաշեն : Միւս բոլոր պետութիւնները երկու տիտաններուն լրացուցիչները կը թուին : Եւ այս պահուս , երկուքն ալ իրենց զօրութեան դազաթնակէտին կը հանին : Ռուսիա , Ֆրանսայի հետ

դաշնակցութենէն քաղելով դրամական զօրութիւնը որ իրեն կը պակսէր , ցամաքի պետութեանց անհերքելի միապետը կը դառնայ : Անգլիա , Ամերիկայի հետ համաձայնելով , բրիտանական պետութիւնը երկու հեռագունդերուն վրայ կը ծաւալէ , եւ իրապէս տէր կը դարձնէ անգլո-սաքսոն ուժը՝ աշխարհի բոլոր ծովերուն : Գերմանիա , որ Ֆրանքո-բրուսիական պատերազմէն յետոյ , յանկարծական մեծութիւն մը ստանալով՝ քառորդ դար մը , Եւրոպայի հզօրագոյն պետութիւնը դարձաւ եւ իր քաղաքականութիւնը Եւրոպայի ներքին խնդիրներու մէջ գերակշիռ բռնեց , այսօր նորէն կ'իջնէ երկրորդական դիրքի մը , շնորհիւ սխալ եւ ոճրագործ ընթացքին զոր ունեցաւ Արեւելեան խնդրոյն հանդէպ . հակառակ իր կամքին , ահա Կրետէն կ'ազատի , եւ արի կղզին կ'ազատի որովհետեւ այդ կէտին վրայ , Ռուսիա եւ Անգլիա համաձայն զտնուեցան : Աշխարհ կը սկսի նորէն զգալ որ իր երկու քաղաքական առանցքները Լոնտոնն ու Ս . Բէթէրսպուրկն են :

Լաւատես մտքերը թերեւս փափաքին երեւակայել որ Կրէտէի մէջ անցածը ամբողջ աշխարհիս մէջ կրնուի , թէ երկու մրցակիցները , խուսափելու համար զարհուրելի կործանարար բաղխումներէ , նախընտրեն դիւանագիտական խորհրդակցութիւններով համաձայնել , եւ խաղաղական միջոցներով յառաջ տանիլ բաժանման գործը : Բայց մեր դարը Հիւկոյինը չէ դժբաղդաբար որ Եւրոպայի Միացեալ-Նահանգները կ'երազէր , ոչ ալ Թուրքոյինը որ նոր Գրիստոսի մը ձայնը կը բարձրացնէ՝ զէնքերու շաչիւնին մէջ խզուած . մեր դարը Տարվինինն է , որ կեանքի պայքարին դրութիւնը ի վեր հանեց եւ զօրաւորագոյնին յաղթանակը բնութեան մեծագոյն օրէնքը հռչակեց : Եւ Անգլիա տրամադիր կը թուի , առաւել քան երբեք , գործով ապացուցանելու թէ իր մեծ գիտնականին դրութեանը հաւատարիմ հետեւողն է : Փաշտոյի խնդրոյն մէջ , ուր կրնար աւելի փափկութեամբ ու մարդավարի ձեւով , առանց դրացի մեծ ազգ մը վիրաւորելու , Հանթիոյի մը սխալովը յառաջ եկած ցաւալի կացութիւնը կարգադրել , Ալպիոնը սկզբնական պատերազմիկի վայրագ ձեւեր առաւ , ալապուճուկի աղաղակներ արձակեց Ֆրանսան սարսափեցնելու համար , եւ այնչափ բարձրաձայն որ Ֆրանսայէն հեռու ալ լսուի գոչիւնը . եւ իր նաւատորմիդը դեռ կը Փշայ , կը չչէ , կը միայ , աշխարհ կլլելու սպանալիքներով կը փրփրայ : Խորը վնասողին համար այդ

Փաշտոտայի խնդիրն ալ նորէն Անգլիոյ եւ Ռուսիոյ մէջ անցած կռիւ մըն է Ֆրանսայի գլխուն վրայէն : Անգլիա կը զգացնէ Ռուսիոյ թէ Եգիպտոսը ի՛րն է , վերջնապէս , եւ Եգիպտոսի հետ Ափրիկէն ամբողջ : Գերմանիա, Աւրստրիա , Իտալիա՝ լռիկ կը դիտեն այս ամենը , առանց որոշում մը տալու , առանց մէկ կամ միւս կողմ հակելու , երեքն ալ արգէն ներքին վտանգներով խախուտ , եւ արտաքուստ՝ ստիպուած՝ երկու հզօր ախոյեաններուն զուլի ծնելու : Յոխորտ Գերմանիան որ երկու տարի առաջ Թրանսվալի խնդրոյն մէջ ձայնը կտրեց Անգլիոյ սպառնական յանդիմանութեան առջեւ , հիմա նոյն իսկ համաձայնութեան մը համակերպիլ կը թուի Թագուհւոյն կառավարութեան հետ , որ անշուշտ առեւտրական առաւելութիւններ կուտայ Գերմանիոյ , բայց որ Անգլիոյ քաղաքական զօրութիւնը աճեցնելու պիտի ծառայէ գլխաւորաբար : Լատին ազգերը կը յառաջանան իրենց նիւթական անկումին մէջ . Իտալիան ջախջախուեցաւ Պափիկներէն եւ , ներքնապէս փոտած ու քայքայուած , վտանգին մէջն է իր դաղթականութիւնները բոլորն ալ կորսնցնելու . Սպանիան կորակոր պարտուեցաւ Ամերիկայէն եւ մէկ հարուածով ձեռքէ հանեց Քուպան ու Փիլիպինները . եւ Ֆրանսան ահա որոշապէս կը տեսնէ իր ափրիկեան փառասիրութեանց սասանիլը հիմերէն՝ Անգլիոյ յառաջիակացութեան առջեւ : Լատին տարրին տկարացմամբը , անգլո-սաքսոն եւ սլաւ տարրերուն ուժը կը կրկնապատկուի , իրենց տիրապետման տննչանքը կը մտրակուի , ծրագրուած պարտմաններուն փութացումը կ'երագի , հետեւաբար մեծ ընդհարումներու , մեծ պայքարի մը հաւանականութիւնը կը սաստկանայ . Լորտ-քաղաքատին երեկոյթին ատենախօսութեանը մէջ , Սոլզպերի , առանց անուն տալու , յտակօրէն բացատրեց կացութիւնը . « Ոչ ոք կրնայ ուրանալ , կ'ըսէր , թէ Ամերիկայի երեւումը՝ ասիական ու թերեւս նաեւ եւրոպական զիւանագիտութեան ազդակներուն մէջ , ծանրակշիռ եւ լուրջ զէպք մըն է , որ չի կրնար խաղաղութեան շահերուն նպաստել , թէեւ կը կարծեմ թէ հաւանականաբար Մեծն-Բրիտանիոյ շահերուն նպաստաւոր պիտի ըլլայ . . . Այն տպաւորութիւնը ունինք թէ պատերազմի մը ծագման մղող պատճառներ կը շեշտուին ամէն կողմէ . կը տեսնէք ազգեր որոնց կառավարութիւնները այնքան յոռի են որ ա'լ անկարող են կանգուն մնալու , եւ թէ ո'չ զիրենք պաշտպանելու ուժն ունին ո'չ ալ իրենց

հպատակներուն սէրը : Այս բանը կը տեսնէք ամէն կողմ , եւ միանգամայն , այն պահուն ուր այս երեւոյթը կը յայտնուի , կը տեսնէք զրացիներ , մղուած այս կամ այն շարժառիթով , կա'մ բարձր մարդասիրութեամբ եւ կա'մ իրենց համար պետութիւն մը ստեղծելու բնական փափաքով , միշտ պատրաստ կամ տրամադիր՝ իրարու հետ վիճելու թէ ո'վ պիտի ըլլայ իր դիրքէն ինչալու վրայ եզող ազգին ժառանգորդ »

Պատերազմի հաւանականութիւնն ու մերձաւորութիւնը փաստելով , Սոլզպերի կ'արդարացնէ սպառազինական փութկոտ ու խոշոր պատրաստութիւնները զոր Անգլիա կը շարունակէ յառաջ տանիլ . եւ Սոլզպերի յայտարարութիւնը կ'ուզողուի , ոչ թէ Ֆրանսայի , այլ Ռուսիոյ , եւ կ'ակնարկէ ոչ այնչափ Ափրիկեան հարցին որչափ Չինաստանի եւ ընդհանուր Տաճկաստանի խնդիրներուն : Երկու մեծ մրցակիցներուն մէջ է որ պիտի անցնի պայքարը , եւ այդ անկեալ պետութիւններուն բաժանման խնդրոյն վրայ : Ու ամբողջ անգլիական ազգը , միահաղոյն խոստովանութեամբ , ինքզինքը պատրաստ կը ցուցնէ պայքարին :

Ապագան պիտի յայտնէ պայքարին արդիւնքը , եւ թէ այդ անկարող ձեռքերու մէջ մնացած ասիական ինկած կայսրութիւններն ու ափրիկեան դեռ մանուկ անգիտակից աշխարհներ ի՛նչ չափով պիտի բաժնուին Ռուսին եւ Անգլո-սաքսոնին միջեւ , եւ թէ այդ բաժանման գործին մէջ գերման տարրը ի՛նչ դեր պիտի կատարէ եւ ի՛նչ մաս պիտի ունենայ : Մէկ քանի կէտերու վրայ բաղխումը անհրաժեշտ կը թուի որպէս զի խնդիրը լուծում գտնէ , մինչդեռ ուրիշ կէտերու մէջ արգէն լուծումը կ'որոշուի ինքնին , իրերու բնական հետեւանքով , առանց բիրտ պայքարի . Ափրիկէն , տրամաբանօրէն , բնականօրէն , կ'անգլիանայ , եւ Գերմանիայէն յետոյ որ Թրանսվալի առթիւ չէզոքութեան ստիպուեցաւ , ահա Ռուսիան ալ լուս կը մնայ Փաշտոտայի խնդրոյն մէջ , իր դաշնակից Ֆրանսան առանձին կը թողու Անգլիոյ զիմացը , հետեւաբար կ'ընդունի լռելեայն որ Անգլիան շարունակէ Ափրիկէի իւրացումը : Անգլիան ալ պիտի թողու թերեւս որ Ռուսիա , Ասիական Թուրքիոյ մէջ յառաջանայ՝ պայմանով անշուշտ որ անգլիական շահերը կարենան սլաշտպանուիլ . միւս կողմէն , տիրած բայց ա'լ համակերպիլ սկսող նայուածքով մը Անգլիա կը հետեւի Ռուսիոյ պատրաստութեանցը զէպի Ասիա , անդր-սիպերիական երկաթուղոյն կառուցմանը մասնաւորապէս , որ

Ասիոյ բանալին Ռուսիոյ ձեռքը կուտայ : Պայ-  
քարը Չինաստանի մէջ պիտի տեղի ունենայ եւ  
Հնդկաստանի վրայ , մինչեւ ուր կը տարածուի  
Ռուսիոյ աշխարհակալութեան ծրագիրը : Անգ-  
լիա , հիմակուհիմա իրեն նեցուկ ունի Օսյրա-  
գոյն Արեւելքի մէջ՝ Ճարոնը , Ասիոյ այդ առոյգ  
ու վերածնած պետութիւնը , եւ Չինաստանի  
մէջ երկու ուժերը դեռ կը համակշռեն . բայց  
Ռուսիա պատրաստուելու վրայ է տակաւին ,  
դեռ ճամբայ ունի հասնելու համար իր դերա-  
գոյն ընդլայնմանը . եւ երբ այդ հսկայ զանգը-  
ւածը , որուն մեծագոյն տկարութիւնը առաջ  
իր անշարժելի ու անկապակից խոչորութիւնն  
էր , կենդանանայ անտեսական հոգը կազմակեր-  
պութեամբ մը եւ հազորակցութեան արագ  
ցանցով մը միաւորուի , — գործ մը որ արդէն  
շատ յառաջ պիտի գնայ — անհնար է երեւակայել  
որ ո եւ է ուժ կարենայ զիմադրել Ռուսիային  
տիրական յառաջացմանը Չինաստանի մէջ , ու  
Թուրքիոյ մէջ , ու Պարսկաստանի վրայ , ու  
մինչեւ Հնդկաստան . բովանդակ Ասիան սահ-  
մանուած է մտնել ռուսական տիրապետութեան  
ներքեւ : Եւ Ափրիկեան պետութիւն մը ստեղ-  
ծելու ծրագիրը , զայն հիմակուրնէ ո եւ է  
մրցակցի անմատոյց դարձնելու որոշումը քիչ մը  
կը մատնէ թէ Անգլիա , կէս մը յուսահատ Հնդ-  
կաստանէն , որ իր գանձարանն էր , կ'ուզէ անոր  
համարժէքը ստեղծել Ափրիկէի մէջ , ուր անըս-  
պաս հարստութիւններ կան շահագործելիք :  
Կը մնայ գիտնալ թէ Ռուսիա , նոյն իսկ եթէ  
յաջողի այդ անսահման ծրագիրը ի կատար հա-  
նել , պիտի կարենայ , ցամաքը ամբողջ բռնելէ  
յետոյ , նաւահանգիստներն ալ գրաւել : Անգլիա-  
կան վաճառականութեան համար ատիկա կարե-  
ւոր հարուած մը պիտի ըլլար . եւ եթէ՛ անգլի-  
մադրելի զօրութեան մը առջեւ՝ ցամաքի սիրա-  
պետութենէն զրկուելու համակերպին , Անգլիացիք  
երբեք պիտի չհամակերպին Ասիոյ նաւահան-  
գիստները իրենց դէմ փակ տեսնելու պատահա-  
կանութեան . « Չինաստանի գալով , կ'ըսէր  
Չէմպլըրէյն իր Մանչէսթըրի երկրորդ ճառին  
մէջ , չեմ կարծիր որ հարկաւոր ըլլայ ուրիշ պե-  
տութեանց փառասէր ծրագիրներուն հակառա-  
կիւ , կը բաւէ որ Օսյրագոյն Արեւելքի մէջ  
Անգլիոյ նաւային կացութիւնը պահպանուի եւ  
սա մեծ սկզբունքը չխորուի թէ չինական վա-  
ճառանոցները պէտք է բաց մնան ամէն երկիր-  
ներու առեւարական մրցումին : »

Ուրեմն՝ վախճանին սկզբնաւորութեանը մէջ  
ենք , եւ հորիզոնը յղի է վճռական դէպքերով :  
Այն մեծ շրջաններէն մէկն է ուր երկրա-  
գունտը փետուր կը փոխէ : Գեղեցկագէտ մըտ-  
քերը պիտի տրամին տեսնելով մարդկային ցե-  
ղերու եւ երկիրներու հիմաւորաց պէսպիսու-  
թեանց անհետացումը , եւրոպական քաղա-  
քակրթութեան ոլորակին տակ բարձրու , տա-  
րազներու , ոգիներու զանազանութեան հար-  
թումը . բարոյագէտը պիտի ըմբոստանայ գու-  
շակելով այն ամբողջ մարդկային արիւնը որ պի-

տի կորսուի զիւանազրտական յղացումները ի-  
րականացնելու համար : Գիտութեան նայուած-  
քին առջեւ , առնք անխուսափելի երեւոյթներն  
են մարդկային բնաշրջութեան՝ որոնք տեղի  
կ'ունենան , արդիւնքները բնական ընտրողու-  
թեան անգութ օրէնքին որ կեանքը կը կազմէ :  
Բոլոր այս քայքայմանց ու կերպարանափո-  
թեանց մէջ , դիտուելիք կէտ մը , բարդաւածու-  
մն է ազգայնութեանց գաղափարին . հին բարբարոս  
լուծերուն փտումովը , եւրոպական խոշոր զօ-  
րութեանց մրցումին մէջտեղը , կաշկանդուած  
պզտիկ ցեղերը կը սթափին , ինքնութիւնն կը  
գտնեն , եւ նոր անհատներ կը ձեւացնեն . կէս  
գարէ ի վեր , Պուլկարիան , Ռուսմանիան , Մոն-  
թէնիլըն , Աերպիան , Յունաստանը իրենց ծը-  
նունդը կը պարտին մեծ մասամբ Ռուսիոյ եւ Անգ-  
լիոյ մրցումին : Ահա Կրետէն ալ կ'ազատի : Նոյն  
իսկ Հնդկաստանը , ուր ազգային ոգին հասուն-  
ցած է արդէն , Անգլիոյ եւ Ռուսիոյ բաղխումէն  
թերեւս օր մը ինքնուրոյն գոյութիւն մը ունե-  
նայ : Թերեւս աշխարհս դիմէ եւ համար ինք-  
նուրոյն ցեղերու տեսակ մը ընդհանուր դաշնակ-  
ցութեան , մէկ քանի եւրոպական մեծ տէրու-  
թեանց կեդրոնական վարչութեանը տակ : Եւ  
թերեւս իրարու ճարմանդուած ազատ ցեղերու  
այդ ընդարձակ ներդաշնակումը բերէ մարդկա-  
յին համաձայնութիւնը եւ խաղաղութիւնը զոր  
մտածողները երազեցին :

\* \* \*

Չինաստանի անդամատութիւնը սկսուած  
գործ մըն է արդէն : Եւ հաւանական կը թուի  
որ Տաճկաստանին ալ կերպարանափոխուած շատ  
հեռու չըլլայ : Հայերը իրենց բողոքաւոր յան-  
դուգն շարժումովը , Սուլթանը իր անմիտ ու  
եղեռնական վարմունքովը , ծայրայեղօրէն հապ-  
ճեպեցին այդ ժամը : Դէպք մը որ լուծումը  
փութեցնելու վերջին ու թերեւս ամենէն կա-  
րեւոր նպաստը բերաւ , Գերմանիոյ կայսեր  
ճամբորդութիւնն է ի Թուրքիա :

Չբաւականամալով կայսրը ըլլալէ մեծ պե-  
տութեան մը , Վիլհէլմ անիմաստ քմահաճոյքն  
ունեցած է գէշ բանաստեղծ մը , ողորմելի երա-  
ժիշտ մը , ծիծաղաշարժ նկարիչ մը ըլլալու , եւ  
այս ամենուն հետ , ուզած է տեսակ մը խոշոր  
Լոնէնկրիսի ձեւեր անուել՝ միստիքական կեց-  
ուածքներով : Կարծողներ կային թէ այդ սնամէջ  
համայնագէտը գէթ լաւ կայսր մըն է , որ իր տե-  
րութեան շահերը գիտէ պաշտպանել : Եւ սակայն  
հայկական ու կրետական խնդիրներու հանդէպ  
իր բռնած զիրքն ու այս վերջին ուղեւորութիւ-  
նը յստակ կ'ապացուցանեն թէ այդ նպարավա-  
ճառ Լոնէնկրիսի իր կայսր ալ ուրիշ բան չէ ե-  
ղեր եթէ ոչ ուռած միջակութիւն մը : Արդարեւ  
ի՞նչ շահեցաւ Գերմանիան իր կայսրին բռնած  
քաղաքականութենէն :

Այդ մեծ երկիրը , որ Պիղմարքի ճանկերուն  
մէջ քաղաքական զօրութիւն մը գտած վայրկեա-  
նին իսկ իր նախկին բարոյական նշանակութիւ-  
նը , իր մտածման հայրենիքի գիրքը կորսնցու-

ցած էր, այս վերջին դէպքերուն մէջ իր ունեցած ընթացքով՝ յաւիտենապէս զգուելի դարձուց ինքզինքը, եւ հիմա ծիծաղելի ալ կը սկսի ըլլալ: Պատմութիւնը պիտի չմոռնայ որ Գերմանիոյ կայսրը դուրգուրանքով ու հիացումով դիտեց իր բարեկամ Սուլթանին յիմարական քանդումի գործն ի Հայաստան, ի Կրետէ եւ ի Յունաստան, եւ թէ փլատակներու վրայ կոխելով գնաց սեղմել արիւնթաթախ ձեռուները «Մեծ Մարդասպանին», անոնցմէ ընդունելու համար իր մեղսակից լուծեան փոխարժէքը: Եւ որքան ալ գերման ժողովուրդը անպատասխանատու ըլլայ իր զիւանագէտներուն գործած յանցանքին, այդ ամօթը անջինջ պիտի մնայ Գերմանիոյ ճակատէն: Եւ ի՞նչ ստացաւ Գերմանիա ի փոխարէն այդ կենսական զոհողութեան. — առեւտրական մէկ քանի շնորհումներ, եւ ծանրագին առարկաներ կայսրին ընծայ տրուած՝ ինչպէս հաւնուած սպասաւորի մը: Միւրիւ մէջ նաւահանգստի մը՝ պարգեւման գրոյցը ջուրն ինկաւ. նոյն իսկ Հայտար-Բաշայի առեւտրական նաւահանգստին Գերմանացոց շնորհումը, որ հռչակուեցաւ նախ, զեռ Վիլհելմը Թուրքիայէն դուրս չելած՝ իբր չեղեալ յայտարարուեցաւ: Այդ ուղեւորութիւնը խոշոր յուսախաբութիւն մը եղաւ: Ոչ միայն Վիլհելմ ոչինչ չստացաւ ընդունելու կրօնականապէս, այլ այդ ճամբորդութեան միջոցին կրեց մէկ երկու խորին հարուածներ իր քաղաքական ազդեցութեանը. հակառակ որ ինքը բողոքականները նեղացնելն իսկ աչք առնելով, Պապին դարպաս ըրաւ, Արեւելքի մէջ գերման կաթոլիկութեան դիրքը ամրացնել յանձն առաւ, հակառակ իր այդ ծայրայեղ հաճոյակատարութեան, Պապը շատ ցուրտ ընդունեցաւ անոր մերձեցման ջանքերը, եւ շատ բարձրաձայն հրուշակեց, ճիշդ այն պահուն ուր Վիլհելմ Գրիտտոսի գերեզմանին առջեւ կը քոթոնար, թէ Արեւելքի քրիստոնեաներուն պաշտպան երկիրը Յրանսան է միշտ, եւ որոշեց գերմանասէր Բիւսի եպիսկոպոսին տեղ՝ Փրանսացի պատրիարք մը զրկել Երուսաղէմ: Բայց ծանր հարուածը Կրետէի ազատումը եղաւ, այն վայրկեանին իսկ ուր Վիլհելմ ու Համիտ կը պագտուէին Անգլիա իր վրէժը լուծեց. ճիշդ Վիլհելմի Պոլիս մտած օրը, եօթը մահմետական պետեր կը կախուէին Կրետէ, Երուսաղէմ մտած օրն ալ՝ ուրիշ եօթը. եւ զեռ Բայցրը իր հայրենիքը չդարձած, ահա հրացանի կոթով կոնակնուն մշտելով, ծովակալները կը վռնտեն Սուլթանին մարդիկը՝ Կրետէէն: Վիլհելմ որ չկրցաւ իր բարեկամը փրկել այս փորձանքներէն, մխիթարուեցաւ, ի մեծ դայթակողութիւն ամբողջ շուարած Եւրոպային, Պոլսոյ ջարդերուն կազմակերպիչ Նազրմ փաշային հետ թեւ թեւի Ս. Վայրերը պտըտելով, Միւրիւ մէջ մահմետական պետի մը տանը մէջ պորտի պարը դիտելով, ու հիացմամբ ներրողելով՝ մահմետականներու առջեւ՝ յիշատակը Սուլթան Սալահէտտինին որ Միջին-Դարու քրիստոնեայ Եւրոպային ամենէն զարհուրելի թշնամիներէն մէկը եղաւ:

Բայց այդ արտաոտոց սիոփանքները բաւական չեն եղած ճշմարիտ կացութիւնը Վիլհելմին աչքէն վրիպեցնելու: Այն ընթացքը որուն Գերմանիա հետեւեցաւ Սասունի դէպքէն ի վեր, իրեն դէմ կը դառնայ հիմա, եւ բարոյական խոշոր պարտութեան մը կը յանգի՝ որուն տեղը չեն կրնար լեցնել աշխարհիս ամենէն շահաբեր առեւտրական շնորհումներն եւ ամենէն թանկագին ընծաները: Այն արտասովոր պաշտպանութիւնը զոր Գերմանիա սարածեց Սուլթանին վրայ, Օսմանեան պետութիւնը խաղաղաբար իւրացնելու ծրագիրը զոր ուզեց իրագործել, աւելի գրգռեց արդէն զայրացած Անգլիան եւ ցնցեց Ռուսիան որ՝ յապաղման աղէտաւոր շրջանէ մը յետոյ՝ վերջապէս զգաց գործելու անմիջական ու անհրաժեշտ պէտքը: Գերմանիոյ յոխորտանքը սա հրաշալի արդէնքը ունեցաւ որ Կրետէի վրայ Ռուսիա եւ Անգլիա համաձայնեցան: Եւ այսօր սա յստակ կացութիւնը գոյութիւն ունի, արդիւնք՝ Սասունի խնդրէն ի վեր անցած դէպքերուն եւ մանաւանդ Գերմանիոյ բռնած դիրքին, — Անգլիա, որուն հին քաղաքականութիւնն էր Տաճկաստանը պաշտպանել եւ զօրացնել ընդդէմ Ռուսիոյ, այդ սնիրականալի ծրագրէն յուսահատ, հայկական ջարդերու միջոցին Թուրքիոյ երեսէն կրած բարոյական պարտութենէն ալ կարէվէր ու կատաղած, վերջնապէս համաձայնած կ'երեւի սա կէտին վրայ թէ Տաճկաստանը գոյութիւն չի կրնար ու չպարտի ունենալ իր արդի ձեւին մէջ:

Վիլհելմ այս կացութեան ամբողջ ծանրութիւնը զգաց իր Թուրքիա մտած օրն իսկ: Պոլիս, զիւանագիտական շրջանակի մը մէջ, բաց է թաց խոստովաներ է թէ իր առաջին ուղեւորութիւնէն ի վեր Տաճկաստանը չափազանց տկարացած կը գտնէ, եւ Սուլթանին հետ տեսակցելէն անմիջապէս յետոյ, ձեռագիր նամակ մը զրկեր է Յալթա, Չարին, ինչ որ իր Թրքասիրութեան ամրութիւնը կասկածի տակ կը ձգէ: Թերեւս այդ նամակին մէջ ըսած ըլլայ թէ Գերմանիա միմիայն տնտեսական շահեր ունի Թուրքիոյ մէջ, եւ թէ տրամադիր չէ արգելք ըլլալ Ռուսիոյ ծրագիրներուն, պայմանով որ գալիք ամէն փոփոխութեանց մէջ այդ տնտեսական շահերը պահպանուին: Անգլիոյ հետ Գերմանիոյ համաձայնութիւնն ալ, զոր կը շեշտէր վերջերս Չէմպրըլէյն՝ Մանչէսթըրի ճառին մէջ՝ իբր իրական եղելութիւն մը, այդ կարծիքին կրնայ հաստատուի մը նկատուիլ: Ուրեմն Գերմանիա կը խոնարհի Անգլիոյ եւ Ռուսիոյ միահաղոյն որոշմանը առջեւ, եւ ինչպէս Կրետէի խնդրոյն մէջ ըրաւ, Թուրքիոյ միւս առկախ ու հրավառ խնդիրներուն մէջ ալ պիտի համակերպի, կամ պիտի մասնակցի, քանի որ յոյս չկայ թէ Թուրքը կրնայ մարդ ըլլալ, եւ քանի որ իր առեւտրական շահերը աւելի ապահով կերպով կրնան բարգաւաճիլ եւրոպականացեալ Տաճկաստանի մը մէջ քան այսօրուան աւազականոցին մէջ ուր գերման երկրախոյզներն անգամ առեւանդուելու վտանգին ենթակայ են:

Վերջին հեռագիրներէն կ'իմանանք թէ Գերմանիա ընդունած է Ռուսիոյ նաւատորմին ընդարձակման համար գերմանացի նաւաչէն մասնագէտներ զրկել քիչ օրէն: Ուրեմն զուտ խանութպանի դերն է որ Գերմանիա կը ստանձնէ յստակարար. երէկ Թուրքին հրացան եւ թընդանօթ կը ծախէր, այսօր Ռուսիոյ նաւատորմիզը կը շինէ: Դերը գեղեցիկ չէ. բայց ասի Գերմանացւոց գիտնալու բանն է. կը բաւէ որ Գերմանիա արգելք չըլլայ Տաճկաստանը քաղաքակիրթ երկիր մը դարձնելու ծրագրին, զոր Անգլիա եւ Ռուսիա զգած են, որուն այս անգամ Ֆրանսա եւ Իտալիա անշուշտ պիտի մասնակցին:

Գերման վաճառականութեան տարածմամբ Տաճկաստանի խաղաղացումը սպեղանի մըն էր որ յոյսեր ներշնչած էր շատերու, այնպիսի ատեն մը ուր կացութիւնը անորոշ էր եւ կայուն, եւ ուր այդ գարմանը, որքան ալ անբաւական, միակ կարելին կը թուէր ներկայ պայմաններուն մէջ: Գերմանիոյ կայսեր ճամբորդութենէն առաջ, տարածուած մեծխօսիկ զրոյցներուն վրայ, ամէն ոք իրաւունք ունէր հաւատալու (եւ նոյն իսկ ամբողջ Ֆրանսա հաւտաց, քանի որ նախանձի եւ ցաւի ճիչեր արձակեց) թէ Գերմանիա, իր առեւտրական շահերուն ապահովմանը համար, պիտի պահանջեր երկրին լուրջ բարենորոգումը եւ թէ պիտի ըմբռնէր որ Թուրքիոյ մէջ ու եւ է խաղաղական տիրապետութիւն կարելի չէ ցորքան քրիստոնեաներուն կացութիւնը արմատապէս չբարձրի. արդ, Վիլհելմ ուզեց Թուրքին հետ, Թուրքին ինպատ, եւ հակառակ երկրին քրիստոնեայ հպատակներուն՝ իր գործը կարգադրել. չկրցաւ հասկնալ թէ Թուրքին վերայ միայն յենլով կարելի չէ հաստատ չէնք մը կանգնել: Իր թրքամոլութիւնը, զոր գագաթնակէտին հասցուց այս վերջին ուղեւորութեանը մէջ, Թուրքիոյ կործանումը փութացնելու նըպատեց: Ֆրանսա իր նախանձի ճիչերը գոհունակութեան արտայայտութեանց կը փոխէ, եւ անշուշտ պիտի գործակցի Ռուսիոյ ընդդէմ Սուլթանին որ Արեւելքի քրիստոնէից պաշտպանի դերը ուզեց իրմէ խլել եւ Գերմանիոյ յանձնել. Անգլիա, Սուլթանի բերնով, կը ծանուցանէ բազմ որ կը սպասէ յոռի կառավարութեանց ձեռքը մնացած երկիրներուն. Ռուսիա պատրաստ կը թուի իր հին ծրագրին գործադրութիւնը վերականգնելու. Աւստրիա, կ'ըսուի, կատարելապէս համաձայնած է Ռուսիոյ հետ մանրամասնութեանց մասին իրագործմանն այդ ծրագրին, որուն մէջ ինքն ալ իր բաժինը ունի. կը կարծուի թէ Սուրբաթիւն վերջին այցն ի Վիեննա եւ ի Բարիզ՝ այդ խնդրոյն վրայ համաձայնութիւն մը գոյացնելու համար էր զլխաւորապէս, եւ թէ համաձայնութիւնը գոյացած է:

Թրքական Հայաստանին համար, Ռուսիա քրիստոնէից պաշտպանի դերը վերստանձնելու սկսած է արդէն. Կովկաս ապաստանած հայ փախստականներուն դարձին համար Ռուսիոյ կողմէն Սուլթանին եղած յայտարարութիւնը

նշանակալից են: Պալքանեան թերակղզւոյն մէջ, գործը շատ աւելի հասուն է. Գոսովայի նահանգին մէջ, մահմետական Ալպանիացւոց ձեռքէն քրիստոնեայ Սերպերու կրած հարստահարութիւնները անհանդուրժելի աստիճանի մը հասած ըլլալով, Սերպիոյ կառավարութիւնը, բազմաթիւ բողոքներէ յետոյ որոնց Սուլթանը ժխտողական պատասխան տուած է, ահա այս օրերս իր յարաբերութիւնները Թուրք կառավարութեան հետ վերջնապէս խզած ըլլալն յայտարարեց: Մակեդոնիոյ մէջ, ալպանո-մակեդոնական մասնախումբը մեկոտուեցաւ մը ուղղեց պետութեանց ծանուցանելով թէ Մակեդոնիոյ ամէն ցեղէ, ամէն կրօնքէ ազգութիւնները միացած՝ ընդհանուր ապստամբութիւն մը պիտի յարուցանեն ընդհուպ, Սուլթանին ատելի լուծը թօթափելու եւ անկախ Մակեդոնիա մը ձեւացնելու համար: Եւ Պոլսէն Թանին զրկուած ստոյգ աղբիւրէ տեղեկութեան մը համեմատ, պետութիւնները որոշած են վերջին յորդոր մը ուղղելէ յետոյ Սուլթանին՝ որ անշուշտ պիտի չանսայ՝ ձեռք առնել Մակեդոնիոյ համար այն միջոցները զոր ձեռք առին Կրետէի մէջ:

Այս ամենուն մէջ, Վիլհելմ լուրի մնջիկ կը դառնայ իր զիւցազնա-զաւեշտական ուղեւորութենէն, Արեւելքի մէջ գերմանական ազդեցութեան տիրապետման ծրագիրը զրպանը դրած: Արմատական կերպարանափոխութիւն մը վերահաս է Տաճկաստանին, ինչ որ անշուշտ գերմանական տիրապետութենէն աւելի տրամաբանական լուծում մըն է եւ աւելի համաձայն մարդկային գեղեցկագիտութեան, որովհետեւ այդ լուծումը Թուրք տարրին ջնջումն է, եւ այդ ջնջումը արդար ու գեղեցիկ բան մըն է:

\* \* \*

Ինչ դեր պիտի խաղանք, մենք՝ Հայերս, այս ամենակարեւոր յեղաշրջումներուն միջոցին: Պիտի գիտնա՞նք այս էական ճգնաժամին հանդէպ մէկզի նետել մեր զէվզէկ կուռազանութիւնները եւ մեր թանձր անգիտակցութիւնը: Պիտի զգա՞նք թէ ազգային դատին դէմ ո՞րքան աններելի յանցանք մը գործեցին անոնք որ պատասխանատուութիւններն ունին (եւ ամէ՞նքն ալ, առանց խտրի, Սասունի զէպքը կազմակերպողներէն սկսեալ մինչեւ Վանի խոռովութեանց նախաձեռնակները) տարտղնելով ու տեղափոխելով մեր խնդիրը, զայն ահա կազմակերպութեամբ եւ անպատե՞ չըջանի մը երեւան հանելով, եւ մանաւանդ անխորհուրդ եւ անհաշիւ յանդգնութիւններու ձեռնարկելով որոնք մեր վրայ բերին ահարկու աղէտքներ, մեզ ուժասպառ ըրին, այնպէս որ մեր յառաջ բերած զորդումին շնորհիւ, որմէ մենք կորուստ միայն ունեցանք, Կրետէն ահա կը փրկուի, վաղը Մակեդոնիան ալ թերեւս, որովհետեւ Կրետացիք ու Մակեդոնացիք, մենէ շատ աւելի նպատաւոր պայմաններ եւ գործնական յոյսեր ունենալով հանդերձ, գիտցան հոգեբանական վայրկեանին սպասել եւ իրենց ուժին որոշ գիտակցութեամբը


մէջտեղ նետուեցան : Պիտի ջանանք, գոնէ հիմա, դէպքերուն այս կրակոտ գահավիժման առջեւ, մեր վտանգաւոր ինքնամոռացութենէն սթափիլ, պիտի ըմբռնենք թէ խլրտումը գործողութիւն ըսել չէ, թէ պէտք է ուժ ցուցնել եւ իրականանալի ծրագիր մը ներկայացնել, փոխանակ կարծելու թէ ջարդերու տեղի տալով՝ արմատական արդիւնք մը, մեր հաշուոյն արդիւնք մը կրնանք երբեք ձեռք ձգել, եւ թէ՛ վերջապէս՝ ոճրագործ անմտութիւն մըն է այսօրնս վիթխարի գոհողութիւն թափել՝ մի՛ միայն փութացնելու համար օտար տիրապետութիւն մը, որ արդէն ճակատագրական դէպք մըն է եւ պիտի ինքնին տեղի ունենայ երբ օրը գայ : Մեր խնդիրը Մակեդոնիոյ եւ Կրետէի խորհրներուն նմանցնողներ կան այս վայրկեանիս, եւ կարծողներ թէ մեր կացութիւնն ալ կրնայ յանգիլ միեւնոյն լուծման : Ուրիշ յօգուածով մը պիտի բացատրեմ տարբերութիւնները սրտնք մեծ են, եւ զոր որոշ տեսնելը առաջին պարտքըն է անկեղծ հայրենասէրին, որպէս զի գործունէութիւնը ըստ այնմ ուղղուի : Մենք արդէն մինչեւ հիմա շատ բան կորսնցուցինք՝ որովհետեւ նոյնութեամբ կրկնել ուղեցենք այն ծրագիրը զոր մենէ տարբեր զիրք ու կացութիւն ունեցող ազգեր իրագործած են կամ իրագործելու վրայ են : Այս վայրկեանիս ուրիշ բան չի մնար մեզի բնել բայց եթէ սպասել դէպքերուն, ինքնամեկոփ, ուշիմ ու չըջահայեաց ընթացքով մը, առանց երբեք սեղի սաշու որ նորէն արիւն կորսնցնենք : Փոքր-Ասիոյ ներսերը, կ'ըսէ վերջին հեռագիր մը, սաստիկ գրգռութիւն կայ քրիստոնեաներուն դէմ. եւ երբ մակեդոնական խնդիրը բորբոքի, այդ գրգռութիւնը աւելի սուր ձեւ պիտի առնէ. սրտանց կ'ուզէի անշուշտ որ եթէ մահմետականները նախայարձակ ըլլան, մերիները կարենային, փոխանակ անխուսափելի մահուան մը դիմացը ոչխարի պէս երթալու, զիրենք պաշտպանելու միջոցն ու քաջութիւնն ունենալ. եւ մեր գործիչներուն գոյութիւնը արդարացնող միակ պարագան այն պիտի ըլլար որ այդպիսի վտանգաւոր վայրկեաններուն ժողովրդեան ինքնապաշտպանութեանը օգնել փորձած ըլլային. բայց անոնք՝ ընդհակառակն՝ իրենց անձնական յանգձնութիւններովը մահմետական հրոսին մոլեգնութիւնը բորբոքելու նըպաստած են, եւ վտանգի վայրկեանին ալ ձգած հեռացած են՝ ժողովուրդը մինակ ու առանձին թողով դահիճներուն ձեռքը : Արդ, հիմա, այլ եւս երբեք ներքի չէ որ գրգռութիւնը պայթեցնող պատրուակը Հայոց կողմէ տրուի : Եթէ Եւրոպա-Մոզոքը արիւնի պէտք ունի որպէս զի շարժի եւ հայկական գաւառներուն մէջ կացութիւնը բարեփոխելու որոշումը տայ, խիստ շատ արիւն րափած է արդէն, — կը բաւէ գայն յիշեցնել Եւրոպային : Ատենն է գիւանագիտական գործունէութեան : Պ. Ջանչիէֆի զիրքը, Պ. Եղեանի զիրքը, — որոնք կը ցուցնեն այն զերը զոր հայը կատարած է ինպաստ Ռուսիոյ եւ ինպաստ քաղաքակրթութեան, եւ այն պարտքը զոր Ռուսիա ունի Հայերը պաշտպա-

նելու, — հոյակապ ճիգեր են այդ ուղղութեամբ : Պէտք է շարունակել : Բանի որ Ռուսիա տրամադիր կը թուի վերստանձնել Արեւելքի քրիստոնեաներու պաշտպանի զերը, ամենէն աւելի Ռուսիոյ մէջ է որ պէտք է մտրակել այդ բարոյական ամենակարեւոր գործունէութիւնը : Վայրկեանն է որ Կաթողիկոսը ձայն բարձրացնէ, հին ջարդերը յիշեցնէ, նոր ջարդերու վախը պարզէ, Ջարին մարդասէր ուշադրութիւնը հրաւիրէ Հայաստանի վրայ : Ատեն է որ Պատրիարքն ալ ցնցուի վերջապէս, ցուցնէ Եւրոպային, յանուն իր ազգին, այն վտանգը որ Հայոց կը սպառնայ՝ Կրետէի խնդրոյն լուծման եւ Մակեդոնիոյ խորհրոյն բորբոքման հետեւանքով, եւ պաշտպանութիւն պահանջէ, որպէս զի նորէն խեղճ անմեղ գիւղացիներ զո՛հ չերթան Եւրոպական դիւանագիտութեան : Կ'ըսուի թէ Մաք. Քիլիկի մըտադիր է՝ վերջին կոտորածներու միջոցին ամերիկեան հաստատութեանց կրած վնասներուն հատուցումը պահանջելու համար՝ նաւային ցոյց մը ընել թրքական նաւահանգստի մը առջեւ. եւ նոյն իսկ ըսուեցաւ թէ անգլո-ամերիկեան համաձայնութեան գլխաւոր կէտերէն մէկն ալ Հայոց խնդրոյն կարգադրութեան վրայ կը դառնար. Անգլիոյ եւ Ամերիկայի մէջ հայ ժողովուրդը ներկայացնող գործիչները յստակ պարտքը ունին ուրեմն քաջալերել, զիւրացնել մեր մասին ցոյց տրուած այդ բարի տրամադրութիւնները : Միեւնոյն գործը ունինք կատարելիք Ֆրանսայի մէջ, ուր հիմա ճշմարիտ Ֆրանսացի մը կայ, Տէլքասէն, փոխանակ Հանտո-փաշային : Ատեն է որ ամբողջ ազգը, իր ամէն հատուածներով, ամէն դասակարգներով, ամէն կուսակցութիւններով, սեւեռուի ինքնապահպանութեան գաղափարին վրայ, եւ ամէն տեսակ ուժերը կեդրոնանան շեշտելու համար կորովն ու ճարպիկութիւնը որ հարկաւոր են մեզի վտանգին առաջըն առնելու, արտաքին օգնութեան գայլուտը փութացնելու համար :

Ջարդերը, կը գրէի անցեալ անգամ, բարոյական օգուտ մը ունեցան, մեզի բերին Եւրոպայի ու Ամերիկայի ժողովուրդներուն համակրութիւնը, եւ կը մղուէի միանգամայն հաւատալ թէ անոնք, իրենց տուած ցնցումովը, մեր մէջ ներքին ուժ մը, գիտակցութեան առաջնորդող, միութիւն ներշնչող ուժ մը գոյացուցին : Ատենն է որ ապացուցանենք մենք մեզի թէ կրօք այդ ներքին ուժն ունինք, եւ մեզի համակրող քաղաքակիրթ ժողովուրդներուն ալ ցուցնենք, մեր զսպուած զիմացկունութեամբը, մեր հեռատես խոհեմութեամբը, յոյսի մը վրայ մեր յամառ հաւատքովը, թէ մենք մեր արիւնը չարաչար մխտող անմիտներ չենք, թէ մեր ճշմարիտ քաջութիւնը կարենալ տոկալն ու իբր ազգ տեւելն է այդ զժողային կացութեան մէջ ուր ուրիշ շատ ցեղեր հալած են, եւ թէ՛ ա՛յնչափ մեր թշուառութեան որչափ մեր բարոյական ճիրքերուն համար՝ մենք արժանի ենք համակրութեան :

ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆ

Le gérant : Georges WALINE



Խաչատուր Աբովեան . — Կեսեֆն ու գործը  
Հայիրք . Բ. Սասնաձուռնույն լուսակը . Գ. Մրրիկ  
Կիւսթալ Ֆլուպէն  
Հերովդիա . Վիպակ  
\* \* \*

Հայուն ջիգերը (Շար. եւ վերջ)  
Հայրենի երգեր

Մասնորական կեանքէն . —  
Բիւլիս սը Շարխան . — Սրեփան Մաշտուկ . — Լեոն Տիէոֆ  
Ծաղիկները . — Քերթուած , քարգնանուրիսն փրանտերեկե  
Ղազարոս . — Քերթուած , քարգնանուրիսն փրանտերեկե  
Ազգային Բրանիկ  
Քաղաքական կայսրիւնը .

ԱՐՇԱԿ ՉՊԱՆԵԱՆ  
ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ  
Չ.

ԿԻՒՍԹԱՎ ՅԼՈՊԷՌ  
ՏԷՐՎԻՇ  
Տր. ՊՕԴՈՍ ԲՕԼՕԼԵԱՆ  
ՀՐԱՉ

Չ.  
ՍԹԷՅԱՆ ՄՍԼԱՌՄԷ  
ԼԷՈՆ ՏԻԷՌԲՍ

ԱՐՇԱԿ ՉՊԱՆԵԱՆ

Այն անձերը որոնց զրկած էինք Անահիթի առաջին քիւր , ամենասուտար մեծամասնութեամբ՝ պահած են զայն , բայց հակառակ մեր ազգաբարոյրեան քէ՛ ԲԱԺԱՆՈՐԳԱՆՅԻՆԸ ԿԱՆԵՆԻԿ Է , թակալին լիջեր իրենց բաժնեգինը զրկած են : Կը խնդրենք կրկին անգամ որ Անահիթի առաջին քիւր վար ղնողները հանին խնայն զրկել իրենց բաժանորդակներ , եթէ կ'ուզեն որ եւջրոյ քիւլէն անցին շարունակաբար ստանան : Իսկ եթէ չեն ուզեր բաժանորդ գրուիլ , կը խնդրենք որ փութան եւ զրկել : Առաջին քիւր սպառած է արդէն , եւ եւջրոյ անգամ պիտի սպագրուի , բազմաթիւ նոր խնդրանքներու գոնացում սպառ համար :

ԱՆՍԱՅԻՏԸ ԲԱՐԻՉԵԱՆ ՄԱՄԼՈՅՆ ՄԷՉ

Ռեփիս Պէօ եւ Մէտիլա սը Ֆրանս հանդիսները համակրանքով ողջունեցին հայկական անասերքի մը երեւումն ի Բարից :

« Անահիթ , կը գրէ Մէտիլա սը Ֆրանս՝ մեր ծրագիրը բացատրելով , պիտի նպաստէ զարգացնելու գրականութիւն մը որ զարգացնուրիսն ու ձգտումներով իրենց քիւլէն իրենց քիւլէն , հայկական զոյն , ազգային զրոյն ունենայ : »

Անահիթի մօտակայ քիւլերէն մեկուն մեջ պիտի հրատարակենք Արովեանի անեկեկ հօր եջերէն մեկը , Զանգի գետին վրայ արձակ փերթուած մը , արեւմտեան աշխարհաբարիսն քարգնանուրիսն :

Կը խնդրենք մեր ուռասահայ ընթերցողներէն որ իրենց հասցեն փրանտերէն լեզուով ուղարկեն :

« ԱՆՍԱՅԻՏ » Ի ԲԱԺԱՆՈՐԳԱՆՅԻՆԸ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անահիթ պիտի հրատարակուի ամիսը մէկ անգամ : Իւրաքանչիւր թիւ պիտի բաղկանայ 32 էջէ , եւ պիտի արժէ՝ ձեռքէ գնողներու համար 1 ֆրանք (Ֆրանսա) , 20 սէնդ (Ամերիկա) , 1 ֆր. 25 (օտար երկիրներ) :

Անահիթի առաջին թիւը բացառաբար կը բաղկանայ 48 էջէ , առանց ղնոյ յաւելման : Բաժանորդագիրն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա) , 12 ֆրանք (օտար երկիրներ) , 5 բուլլի (Ռուսիա) , 2 տոլար (Ամերիկա) . Վեցամսեայ՝ 5 ֆրանք (Ֆրանսա) , 6 ֆրանք (օտար երկիրներ) , 2, 50 բուլլի (Ռուսիա) , 1 տոլար (Ամերիկա) :

Բաժանորդագիրը կանխիկ է : Ռուսմանիոյ , Պարսկաստանի եւ Պուլկարիոյ համար Անահիթի գործակալն է Պ. Գառնիկ Տէօքմէճեան (Ռուսչուք , Պուլկարիա) :

Ձեռագիրները եւ չեն դարձուիր : Կ'ընդունուին ամէն տեսակ ազգեր : Նամակ , յօդուած եւ բաժանորդագիրն զրկել առ Ա. Չօպանեան , 6, Place de l'Odéon, Paris.